«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան -2023-

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի (այսուհետ՝ ԵՊՀՏՔ, Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմում-հայտին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից, որոնցից մեկն ուսանող է:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է ԵՊՀՏՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 11
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ- 17
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 21
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 36
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 43
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 48
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 54
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 60
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 63
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 67
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 72
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ 73
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 74
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 76
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 78
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 79
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 80

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

ԵՊՀՏՔ-ի առաքելությունն է ստեղծել կրթական այնպիսի միջավայր, որտեղ հատուկ ընտրված դասախոսական կազմի և ժամանակակից տեխնիկական հնարավորությունների միջոցով ուսանողները կստանան ժամանակի հրամայականին համապատասխան բարձրորակ կրթություն, կձգտեն մասնագիտական անդադար կատարելագործման, կզինվեն միջին մասնագիտական կրթության չափորոշիչներին համապատասխան կարողություններով, հմտություններով և կավարտեն հաստատությունն աշխատաշուկա մուտք գործելու լիարժեք պատրաստվածությամբ:

Քոլեջի 2022-2027 թթ. Ռազմավարական ծրագիրը՝(այսուհետ՝ ՌԾ) ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարությունը կառուցված է առաքելության, զարգացման տեսլականի, ռազմավարական նպատակների, խնդիրների և դրանց հետ փոխկապակցված գործողությունների հենքի վրա, որն արտահայտված է ծրագրի այս բաղադրիչների միջև պատճառահետևանքային կապի հստակ տրամաբանությամբ և բխում է ՄՈՒՀ-ի Կանոնադրության և Ռազմավարական ծրագրի ներդաշնակությունից: Միևնույն ժամանակ՝ ՌԾ-ում սահմանված ռազմավարական նպատակների և ՌԾ-ի նպատակների միջև կան ձևակերպման և բովանդակային տարբերություններ, դրանց գնահատման չափանիշները հստակ և չափելի չեն: ՌԾ պլան-ժամանակացույցում նշված խնդիրների համար թվարկված են հնարավոր ռիսկերն առանց դրանց կառավարման ուղիների, ՌԾ-ին կից գործողությունների պլան-ժամանակացույցում ընդգրկված միջոցառումներին սպառնացող ռիսկերի վերլուծություն արված չէ և մշակված չեն դրանց կառավարման ուղիները:

ՄՈՒՀ-ի Ռազմավարական ծրագրի հինգ առաջնահերթություններից մեկն արդյունավետ կառավարման իրականացումն է, ըստ որի նպատակ է դրված բարելավել հաստատության կառավարման և ֆինանսական քաղաքականությունը: Այս նպատակին հասնելու համար ՄՈՒՀ-ն աշխատում է լուծել իր ֆինանսական պլանավորման բարելավման խնդիրը՝ փորձելով սուղ ֆինանսական միջոցների պայմաններում կատարել դրանց նպատակային և առավել արդյունավետ բաշխում:

Կադրային որակյալ ռեսուրսների զարգացման խնդիրը ՄՈՒՀ-ը փորձում է լուծել՝ ներդնելով կադրերի շարունակական վերապատրաստման ընթացակարգեր, իսկ ընդհանուր կառավարման համակարգի բարելավման նպատակով ձգտում է բարձրացնել իր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը:

ԵՊՀՏՔ-ի գործող ղեկավարությունը կառավարման համակարգի բարելավումը հռչակել է գերակայություն, տեսանելի են ջանքերն առավել ներառական, մասնակցային կառավարում ապահովելու համար, աշխատանքային մթնոլորտը դրական է, փոխհարաբերությունները՝ կառուցողական:

ԵՊՀՏՔ-ի բոլոր 8 կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա, կրթական ծրագրերը և դասընթացները նկարագրող կրթական վերջնարդյունքները, նպատակները, թեմատիկ բովանդակությունը, կատարման չափանիշները սահմանված են պետության կողմից: Քոլեջում իրականացվող բոլոր կրթական ծրագրերն իրենց բնույթով և բովանդակությամբ համահունչ են հաստատության առաքելությանը և համապատասխանում են ՈԱՇ-ին ու պետական կրթական չափորոշիչներին: Կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ընտրովի դասընթացները և դրանց ընտրության ընթացակարգը հստակ ներկայացված չեն: Դիտարկվող 3 ծրագրերում բացակայում էին ՄԿԾ մշակված միասնական փաստաթուղթերը մասնագրերը, որոնցում պետք է արտացոլված լինեն ՄԿԾ-ի արդիականությունը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության հիմնավորումը, կրթական ծրագրի նպատակը և դրանից բխող խնդիրները, տեսական և գործնական մասերի հավասարակշռությունը, ակնկալվող ուսումնառության արդյունքների քարտեզագրումը, դասավանդվող մոդուլների համառոտ նկարագրերը և դրանց տրամաբանական հաջորդականության հիմնավորումը: Բոլոր ՄԿԾ-ների մոդուլների և ՈՒԱ-ների քարտեզագրումներում նկատվում է նույն թերությունը. առավելապես մասնագիտական մոդուլների վերջնարդյունքները արտացոլող ՈՒԱ-ների քարտեզագրման մեջ ներառված են նաև հանրակրթական առարկաներն ու մոդուլները, ընդ որում՝ որոշների դեպքում ընդհանրապես չի երևում պատճառահետևանքային կամ տրամաբանական կապ ՈՒԱ-ի և համապատասխան առարկայի միջև: Մոդուլային ուսումնական ծրագրերում առկա են երկու ընդհանուր թերություններ՝ ծրագրերի մեծ մասն ապահովված չէ ուսումնամեթոդական ռեսուրսներով և մոդուլների ուսումնառության արդյունքների գնահատման թերթիկներում գնահատման մեթոդը տեսանելի չէ, ուսումնառության արդյունքի հաղթահարման շեմը սահմանված չէ:

ԵՊՀՏՔ-ի կրթական ծրագրերում դասավանդում են հիմնականում համապատասխան որակավորում և մանկավարժական փորձառություն ունեցող դասախոսներ: Դասախոսները պարբերաբար մասնակցում են համապատասխան պետական մարմինների և գործընկեր կազմակերպությունների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին: Բաց է մնում մասնագիտական զարգացման տեսանկյունից դասախոսների որակավորման բարձրացման հարցը: Հետևաբար, Քոլեջի համար առաջնահերթ նշանակություն ունի դասախոսների որակավորման բարձրացման համապարփակ ծրագիր իրականացնելը՝ ներառյալ մասնագիտական կարողությունները, օտար լեզվի իմացությունը, հետազոտական կարողությունները, ՏՀՏ հմտություններն ու դրամաշնորհային և այլ ծրագրերի դիմելու կարողությունները: Միևնույն ժամանակ փորձագիտական այցի ընթացքում ակներև էին Քոլեջի դասախոսների ձգտումն ու ոգևորությունը իրենց որակավորումները բարձրացնող միջոցառումների հարցում, ինչպես նաև որոշակի նախաձեռնողականությունն իրենց կողմից

դասավանդվող դասընթացների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման առումով:

Ենթակառուցվածքների շարունակական բարելավումն ու ռեսուրսների քանակական ու որակական բարելավումը ԵՊՀՏՔ-ի ռազմավարական առաջնահերթություններից են: Սակայն որոշակիորեն ստվերում են Քոլեջի մյուս ռազմավարական նպատակները: Կրթական ծրագրերի սահմանված վերջնարդյունքների նվազագույն չափն առկա ռեսուրսների և ենթակառուցվածքների պայմաններում ձեռքբերելի են. իրականացվում է ուսումնական գրականության ձեռքբերում, փորձագիտական այցի ընթացքում ակնհայտ էր, որ հնարավորության սահմաններում, իրականացվել և տարվում են լսարանների նորոգման աշխատանքներ:

Նոր է ներդրված որակի ներքին ապահովման համակարգ, որն իրականացնում է Քոլեջի շահառուների կարիքների վերհանմանն ուղղված հարցումներ: Սակայն ՈԱ համակարգը դեռևս բարելավման կարիք ունի:

Առավել մրցունակ կրթական ծրագրերի իրականացման համար Քոլեջը պետք է ավելի ինտենսիվ մշտադիտարկի և վերանայի վերջինները՝ իրականացնելով բենչմարքինգ, ինչը դեռևս արված չէ և միայն պլանավորման փուլում է: Քոլեջը պետք է գործուն քայլեր ձեռնարկի իր արտաքին քաղաքականությունը տարածաշրջանի և ոլորտային այլ, այդ թվում նաև մրցակից, ՄՈՒՀ-երի հետ համատեղ ծրագրերի և միջոցառումների պարբերական կազմակերպման միջոցով, ինչպես նաև հասարակության հետ կապերի ձևավորման ու զարգացման ուղղությամբ:

Քոլեջի ռազմավարական պլանավորումն էլ պետք է հիմնվի հստակ ու կուռ մեթոդաբանության վրա՝ ներառելով պետական առաջնահերթությունները, հաստատության խնդիրների խորքային վերլուծությունը, նախորդ Ռազմավարական ծրագրի կատարողականը և այլն: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի ստորաբաժանումների պլանները ռազմավարական պլանից բխեցնելու, կատարողականի գնահատման քանակական ու որակական արժանահավատ ցուցիչներ սահմանելու, ժամկետներ ու հստակ պատասխանատվություն ամրագրելու վրա:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Հստակ սահմանված առաքելությունը:
2. Քոլեջի Ռազմավարական ծրագրում հիմնական առաջնահերթությունների և օրհասական խնդիրների արտացոլումը:
3. Մոտիվացված վարչական, պրոֆեսորադասախոսական ու ուսումնաօժանդակ անձնակազմը:
4. Համակարգված թիմային աշխատանքը:
5. Քոլեջի ջանքերն ուղղված ենթակառուցվածքների պահպանման և թարմացման ուղղությամբ:
6. Քոլեջի դրական տրամադրվածությունը զարգացման ուղղությամբ անհրաժեշտ հիմնական աշխատանքների իրականացման առումով՝ կառավարման համակարգի բարելավում, կադրային ներուժի զարգացում, որակի ապահովման համակարգի ներդրում և զարգացում:
7. Ուսանողների թվի աճ:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Քոլեջի զարգացմանը միտված ռազմավարական պլանավորման և հաշվետվողականության համակարգերի ոչ լիարժեք գործարկումը:
2. Կրթական ծրագրերի մշտադիտարկման և որակի ապահովման գործում առկա մեխանիզմների ոչ լիարժեք կիրառումը:
3. Ուսանողների ակադեմիական կարիքների վերհանման գործում Ուսանողական խորհրդի պասիվությունը:
4. Քոլեջի հասարակության հետ կապերի ձևավորման ու զարգացման ռազմավարության բացակայությունը, կրթական ծրագրերի և կարևորագույն փաստաթղթերի փաստացի հասանելի չլինելը հասարակությանը:
5. Դասախոսների և ուսանողների կողմից օտար լեզուների իմացության ցածր մակարդակը:
6. Որակի ապահովման հստակ և գործող քաղաքականության, ռազմավարության և ընթացակարգերի բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի ներգրավմամբ բարելավել Քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրին կից գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցը՝ սահմանելով արդյունքների քանակական և որակական գնահատման հստակ և չափելի ցուցիչներ:

2. ԵՊՀՏՔ-ի նպատակների ու խնդիրների սահմանման համար գործատուների և այլ շահակիցների հետ համագործակցությամբ իրականացնել Քոլեջի թողարկած մասնագիտությունների ոլորտում պետական առաջնահերթությունների, աշխատաշուկայի պահանջների խորքային ուսումնասիրություն:

Կառավարումն ու վարչարարությունը

3. Քոլեջի կազմակերպական կառուցվածքում հստակեցնել ստորաբաժանումների միջև կապերը համագործակցության շրջանակի կանոնակարգման համար:

4. Հստակ սահմանել վարչական աշխատակիցների գործառույթները պաշտոնի անձնագրերում նրանց պարտականությունների կրկնություններից խուսափելու և կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով:

5. Վերանայել պլանների և հաշվետվությունների ձևաչափը՝ դրանք դարձնելով առավել վերլուծական և փոխկապակցելով ՌԾ նպատակներին:

6. Ապահովել ներքին և արտաքին շահակիցների ակտիվ մասնակցությունը կառավարման գործընթացներում:

7. Մշակել և ներդնել քոլեջի գործունեության արդյունավետության գնահատման և մշտադիտարկման մեխանիզմներ:

8. Կառավարման գործընթացների հիմքում դնել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Մշակել և ամբողջացնել ՄԿԾ-ների մասնագրերը, ներդնել ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման հստակ քաղաքականություն, ստեղծել ներքին շահակիցների շարժունության հնարավորություններ, ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակը՝ ներգրավելով նրանց ՄԿԾ-ների բարելավման աշխատանքներում, ինչպես նաև բարելավել ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականությունն ու ընթացակարգերը։

10. Լրամշակել գործող գնահատման համակարգը և բարձրացնել գնահատման մեթոդաբանության վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը։

11. Վերանայել ընտրովի դասընթացների կազմակերպման համակարգը՝ ապահովելով իրական ընտրության և նեղմասնագիտական լրացուցիչ կարողությունների ձևավորման հնարավորություն։

12. Ուսանողակենտրոն ուսուցման խթանման նպատակով ընդլայնել տեխնիկական միջոցների օգտագործմամբ ինտերակտիվ դասավանդման մեթոդների կիրառումը:

13. Գործատուների հետ վերանայել և հստակեցնել պրակտիկաների ծրագրերը՝ փաստացի իրականացվող աշխատանքներն առավելագույնս համապատասխանեցնելով ՄԿԾ-ների վերջնարդյունքներին:

Ուսանողները

14. Բազմազանեցնել դիմորդների հավաքագրման մեխանիզմները՝ շեշտադրելով միջնակարգ կրթությամբ ուսանողների ներգրավումը։

15. Կազմակերպել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքեր, որոնք կնպաստեն ուսանողների ուսումնառությանը։

16. Լավարկել Կարիերայի կենտրոն-գործատու-շրջանավարտ կապը՝ նպաստելով աշխատաշուկայում շրջանավարտների իրացմանը։

17. Հստակեցնել ՈՒսանողական խորհրդի ձևավորման և լիազորման գործընթացը՝ ներդնելով նախադրյալներ ուսանողական ինքնավարության և ներկայացուցչական մարմնի ձևավորման համար։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

18. Մշակել և ներդնել մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հարցաշարերի և հարցատոմսերի հստակ ընթացակարգ:

19. Սահմանել դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտական մոդուլների:

20. Ներգրավելով գործատուներին և այլ կազմակերպություններին՝ շարունակել ապահովել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումները:

21. Դասալսումների արդյունքում բացահայտված խնդիրների հիման վրա բարելավել դասախոսների մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածությունը:

Հետազոտությունը և զարգացումը

22. Հստակեցնել մասնագիտությունների համար առաջնահերթ ոլորտային և թեմատիկ հետազոտական ուղղությունները՝ ներառելով դրանք ՄՈՒՀ-ի կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման համակարգում:

23. Քոլեջի ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի խորացման համար ակտիվացնել համագործակցությունը գործատուների հետ:

24. Ուսումնասիրել և զարգացնել դասավանդման ու ուսումնառության գործընթացում ՄՈՒՀ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքների ներդրման հնարավորությունները:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

25. Արդյունավետ պլանավորել և կառավարել ֆինանսական ռեսուրսները՝ նպաստելով Քոլեջի շարունակական զարգացմանը:

26. Բարելավել գրադարանային ենթակառուցվածքը՝ համալրելով մասնագիտական, արդիական և թվայնացված գրականությամբ:

27. Ստեղծել համապատասխան կահավորմամբ լաբորատորիաներ:

Հասարակական պատասխանատվությունը

28. Համապատասխանեցնել Քոլեջի ներքին հաշվետվողականությունն ապահովող գրաֆիկը Քոլեջի կառուցվածքային սխեմային՝ հաշվետվություններում ներառելով քանակական և որակական վերլուծություններ:

29. Լավարկել Քոլեջի պաշտոնական կայքէջը՝ այն օգտագործելով որպես արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության, թափանցիկության և հետադարձ կապի ապահովման գործիք:

30. Պլանավորել և իրականացնել արտաքին շահակիցների շրջանում արժեքների և գիտելիքների փոխանցմանն ուղղված միջոցառումներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

31. Մշակել արտաքին կապերի զարգացման և Քոլեջի գործունեության միջազգայնացման ռազմավարություն և դրա իրագործման ընթացակարգեր:

32. Միջազգային համագործակցության և շարժունության լավ փորձի փոխառման նպատակով զարգացնել համագործակցությունը ՀՀ այլ քոլեջների հետ:

33. Դուալ կրթության համակարգի ներդրման նպատակով ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակը:

34. Ուսանողության շրջանում կազմակերպել օտար լեզվով մասնագիտական մրցույթներ ներքոլեջային և միջքոլեջային մակարդակներով:

Որակի ներքին ապահովման համակարգը

35. Համալրել Կրթության որակի պատասխանատուի հաստիքը՝ նպաստելով և՛ աշխատակցի կայունության ապահովմանը, և՛ որակի ապահովման ոլորտում մասնագիտական առաջընթացին:

36. Հստակեցնել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ Քոլեջի տեսլականը և մշակել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցներին ներգրավելու ուղղությամբ:

37. Հիմքեր ստեղծել որակի մշակույթի միասնական համակարգի ձևավորման համար՝ առաջնորդվելով ՊԻԳԲ շրջափուլով:

38. Լրամշակել Քոլեջի կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծման գործիքակազմը:

39. Ներդնել հուսալի մեխանիզմներ, որոնք Քոլեջի որակի ապահովման գործընթացների վերաբերյալ թափանցիկություն և հրապարակայնություն կապահովեն ներքին և արտաքին շահակիցների համար:

Ամսաթիվ՝ 02.10.2023թ.

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. Անդրանիկ Առաքելյան-Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Ինստիտուտի ՋԷ և ՇՄՊ ամբիոնի դասախոս, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. Արմինե Մատենցյան-Եվրոպական համալսարանի Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
3. Մարինե Գալուբյան - «Սանարե-ֆարմ» ՍՊԸ, հաշվապահ, փորձագիտական խմբի անդամ:
4. Արթուր Դավթյան - ԵՊՀ «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, Եվրոպական ուսանողության միության որակի ապահովման հարթակի անդամ, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ աշխատակից, Լիլիթ Ղազարյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԵՊՀՏՔ–ն 17.01.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափին համապատասխան դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (27.01.2023թ.) ԵՊՀՏՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ԵՊՀՏՔ–ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է

իրականացրել ՄՈՒՀ-ի հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովները տեղի են ունեցել 2023թ. հունվար ամսին, նպատակն է եղել Քոլեջին ներկայացվել ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, ինստիտուցիոնալ հավատարմագրման էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները և կապը չափորոշիչների հետ: Ուսումնական հաստատությունն իրականացրել է SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ: ԵՊՀՏՔ-ն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացրել է 19.05.2023թ.:

Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 20 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի, ուսանողների կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է քոլեջի աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները: Ինքնավերլուծությունը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, ինչը որոշ դեպքերում հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակի մասին:

Նախապատրաստական փուլ

Քոլեջի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացվելուց հետո դրանք ուսումնասիրել են ՈԱԱԿ համակարգողի կողմից՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համաձայն:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր Քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի. մասնակցել Քոլեջի ամփոփիչ ատեստավորման քննություններին /Զբոսաշրջություն 16.06.2023թ. 09.06.2023թ., Ֆինանսներ 21.06.2023թ./ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկ՝ նշելով համապատասխան ստորաբաժանումներն ու թիրախային

խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակրգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումներ բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, մասնագիտական հանդիպումներ և այլն: Մասնագիտական հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին մասնագիտական հանդիպումներ ունենալ Քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախանական այց

2023 թվականի հունիսի 26-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց ԵՊՀՏՔ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ**:**

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. հուլիսի 3-7-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (02.07.2023թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել Քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների և պրակտիկայի վայրերի դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ 14.09.2023թ.: Քոլեջը նախնական զեկույցի վերաբերյալ դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 02.10.2023թ.:

Համակարգողի ստորագրությունը
02.10.2023թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պատմություն. Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջը հիմնադրվել է 1963թ.-ին՝ կրելով Ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկում անվանումը: 2002 թվականի հոկտեմբերի 12-ին ՀՀ կառավարության որոշմամբ Երևանի ինդուստրիալ մանկավարժական տեխնիկումը վերանվանվել է Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ: Ներկա դրությամբ քոլեջում դասավանդում են բարձրագույն կրթությամբ, բազմամյա աշխատանքային և մանկավարժական փորձ ունեցող մանկավարժներ: ԵՊՀՏՔ-ի աշխատանքը միտված է ուսանողներին կայուն և բարձրորակ ծառայություններ մատուցելուն, առկա իրավիճակի զարգացմանը և բարելավմանը, կրթական ծրագրերի ճկունության ապահովմանը, արդի շուկայական պահանջներին համապատասխան բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Քոլեջի ռազմավարական նպատակներն են՝

1. բարձրացնել կրթական գործընթացների և կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:
2. ապահովել կադրային ներուժի զարգացումը՝ միտված հեռանկարային խնդիրների լուծմանը,
3. բարելավել և զարգացնել քոլեջի ենթակառուցվածքները, որոնք կբավարարեն կրթական գործունեությունն ապահովող ժամանակակից պահանջները,
4. կատարելագործել քոլեջի կառավարման համակարգը և ապահովել կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը,
5. ապահովել քոլեջի ֆինանսական համակարգի կայունությունը, բարձրացնել ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետությունը՝ արդիականացնելով ֆինանսների կառավարման գործընթացը և ներգրավելով ֆինանսական հոսքեր արտաքին աղբյուրներից,
6. զարգացնել որակի ապահովման ներքին համակարգը:

2. **Կրթություն.** ԵՊՀՏՔ-ում սովորողների ուսուցումը կազմակերպում է հիմնական, միջնակարգ հանրակրթական, առկա ուսուցմամբ. գործում են նաև կարճաժամկետ ծրագրեր: Ժամանակի պահանջներին համահունչ՝ քոլեջի մասնագիտությունների ցանկը պարբերաբար փոփոխվում է:

Քոլեջն իրականացնում է առկա ձևաչափով թվով ութ միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Հաշվապահական հաշվառում», «Ֆինանսներ», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Քաղաքաշինական կադաստր», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզուների խորացված իմացությամբ» և «Գործավարություն՝ օտար լեզուների խորացված իմացությամբ»

Քոլեջի կարևորագույն խնդիրներից է որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման, համալրման, զարգացման և սահուն սերնդափոխության իրականացումն ու համապատասխան կրթական միջավայրի ստեղծումն ու ապահովումը:

3. **Հետազոտություն.** Համաձայն ԵՊՀՏՔ-ի գործող ռազմավարական ծրագրի՝ Քոլեջը ձգտում է ձևավորելու միջավայր, որը հնարավորություն կստեղծի ներքին շահակիցների ինքնակրթվելու և զարգանալու.համար այդ նպատակով ներդրվել է հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն, որը նկարագրում է Քոլեջի հետաքրքրությունները հետազոտական ոլորտում:

Իր հետազոտական և նորարարական գործունեության ակտիվացման համար Քոլեջը նպատակ է դրել ապահովել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, խրախուսել հետազոտական աշխատանքների միջոցով նոր գիտելիքի ձևավորումը ու կիրառումը ուսուցման գործընթացում՝ հատկապես կարևորելով քոլեջի համար հիմնարար հանդիսացող մասնագիտությունների հետազոտական ուղղությունները:

4. **Միջազգայնացում.** Քոլեջը 2022-2027 թթ. ՌԾ-ում կարևորում է արտաքին կապերի ընդլայնումն ու միջազգայնացումը: ՌԾ–ում նախատեսվում են հստակ սահմանված գործողություններ, առանձնացված են ոլորտի զարգացման կոնկրետ խնդիրներ, գործողությունների պատասխանատուներով, գործընթացների ընթացիկ վերահսկման և գնահատման ցուցիչներով, որոնք հնարավորություն կտան հետագայում ունենալ գործընկերների լայն և բազմազան շրջանակ, ինչպես նաև կնպաստեն հաստատության միջազգայնացմանը: Ներկայումս մշակման փուլում է Քոլեջի կայքէջի պատրաստումը, ինչը ևս կնպաստի արտաքին կապերի հաստատմանը, համագործակցությանը և միջազգայնացմանը:

5. **Որակի ապահովում.** ԵՊՀՏՔ-ի կողմից կարևորելով որակի ապահովման գործընթացների նշանակալի դերը քոլեջի հաջողության և զարգացման գործում՝ գործող ՌԾ-ում սահմանվել են որակի ապահովման այնպիսի նպատակներ և խնդիրներ, որոնք կնպաստեն որակի ապահովման համակարգի լիարժեք կայացմանն ու ՊԻԳԲ շրջափուլի իրականացմանը: ԵՊՀՏՔ-ի որակի ապահովման կենտրոնն իրականացնում է նպատակների հստակեցման գործընթաց, որը համադրվում է այդ նպատակների իրագործմանն ուղղված քաղաքականության, ծրագրերի մշակման, այդ քաղաքականության և ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բաշխման հետ: ԵՊՀՏՔ-ի որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման և բնականոն գործառույթների կայացմանն ուղղված միջոցառումների տրամաբանությունն առաջնորդվում է ԵՊՀՏՔ-ի ռազմավարական ծրագրով և կենտրոնի կանոնադրությամբ:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջը (ԵՊՀՏՔ) միջին մասնագիտական կրթական հաստատություն է, որն իրականացնում է ութ միջին մասնագիտական կրթական ծրագրեր: ԵՊՀՏՔ-ի կողմից փորձագիտական խմբին ներկայացված ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունում և 2022-2027թթ. Ռազմավարական ծրագրում ՄՈՒՀ- ի առաքելության և դրանից բխող տեսլականի ձևակերպումները համահունչ են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակով սահմանված բնութագրիչներին: Սակայն Քոլեջի առաքելությունը տարբեր ձևակերպումներ ունի ինքնավերլուծությունում և 2022-2027թթ. Ռազմավարական ծրագրում, ընդհանրական բնույթի է և հստակ չի նշում, թե Քոլեջի կողմից շրջանավարտների պատրաստումն աշխատաշուկայի թիրախային ոլորտներում առկա ինչպիսի խնդիրներ է լուծում: Մասնավորապես՝ ՄՈՒՀ-ի ՌԾ-ի համաձայն Քոլեջի առաքելությունն է ստեղծել կրթական այնպիսի միջավայր, որտեղ հատուկ ընտրված դասախոսական կազմի և ժամանակակից տեխնիկական հնարավորությունների միջոցով ուսանողները կստանան ժամանակի հրամայականին համապատասխան բարձրորակ կրթություն, ձգտեն մասնագիտական անդադար կատարելագործման, կզինվեն միջին մասնագիտական կրթության չափոփորոշիչներին համապատասխան կարողություններով, հմտություններով և կավարտեն հաստատությունն՝ աշխատաշուկա մուտք գործելու լիարժեք պատրաստությամբ: ՄՈՒՀ-ի կողմից չի արվել նախորդ 2017-2022թթ. ՌԾ-ի կատարողականի արդյունավետության վերլուծություն:

Համաձայն ինքնավերլուծության և Քոլեջի 2022-2027թթ. ՌԾ-ի՝ ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարությունը կառուցված է առաքելության, զարգացման տեսլականի, ռազմավարական նպատակների, խնդիրների և դրանց հետ փոխկապակցված կոնկրետ գործողությունների հենքի վրա: ՌԾ-ում սահմանված ռազմավարական առաջնահերթությունները, այն է՝ նպատակները, հինգն են, որոնք արտացոլում են հաստատության ինստիտուցիոնալ զարգացման հետևյալ ուղղությունները՝ կրթական գործունեության բարելավումը, արդյունավետ կառավարումը, ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավումը, հասարակության հետ կապերի և գործունեության միջազգայնացման ապահովումը, որակի ապահովման ներքին համակարգի կառուցումը: ՌԾ-ում սահմանված են նաև ռազմավարական 5 նպատակներից բխող խնդիրներ: ՌԾ-ին կից մշակված է գործողությունների կատարման պլան-ժամանակացույց, որում ներկայացված են հաստատության նպատակներն ու խնդիրները, սահմանված ժամկետները, վերջնարդյունքը, առաջընթացի գնահատման ցուցիչները, պատասխանատուները, մատնանշված են հնարավոր ռիսկերը:

ՌԾ-ում սահմանված հինգ ռազմավարական նպատակների և Ինքնավերլուծության մեջ բերված ՌԾ-ի հինգ նպատակների միջև կան ձևակերպման և բովանդակային տարբերություններ, գնահատման չափանիշները հստակ և չափելի չեն: ՌԾ պլան-ժամանակացույցում նշված են հնարավոր ռիսկերն առանց դրանց կառավարման ուղիների թվարկման, այսինքն՝ ՌԾ-ին կից գործողությունների պլան-ժամանակացույցում ընդգրկված միջոցառումներին սպառնացող ռիսկերի վերլուծություն արված չէ և մշակված չեն դրանց կառավարման ուղիները:

Փորձագիտական այցից և թիրախային խմբերի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի շահակիցները լիովին տեղեկացված չեն Քոլեջի առաքելությանը, իսկ ռազմավարական նպատակներից առավել առաջնահերթ է ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավումը, ինչն իր արտացոլումն է գտել նաև ՌԾ-ին կից աշխատանքների կատարման պլան-ժամանակացույցում:

Ինքնավերլուծության համաձայն՝ ՌԾ-ի մշակման գործընթացում կարևորվել է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը: Ներքին շահակիցները գործուն մասնակցություն են ունեցել ՌԾ-ի մշակման ժամանակ:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցի արդյունքներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի առաքելության մեջ բավականին լիարժեք արտացոլված են ուսանողների կարիքները: Ուսանողների կրթական կարիքների բացահայտման նպատակով մեծ աշխատանքներ են իրականացնում կուրսղեկները, որոշ չափով նաև ուսանողական խորհուրդը (ՈՒԽ), որը Քոլեջի կառավարման մարմիններում ունի իր ներկայացուցիչները: ՈՒսանողների խնդիրների վերհանման ու լուծմանն աջակցելու նպատակով, բացի համապատասխան հարցումներից, 2023 թ-ի մարտից Քոլեջում տեղադրվել են նաև բողոքների և առաջարկությունների արկղեր:

ՌԾ-ում ՄՈՒՀ-ի առաքելության ձևակերպման մեջ դասախոսական կազմը միայն հիշատակվում է որպես ուսանողների կարիքներն ապահովող տարր, սակայն ինքնին դասախոսական կազմի, ինչպես նաև արտաքին շահակիցների կարիքները արտացոլված չեն:

Ինքնավերլուծության և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՄՈՒՀ-ի գործունեության բարելավման հարցերում ակտիվորեն ներգրավված են հատկապես ներքին շահակիցները՝ ուսանողները և դասախոսները, ինչպես նաև որոշ չափով արտացոլված է շրջանավարտների ներգրավվածությունը: Ներքին շահակիցների կարիքների վերհանման կարևոր գործիք են հանդիսանում նաև ՄՈՒՀ-ի Որակի ներքին ապահովման կենտրոնի (ՈՆԱԿ) կողմից անցկացվող հարցումները, սակայն դրանց իրականացումը, արդյունքների վերլուծությունը և գործընթացների բարելավման նպատակով օգտագործումն էական բարելավումների կարիք ունեն:

Քոլեջում գործող ներքին ու արտաքին շահակիցների կարիքները վերհանող և բավարարող մեխանիզմները գործադրվում են տարբեր խորհրդակցական մարմիններում և վերջիններիս ներգրավվածությամբ ստանում են համապատասխան լուծումներ: Մասնավորապես՝ պրոֆեսորադասախոսական (ՊԴ) և ուսումնաօժանդակ (ՈՒՕ) անձնակազմը ներգրավված է կառավարման, տնօրինական, մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդներում, ինչպես նաև այլ ստորաբաժանումների կառավարման մարմիններում, իսկ որոշ գործատուներ

դասախոսների ու ուսանողների հետ ընդգրկված են Քոլեջի կառավարման գործընթացում, նախատեսվում է մշակել արտաքին շահակիցների գոհունակությունը գնահատող մեխանիզմ: Ինքնավերլուծությունից և ՌԾ-ից երևում է, որ թույլ է արտացոլված արտաքին շահակից հանդիսացող գործատուների ներգրավվածությունը: Թեև Քոլեջը, կարևորելով գործատուների մասնագիտական պահանջները, ձգտում է կատարելագործել ՄԿԾ-ները՝ համահունչ դարձնելով աշխատաշուկայի արդի պահանջներին, այնուամենայնիվ ՄՈՒՀ-ի Ինքնավերլուծության մեջ շատ չեն հիշատակվում դեպքեր, երբ գործատուների խորհրդով կատարելագործվել են մասնագիտությունների մոդուլային ծրագրերը:

Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կառավարման մարմիններում ընդգրկված արտաքին ու ներքին շահակիցների որոշ մասը լիարժեք չի տիրապետում ՄՈՒՀ-ի ՌԾ-ի առաջնահերթություններին ու բոլոր նպատակներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի ՌԾ-ում շահակիցների կարիքների վերհանմանն ուղղված ներքին հարցումների ու գնահատումների արդյունքներն արտացոլող հիմնական դրույթներին:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության և ներկայացված փաստաթղթերի վերլուծությունն ու փորձագիտական այցի արդյունքները փաստում են, որ ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր: Քոլեջի նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմը հաշվետվությունների համակարգն է, որի հիման վրա կայացվում են որոշումներ հաջորդ պարբերաշրջանի գերակայությունների վերաբերյալ:

ՌԾ-ի վերահսկողությունը և ծրագրի կատարման արդյունավետության գնահատումն իրականացվում է հերթական (տարեկան պարբերականությամբ) և արտահերթ մշտադիտարկումների միջոցով: Մշտադիտարկումների արդյունքների հավաքագրումը և վերլուծությունը, եզրակացությունները և թերացումների շտկման առաջարկությունները իրականացվում են բոլոր ստորաբաժանումների համագործակցությամբ և սահմանված են ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականությամբ: ՌԾ-ի 6-րդ բաժնում ներկայացված է սահմանված նպատակներին հասնելուն ուղղված գործողությունների ժամանակացույցը, որում տեղ են գտել ռազմավարական նպատակներից բխող հիմնախնդիրների լուծման գործողություններ կատարման ժամկետներով և անհրաժեշտ ֆինանսական միջոցներով, սակայն ժամանակացույցում նշված որոշ գնահատման ցուցանիշներ բավական ընդհանրական են և չեն բավարարում SMART չափանիշների որոշ հիմնական պահանջները, այն է՝ հստակ, չափելի և իրատեսական չեն, թեև ունեն ժամանակային սահմանափակում: Օրինակ՝ լսարաններում առկա գույք ու տեխնիկա /2/, համապատասխան ջերմաստիճանի ապահովում /3/, շենքային պայմանների միջին կամ բարձր որակի ապահովում /4/, դասախոսների և դասավանդման որակի բարձրացում /7/ և այլն: ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված 2023 թ. Գնումների պլանից և 2023թ. ֆինանսատնտեսական գործունեության Նախահաշվից չի երևում ՌԾ-ի տևողության ամբողջ ժամանակահատվածի համար ՌԾ նպատակներից բխող գործողությունների իրականացման համար հատկացված համապատասխան ծախսերի կատարողականը:

ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթային փաթեթում ստորաբաժանումների 2022-2023 ուստարվա հաշվետվությունները (Կրթության որակի պատասխանատուի, Հաշվետարի,

Մեթոդմիավորման Իրավախորհրդատուի, Գրադանավարի, Կարիերայի կենտրոնի և այլն) կազմված են համաձայն համապատասխան ստորաբաժանումների կանոնակարգերի: ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթային փաթեթում առկա են մի շարք տեղեկատվական և վիճակագրական բնույթի տեղեկանքներ, ցուցակներ, փաստաթղթերի հավելվածներ, որոնք տրամադրող ստորաբաժանումների անվանացանկը նշված չէ, այսինքն՝ պարզ չէ, թե որ ստորաբաժանումների կողմից են դրանք տրամադրված: Որոշ դեպքերում էլ հարցման արդյունքի և հաշվետվության վերնագիրը չեն համապատասխանում: Օրինակ, «Կրթական միջավայրի բավարարվածության գնահատում» խորագրով դասախոսների էլեկտրոնային հարցումը (10.03.2023) իրականում պարզում է դասախոսների լեզուների իմացության և համակարգչային հմտությունների մակարդակը:

Այսպիսով՝ ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունից և կցված փաստաթղթերից պարզ դարձավ, որ Քոլեջում առկա են ՄՈՒՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ մեխանիզմները թերի են գործում և բացակայում է ՄՈՒՀ- ի առանձին գործառույթների ու սկսված գործընթացների համար ՊԻԳԲ շրջափուլի վերաբերյալ հստակ տեղեկատվությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջն ունի Ռազմավարական ծրագիր, որն արտահայտում է հաստատության զարգացման հիմնական ուղղությունները: Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ սա Ռազմավարական ծրագիր մշակելու Քոլեջի առաջին փորձը չէ: Ռազմավարական ծրագրի հետևողական իրականացումը կնպաստի Քոլեջի համաչափ զարգացմանը: Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի գործունեությունն ու առաքելությունը հիմնականում համապատասխանում են ՀՀ ՈԱԾ-ի 5-րդ մակարդակին և բխում են ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրում դրված նպատակներից և խնդիրներից:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջի ռազմավարական ծրագիրը որոշակի ձևով արտահայտում է ներքին շահակիցների կարիքները, որը դրական կարող է լինել ներքին շահակիցներին ռազմավարական կառավարման մեջ ներգրավելու տեսակետից: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում Քոլեջի արտաքին ու ներքին շահակիցների շրջանում առաքելության և ռազմավարական նպատակների տարածման ուղղությամբ շարունակական աշխատանքների իրականացումը, ինչը կնպաստի ռազմավարական նպատակների իրագործման մեջ շահակիցների ներգրավվածության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջում առկա են ՌԾ գնահատման որոշակի մեխանիզմներ, սակայն դրանք կատարելագործման կարիք ունեն ցուցիչների չափելիության ապահովման և սահմանված ժամկետների հստակեցման տեսակետից, ինչը կարևոր է ռազմավարական կառավարման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջն ունի ռազմավարական ծրագիր, որը ներկայացնում է քոլեջի զարգացման ուղղությունները, ՌԾ-ն արտահայտում է ներքին

շահակիցների կարիքները, կան որոշակի մեխանիզմներ ՌԾ գնահատման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՀՏՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: ԵՊՀՏՔ կանոնադրության համաձայն՝ քոլեջի կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը՝ ՀՀ ԿԳՄՄՆ, քոլեջի Կոլեգիալ կառավարման մարմինը՝ Քոլեջի խորհուրդը, տնօրենը: Քոլեջի տնօրենն ընտրվում է Կոլեգիալ կառավարման խորհրդի որոշմամբ՝ նշանակվում և ազատվում է պաշտոնից ԿԳՄՍ նախարարի հրամանով: Քոլեջի Խորհուրդն ունի 11 անդամից բաղկացած կազմ, վերակազմավորվել է 2022թ, դեկտեմբերին: ՄՈՒՀ-ում գործող և կառավարման համակարգի կարևոր տարր հանդիսացող խորհրդակցական մարմիններն են Տնօրինական, Մանկավարժական, Մեթոդական, Ուսանողական խորհուրդները, որոնք ունեն իրենց համապատասխան կանոնակարգերը, սակայն առկա են գործառույթների կրկնություններ: Քոլեջի մշակած պաշտոնի անձնագրերում արտացոլված գործառույթները հաճախ չեն ներկայացնում տվյալ աշխատակիցների գործունեության իրական շրջանակը /ՈՆԱԿ, Կարիերայի պատասխանատու, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ/:

2023թ. հունվարին ՄՈՒՀ-ի կառավարման կառուցվածքում կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք արտացոլված են Քոլեջի՝ 02.02.23թ. հաստատված կառուցվածքային սխեմայում, առկա է նաև հաշվետվողականության սխեմա: Սակայն կառուցվածքային և հաշվետվողականության սխեմաների միջև նկատելի են տարբերություններ առանձին օղակների և փոխհամագործակցության կապերի, ինչպես նաև միևնույն օղակի տարբեր անվանումների առումով: Քոլեջում թույլ են գործում շահակիցներին տեղեկատվության փոխանցման և հետադարձ կապի մեխանիզմները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չի վերլուծել, թե կառուցվածքային սխեմայի փոփոխություններն ինչպես են ազդել ՄՈՒՀ-ի կառավարման ու վարչարարության արդյունավետության բարձրացման վրա: ՄՈՒՀ-ի կառավարմանն ու վարչարարությանն առնչվող փաստաթղթերում և հաստիքացուցակներում հաճախ զուգահեռաբար օգտագործվում են նախկին և ներկայիս կառուցվածքային ստորաբաժանումների և պաշտոնների հին ու նոր անվանումները, ինչպես նաև առկա են անհամապատասխանություններ հաստիքացուցակի և կառուցվածքում արտահայտված ստորաբաժանումների միջև: Օրինակ՝ հաստիքացուցակով /2023թ. հունվար/ և Կազմակերպական սխեմայով առկա են իրավախորհրդատու, բուժքույր, սակայն այցից և ուսումնասիրվող փաստաթղթերից պարզ դարձավ, որ նախատեսված հաստիքները զբաղեցնող աշխատակիցներ քոլեջը չունի:

Համաձայն ՄՈՒՀ-ի Կազմակերպական սխեմայի՝ Քոլեջի կառավարմանն աջակցում է նաև Ուսանողական Խորհուրդը, որն իր կողմից առաջադրած ներկայացուցիչներն ունի ԿԿԽ-ում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԿԿԽ-ում ներգրավված ներքին շահակիցները տեղեկացված չեն խորհրդում իրենց ներգրավման մեխանիզմներից, ինչպես նաև նրանք չեն մասնակցում որոշումների կայացման գործընթացներին:

Քոլեջի գործունեությունն ամփոփվում է տնօրենի տարեկան հաշվետվությամբ, որտեղ ներկայացված է քոլեջի տարեկան գործունեությունը, սակայն տարվա ընթացքում կարևոր ձեռքբերումներն ու բարելավման ենթակա խնդիրները, պլանավորված, սակայն չիրականացված գործընթացները ներկայացված չեն:

ԵՊՏՀՔ-ում գործընթացները հիմնականում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի պլանավորման փուլում են, վերջին մեկ տարվա ընթացքում որոշ գնահատումներ են իրականացվել, բարելավումները տեսանելի են միայն ռեսուրսների ուղղությամբ:

Քոլեջի բյուջետային մուտքերի գերակշիռ մասն ապահովում է պետական ֆինանսավորման հաշվին՝ 2023թ. կազմելով շուրջ 75.01 տոկոս, արտաբյուջետայինը՝ 21.99 տոկոս, որը գոյանում է միայն ուսանողների վարձավճարներից: 2022 թվականի համեմատ 2023 թվականին 13.38 տոկոսով նկատվել է այլ եկամուտների աճ: Քոլեջի ծախսային հոդվածն ունի հետևյալ կառուցվածքը՝ 2023 թվականի տվյալներով աշխատանքի վարձատրությունը 81.06 տոկոս, ապրանքների ձեռք բերման ծախսեր 9.19, կրթաթոշակներ՝ 8.27, այլ ծախսեր 1.48 տոկոս:

Քոլեջն ունի երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորում: Երկարաժամկետ է դիտարկվում ՌԾ (2022-2027), կարճաժամկետ՝ ստորաբաժանումների կողմից մշակված աշխատանքային պլանները, որոնց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք մասամբ են բխում ռազմավարական նպատակներից և խնդիրներից: Փորձագիտական խմբի կողմից հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք նկարագրական են, և ոչ վերլուծական, ցույց չեն տալիս բարելավման հետագա ուղղությունները:

Քոլեջում դեռևս չեն գործում կառավարման գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ, և ներդրված չէ համապատասխան գործիքակազմ, իսկ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների մշտադիտարկման մեխանիզմները բոլոր ստորաբաժանումների համար համակարգված չեն:

ՄՈՒՀ-ը կարևորում և իրականացնում է իր գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրություն: Մասնավորապես՝ որպես արտաքին և ներքին միջավայրերի հետազոտության արդյունքում բացահայտված գործոններ ՌԾ-ի 5-րդ բաժնում վերհանված են հետևյալ ռիսկերը՝ ուսանողների թվի անկում, գործատուների պասիվություն Քոլեջի գործունեության հանդեպ, ֆինանսական միջոցների անբավարարություն և դրանից բխող նյութատեխնիկական բազայի վատ հագեցվածություն, շենքային անբավարար պայմաններ, դասախոսների մասնագիտական պատրաստվածության խոչընդոտներ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ 2023 թ.-ից որոշ քայլեր են ձեռնարկվել գործատուներին ներգրավելու կրթական ծրագրերի բարելավման գործընթացներում, ինչպես նաև շենքային պայմանների բարելավման ուղղությամբ: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ֆինանսական աղբյուրների բազմազանեցման մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:

Քոլեջն ունի հաստատված «Հարցումների անցկացման կանոնակարգ» (02.02.2023), ըստ որի սահմանված են նաև հարցումների արդյունքների օգտագործման ընթացակարգերը՝ ուղղված քոլեջի ուսումնամեթոդական աշխատանքների բարելավմանը: Սակայն կանոնակարգը վերաբերում է միայն Քոլեջի ուսումնամեթոդական բաժնի կողմից անցկացվող

թղթային հարցումներին։ Էլեկտրոնային հարցումների արդյունքների վերհանումը և վերլուծությունների կազմումը դեռևս պատշաճ կերպով կանոնակարգված չէ և չի իրականացվում հստակ սահմանված ձևաչափով։ Թե՛ թղթային, և թե՛ էլեկտրոնային հարցումների արդյունքում որոշ գործոնների ուսումնասիրությունը մակերեսային և շատ ընդհանրական բնույթ ունեն։ Հարցումների արդյունքների հավաստիությունը պարզող մեխանիզմները հստակ չեն, և պարզ չէ, թե ինչպես է ստուգվում հարցումներից ստացված տեղեկատվության իսկությունը, ստուգման ինչ մեխանիզմներ կան և ինչպես են դրանք կիրառվում կառավարչական որոշումների կայացման համար։

ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման գործիքները դեռևս քոլեջում մասնակիորեն են գործում, գործատուների առաջարկները թեև արտացոլվում են համապատասխան հաշվետվություններում, սակայն այդ օրինակները մասնակի բնույթ են կրում, համակարգային չեն։

Քոլեջի կայքէջը վերազինման փուլում է, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն զետեղված է քոլեջի Ֆեյսբուքյան և Ինստագրամյան էջերում։ Հարկ է նշել, որ տրամադրվող տեղեկատվության հասանելիության և արդյունավետության գնահատում քոլեջը չի իրականացրել։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի և ֆինանսական քաղաքականության բարելավումը Քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից է, սակայն քոլեջը կարիք ունի հստակեցնելու կառավարման օղակների գործառույթները, ՌԾ ուղղությունների համապատասխան ֆինանսական պլանավորում իրականացնելու, ինչը կնպաստի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը։ Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն իրականացնում է կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորում, և գտնում, որ նպատակները հստակեցնելու, չափելի ու իրատեսական խնդիրներ սահմանելու պարագայում, էականորեն կբարելավվեն պլանավորման գործընթացները։ Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև հաշվետվողականության գործընթացների լավարկման անհրաժեշտությունը՝ իրականացված գործընթացների վերլուծության, պլանավորման և առկա մարտահրավերների դուրսբերման ու դրա հենքով բարելավման գործողությունների մշակման համար։

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի կառուցվածքային սխեմայում կատարված փոփոխությունների արդյունավետության գնահատումը կարևոր է քոլեջի կազմակերպական կառուցվածքում ուղղահայաց և հորիզոնական կապերի արտացոլման, կառավարման օղակների համագործակցային շրջանակը հստակեցնելու համար։ Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ առկա են հակասություններ նախատեսված որոշ հաստիքների և պաշտոնների միջև, ինչը ամբողջական պատկեր չի տալիս դրանց ենթակայության ու հաշվետվողականության վերաբերյալ։

Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ քոլեջն անելիքներ ունի արտաքին ու ներքին շահակիցների կարիքների վերհանման, խորհուրդներում նրանց ներգրավման մեխանիզմների հստակեցման ուղղությամբ, ինչը կնպաստի նրանց կարիքների բացահայտմանը, նախաձեռնողականության ավելացմանը, ինչպես նաև մյուս շահակիցների շրջանում կայացված որոշումների մասին տեղեկատվության հասանելիության ապահովմանը։ Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է նաև այն փաստը, որ մինչ 2023թ. արտաքին շահակիցները ներգրավված չեն եղել քոլեջի գործընթացներում, սակայն, խումբը գտնում է, որ քոլեջի կողմից ներկայիս տարվող աշխատանքները համագործակցության ուղղությամբ

կնպաստեն մրցունակ շրջանավարտների թողարկմանը:

Դրական է, որ քոլեջն իրականացրել է ռեսուրսային բազայի ներքին գնահատում, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ գործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող համապարփակ ներքին գնահատում իրականացնելու պարագայում ճանաչելի կդառնան քոլեջի ինստիտուցիոնալ կառավարման խնդիրները, կկանխորոշվեն քոլեջի գործունեության ներքին և արտաքին ռիսկերը: Փորձագիտական խումբը շեշտադրում է որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը կառավարման բոլոր գործընթացներում, ինչը կնպաստի քոլեջի կառավարման համակարգի շարունակական զարգացմանը, ՌԾ նպատակների անխոչընդոտ իրականացմանը:

Փորձագիտական խումբը փաստում է, որ ՄՈՒՀ-ում հարցումների արդյունքների վերլուծության և հաշվետվությունների ներկայացման ձևաչափը լրամշակման ու կանոնակարգման կարիք ունի, ինչը կարող է իրականացվել ՈՆԱԿ-ի պատասխանատուի, առանձին ստորաբաժանումների ղեկավարների և մեթոդմիավորման համագործակցությամբ: Այս գործընթացները նաև կնպաստեն ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանմանը և դրանց արտացոլմանը ռազմավարական պլանավորման գործընթացներում:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ում տարատեսակ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները լիարժեք չեն գործում, և շատ հաճախ դրանց արդյունքների վերլուծությունը խորքային չէ: Այս նպատակով փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի գնահատելու կառավարման համակարգում տեղ գտած փոփոխությունները, ինչը հնարավորություն կտա վեր հանել առկա բացերը և արդյունավետության բարձրացման ուղղությամբ քայլեր մշակել:

Մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ի թողարկած մասնագիտությունների վերաբերյալ սակավ տեղեկատվություն կա կայքէջում, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ տեղեկատվության թափանցիկության ու հասանելիության համար շահակիցների շրջանում: Փորձագիտական խմբի գնահատմամբ քոլեջը կարիք ունի սահմանելու նաև համապատասխան մեխանիզմներ, որոնք թույլ կտան գնահատել տրամադրվող տեղեկատվության հասանելիությունը և կայքի ու սոցիալական հարթակների հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործել քոլեջում ընթացող գործընթացների լուսաբանման նպատակով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում տարբեր վարչակազմակերպական օղակների ու ստորաբաժանումների միջև կապը համակարգված չէ, թույլ է համագործակցությունը տարբեր օղակների միջև, դրանց կանոնակարգերը ոչ միշտ են համապատասխանեցված ՄՈՒՀ-ի կառուցվածքային սխեմային, պլանավորում-հաշվետվողականություն կապերը թույլ են, հաշվետվությունները վերլուծական չեն, արտաքին ու ներքին շահակիցների կարիքները չեն դրվում կառավարչական որոշումների կայացման հիմքում, Քոլեջի երկարաժամկետ և կարճաժամկետ պլանները ոչ միշտ են փոխկապակցվում քոլեջի ՌԾ-ին, ՊԻԳԲ շրջափուլը դրված չէ կառավարման գործընթացների հիմքում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է անբավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Քոլեջն իրականացնում է թվով ութ միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Հաշվապահական հաշվառում», «Ֆինանսներ», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն» (2016թ.), «Հագուստի մոդելավորում և նախագծում» (2016թ.), «Քաղաքաշինական կադաստր» (2018թ.), «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզուների խորացված իմացությամբ» (2018թ.) և «Գործավարություն՝ օտար լեզուների խորացված իմացությամբ» (2021թ.)։ 2022-2023 ուսումնական տարվա սկզբից կրթական ծրագրերի շրջանակներում ուսումնական գործընթացի կազմակերպումը համակարգվում է յոթ մասնագիտական ամբիոնների և հանրակրթական բաժնի կողմից։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում իրականացվող բոլոր կրթական ծրագրերն իրենց բնույթով և բովանդակությամբ համահունչ են հաստատության առաքելությանը և պետական կրթական չափորոշիչներին և հիմնականում համապատասխանում են ՈԱՇ-ին։

Յուրաքանչյուր ՄԿԾ, ըստ շնորհիվող որակավորման, բնութագրվում է «Մասնագիտության նկարագիր» համառոտ փաստաթղթում, որտեղ ներկայացված են մասնագիտության դերը, խնդիրների բնագավառները և ըստ դրանց՝ աշխատանքային գործընթացն ու կատարման չափանիշները, մասնագետի պատասխանատվության շրջանակը, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները։ Ըստ կառուցվածքի և թվարկված բաժինների առկայության՝ «ԶԲՕԼ» և «Հագուստի մոդոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ներն ավելի մանրամասն են նկարագրված, մինչդեռ «Ֆինանսներ» մասնագիտության նկարագիրը պարունակում է միայն ուսումնառության վերջնարդյունքները։

«ԶԲՕԼ» ՄԿԾ-ի առարկայական ծրագրերի և ամփոփիչ ատեստավորման արդյունքների ուսումնասիրությունից երևում է, որ ՄԿԾ-ում նշված ուսումնառության արդյունքներն ու փաստացի իրականացումը տարբերվում են, քանի որ ծրագիրը հնարավորություն է տալիս պատրաստել զբոսաշրջության ոլորտի լայն պրոֆիլի մասնագետներ, իսկ նկարագրում շեշտադրված են հյուրանոցների ծառայությունները կազմակերպող մասնագետի բնութագրերը։ Խնդիրն ընդգծվեց նաև ներքին շահակիցների հետ հանդիպման ժամանակ։

Բոլոր ՄԿԾ-ների մոդուլների ուսումնառության ակնկալվող արդյունքների քարտեզագրումներում նկատվում է նույն մոտեցումը . ՈՒԱ-ներն արտացոլում են բացառապես մասնագիտական մոդուլների վերջնարդյունքները, մինչդեռ քարտեզագրման մեջ ներառված են բոլոր առարկայախմբերի առարկաներն ու մոդուլները։ Արդյունքում՝ բացառությամբ մասնագիտական մոդուլների, մնացած առարկայախմբերի համար համապատասխան ՈՒԱ-ները բացակայում են։

Դիտարկվող թիրախային կրթական ծրագրերից ոչ մեկը չունի ՄԿԾ-ի ամբողջական մասնագիր, որում արտացոլված կլինեին ՄԿԾ-ի արդիականությունը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության հիմնավորումը, կրթական ծրագրի նպատակը և դրանից բխող տեսական և գործնական մասերի հավասարակշռությունը, ակնկալվող ուսումնառության արդյունքների քարտեզագրումը՝ ըստ մոդուլների, դասավանդվող առարկաների/մոդուլների մանրամասն նկարագրերը և դրանց տրամաբանական հաջորդականության հիմնավորումը։

ՄԿԾ-ների հիմնական փաստաթղթերից են ուսումնական պլանները։ Դիտարկվող ՄԿԾ-ների գործող ուսումնական պլանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր ՄԿԾ-ի բովանդակային տրամաբանությունը պարզ արտացոլված է ուսումնական պլանում՝ մոդուլների (առարկաների) փոխկապակցվածությամբ և հաջորդականությամբ։

Հիմնական առարկայախմբերից բացի, ուսումնական պլաններում առանձնացված է ընտրովի դասընթացների բաժինը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրական ընտրության հնարավորություն չունեն և որպես «ընտրովի» անցնում են ամբիոնի կողմից որոշված և ուսումնական պլանում ֆիքսված որոշակի մոդուլներ։ Յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսված է նաև երկուական նախասիրական դասընթաց, որոնք նույնպես որոշվում են Քոլեջի կողմից և ուղղված են ուսանողների ընդհանուր զարգացվածության մակարդակի բարձրացմանը։

ՄԿԾ-ների իրականացման հիմնական գործիքը մոդուլային ուսումնական ծրագրերն են, որոնք պետք է կազմվեն ըստ Քոլեջում ներդրված Մոդուլային (առարկայական) ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգի։ «Ֆինանսներ» և «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությունների դիտարկված մոդուլային ուսումնական ծրագրերի ճնշող մեծամասնությունը հաստատված է 2019 թ., «ԶԲՕԼ» մասնագիտության ծրագրերը կազմվել են 2019-2022 թթ., ինչից երևում է, որ ծրագրերը դեռևս վերանայված չեն ըստ նոր՝ 25.04.23թ.հաստատված կանոնակարգի։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Ֆինանսներ» կրթական ծրագիրն իրականացվում է հիմք ընդունելով 2013թ. ՊԿՉ-ն։ Մինչ այսօր «Ֆինանսներ» ՄԿԾ-ում փաստացի վերանայումներ և բարելավումներ չեն իրականացվել, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները հետևում են օրենսդրական փոփոխություններին և առանց մոդուլային ծրագրերի փաստացի վերանայումների՝ դասապրոցեսը կազմակերպում են արդի օրենսդրական փոփոխություններին համապատասխան։ Օրինակ, հարկատեսակների փոփոխությամբ պայմանավորված՝ «Ֆինանսներ» ՄԿԾ-ում մոտ 5%-ի չափով փաստացի բովանդակային փոփոխություն է տեղի ունեցել։

Քոլեջում իրականացվող պրակտիկաների տեսակները, բովանդակությունը և տևողությունը սահմանվում են համապատասխան ՊԿՉ-ներով և Քոլեջի ուսումնական պլաններով։ Քոլեջում պրակտիկաների հետ կապված գործունեությունը կարգավորվում է Պրակտիկայի անցկացման և կազմակերպման կանոնակարգով։ Բոլոր ՄԿԾ-ների ուսումնական պլաններով նախատեսված է պրակտիկաների երեք տեսակ՝ ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ, ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման և նախաավարտական պրակտիկա։ Դիտարկվող ՄԿԾ-ների ուսումնական պլաններով

նախատեսված պրակտիկաների ընդհանուր ծավալներն են՝ «Ֆինանսներ» -29 շաբաթ, «Հագուստի մոդելավորում և նախագծում» - 20 շաբաթ, «ԶԲՕԼ» - 30 շաբաթ։

Դիտարկվող բոլոր ՄԿԾ-ների պրակտիկաներն անցկացվում են համապատասխան մասնագիտական ոլորտների կազմակերպություններում՝ հաշվապահական ընկերություններում, բանկերում, նորաձևության սրահներում, կարի արտադրամասերում, զբոսաշրջային ֆիրմաներում, հյուրանոցներում, Կադաստրի կոմիտեում, Գեոդեզիայի ինստիտուտում և այլն։ Պրակտիկաների իրականացման ոլորտում Քոլեջն ունի գործընկերային կապեր նաև մի քանի բուհերի հետ։ Սակայն շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ոչ բոլոր ՄԿԾ-ների պրակտիկաներն են անցկացվում նշված կազմակերպությունների համապատասխան բաժիններում։ Օրինակ՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության պրակտիկաները հիմնականում անցկացվում են ոչ թե հագուստի մոդելավորման բաժիններում, այլ կարի արտադրամասերում, ինչի արդյունքում ուսանողներին ներկայացվող հիմնական պահանջը ժամանակակից կարի մեքենաներից օգտվելու հմտությունն է և կարի թողարկվող անհրաժեշտ ծավալը։ Իսկ «Ֆինանսներ» ՄԿԾ-ի դեպքում պրակտիկանտները ֆինանսիստի աշխատանքի առանձնահատկությունների փոխարեն որոշ դեպքերում ծանոթանում են բանկային գործի մասնագետի պարտականություններին բանկի սպասարկման բաժիններում։ ՀՏԱՀԾԱ մասնագիտության պրակտիկաները անց են կացվում Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում։ Այսինքն՝ ՄՈՒՀ-ի որոշ ՄԿԾ-ների թողարկած շրջանավարտների պրոֆիլի ձևավորման և պրակտիկաների անցկացման միջև կան անհամապատասխանություններ, որոնց հետևանքով շրջանավարտների հմտությունները կարող են չբավարարել աշխատաշուկայի պահանջներին։

Քոլեջի ներկայացրած վիճակագրությունից պարզ դարձավ, որ ցածր է մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը. 2018-2022թթ. ընթացքում այն տատանվել է 18-24%-ի միջակայքում։ Մեծ է բուհերում, այդ թվում՝ ոչ մասնագիտությամբ, ուսումը շարունակող շրջանավարտների թիվը՝ 41.7 - 71.8%։

Թեև Քոլեջը նշում է, որ պրակտիկայի ծրագրերը համաձայնեցվում են գործատուների հետ, այնուամենայնիվ փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ քննարկումները ցույց տվեցին, որ ՄԿԾ-ներում հիմնականում բացակայում է պրակտիկայի ծրագրերի հստակությունը։ Հարկ է նշել, որ Քոլեջում պրակտիկաների անցկացման համար ծրագրերի փոխարեն կազմվել են ուղեցույցներ, որոնք բաղկացած են բացատրագրից և պրակտիկայի բովանդակությունից, որտեղ ներկայացված է մոդուլների բաշխվածությունը՝ ըստ ուսումնասիրվող թեմաների հաջորդականության։ Շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ուղեցույցը պրակտիկա անցկացնող կազմակերպությանը հնարավորություն է տալիս ընտրել իր տեսանկյունից նպատակահարմար թեմաները և միայն դրանց շրջանակներում անցկացնել պրակտիկան։ Օրինակ՝ «Ֆինանսներ» մասնագիտության 3-րդ կուրսում 11 շաբաթ նախատեսված է ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման, որի անցկացման արդյունքում բացատրագրի համաձայն ուսանողը պետք է իմանա իրացվող արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման կարգը, սննկացման վտանգները, շահույթի հաշվարկման եղանակները, պետք է տիրապետի շրջանառու կապիտալի արդյունավետության

ցուցանիշների վերլուծության հմտություններին, բնութագրի ֆինանսական պլանի տեսակները և այլն: Պրակտիկայի բովանդակությունում ներառված են հետևյալ մոդուլները՝ «Պետական ֆինանսներ», «Բյուջետային համակարգ», «Կազմակերպությունների ֆինանսներ», «ՀՀ հարկային օրենսդրություն»: Տվյալ պրակտիկան ուսանողները անցկացրել են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ մասնաճյուղերում: Համաձայն պրակտիկայի օրագրերի՝ ուսանողները ներկայացրել են հաշվետվություն կատարած աշխատանքի մասին: Հաշվետվությունները գրեթե ունեին նույն բովանդակությունը: Օրինակ՝ սովորել են բանկոմատով cash in, cash out ծառայությունների կատարումը, հերթի կառավարման համակարգով յուրաքանչյուր հաճախորդին կտրոններ են տրամադրել, Tellcell վճարային տերմինալի միջոցով կատարել են վարկի մարումներ, հաշիվների և ավանդների համալրումներ, ՃՈ ակտերի և կոմունալ վճարումներ, ծանոթացել են իրավաբանական, ֆիզիկական անձանց քարտերի տրամադրման գործընթացին, քարտերի pin կոդերի տրամադրման ընթացակարգին և քարտերի ակտիվացման գործընթացին, սովորել են ներբեռնել, ակտիվացնել VTB Mobile հավելվածը և այլն:

Մյուս պրակտիկաները/ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ և նախաավարտական պրակտիկա/նույնպես անցկացվել են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ մասնաճյուղերում, և համաձայն պրակտիկայի օրագրերում ներկայացված հաշվետվությունների՝ գրեթե ունեին նույն բովանդակությունը: Փորձագիտական խումբը նշում է, որ «Ֆինանսներ» մասնագիտության շրջանակներում առկա է պրակտիկաների բովանդակության և իրականացման անհամապատասխանություն:

Պրակտիկաների հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բացակայում է տեղեկատվությունն ուսանողի ինքնուրույն աշխատանքների վերաբերյալ, առկա չեն նաև եզրահանգումներ և վերլուծություններ:

Պրակտիկաների իրականացման շրջանակներում գործատուների հետ կապի պահպանման և նրանց կողմից արված առաջարկությունների հիման վրա իրականացվել են ՄԿԾ-ների որոշ փոփոխություններ: Այսպես, օրինակ, գործատուների առաջարկով «ԶԲՕԼ» ՄԿԾ-ում ավելացվել են «Աշխարհագրություն» մոդուլի դասաժամերը: «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում պետք է ներդրվի «1C» և «ՀԾ» ծրագրերն ուսումնասիրող մասնագիտական մոդուլ, ինչը նախատեսված է իրականացնել 2023-2024 ուսումնական տարում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «ՀՏԱՀԾԱ» ՄԿԾ-ում ավելացվել է «Ճարտարագիտական գրաֆիկա» մոդուլը: «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության գործնական պարապմունքներում առաջարկվել է կիրառել համակարգչային ժամանակակից ծրագրեր, մասնավորապես՝ AutoCAD եռաչափ մոդելավորման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ այս և նմանատիպ այլ առաջարկների հիման վրա Քոլեջում նոր ուսումնական տարում նախատեսվում է վերազինել համակարգչային լսարանները և ձեռք բերել համապատասխան ծրագրային ապահովմամբ 5 հզոր համակարգիչներ:

ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն ապահովելու համար կիրառվում են այնպիսի դասավանդման և ուսումնառության մեթոդներ, ինչպես դասախոսությունը, զրույցը, խմբային քննարկումը, հարցն ու պատասխանը, մոդելավորված իրավիճակների վերլուծությունը, դերային խաղը, տեսանյութի ցուցադրումն ու

վերլուծությունը, շրջված լսարանի մեթոդը, անհատական և խմբային հետազոտական աշխատանքը: ՄԿԾ-ների մոդուլային ուսումնական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերոնշյալ դասավանդման և ուսումնառության մեթոդների առավել լայն շրջանակը կիրառվում է «Զբոսաշրջություն» և «ԶԲՕԼ» մասնագիտությունների դասընթացներում, իսկ, օրինակ, «Ֆինանսներ» մասնագիտության շրջանակներում հիմնականում կիրառվում են միայն դասախոսությունը, զրույցը և հարցն ու պատասխանը: «Հագուստի մոդելավորում և նախագծում» ծրագրում, ի թիվս վերոնշյալ որոշ մեթոդների, կիրառվում է նաև մոդելների էսքիզների ստեղծումը:

Ուսանողների ներգրավվածությամբ հետազոտությունների և կրթության փոխկապակցման նպատակով ընդունվել է Ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքների կանոնակարգը (հաստատված՝ 25.04.2023թ.), որում սահմանվել է ուսուցման նախագծային-ստեղծագործական-հետազոտական (ՆՍՀ) մեթոդը: Այն ենթադրում է ուսանողի կողմից հետազոտությունների իրականացման ձևերի ինքնուրույն ուսումնասիրում և ստեղծագործական աշխատանք՝ անհատական, խմբային կամ թիմային նախագծերի ձևաչափով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր կանոնակարգով սահմանված ՆՍՀ մեթոդը դեռևս չի կիրառվել գործող ՄԿԾ-ների շրջանակներում և պետք է ներդրվի 2023-2024 ուսումնական տարվա սկզբին:

Ինքնավերլուծության համաձայն՝ Քոլեջն իրականացնում է ուսումնառության արդյունքների վրա հիմնված գիտելիքների ստուգման և գնահատման քաղաքականություն, որի հիմնական նպատակներն են վավեր, հուսալի, օբյեկտիվ գնահատման մեթոդների կիրառումը, ակադեմիական ազնվության և գնահատման չափանիշների թափանցիկության ապահովումը: Նշված նպատակներին հասնելու գործընթացի կառավարման համար մշակվել է Ուսանողների գնահատման և գնահատականների վերահանձնման կանոնակարգ (հաստատված՝ 25.04.2023թ.): Քոլեջում ներդրված է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, ըստ որի հաշվի են առնվում հաճախումները, մոդուլների ուսումնառության արդյունքների հաղթահարումը, գործնական հետազոտական աշխատանքները, մասնակցությունը պրակտիկաներին և այլն: Գնահատման համակարգը հիմնված է գնահատականների 10 միավորանոց սանդղակի վրա: Մոդուլի (առարկայի) վերջնական գնահատման մեջ կա երկու հիմնական բաղադրիչ՝ հաճախումները, որոնց կշիռը 40% է, և միջանկյալ ստուգումը, որի կշիռը կազմում է 60%: Իսկ թե ինչպես է այդ 60%-ը բաշխված տվյալ մոդուլի ուսումնառության արդյունքների կատարման համար կիրառվող դասավանդման-ուսումնառության մեթոդների, հանձնարարվող առաջադրանքների միջև, պարզ չէ: Այսինքն՝ կանոնակարգում հստակ ցույց չի տրված, թե ինչպես է գործում գնահատման բազմագործոն համակարգը, և հատկապես՝ ինչպես է իրականացվում գնահատման բաղադրիչների բաշխումը տեսական գիտելիքների և գործնական հմտությունների միջև: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում չեն տիրապետում իրենց գնահատականների տարբերակման բաղադրիչներին, իսկ կանոնակարգով սահմանված բաղադրիչները ոչ միշտ են օգտագործվում:

Դիտարկվող ՄԿԾ-ների մոդուլային ուսումնական ծրագրերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ ուսումնառության արդյունքների գնահատման համար

ուսանողներին տրվող առաջադրանքները երեք տիպի են՝ տեսական գիտելիքի ստուգման հանձնարարություններ՝ վարժություններ, խնդիրներ, թեստեր, անհատական և թիմային աշխատանքներ, որոնք ուսանողին սովորեցնում են հավաքագրել և վերամշակել անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչպես նաև նպաստում են համակարգչային ծրագրերի կիրառմամբ պրեզենտացիաների պատրաստման հմտությունների զարգացմանը, վերլուծական առաջադրանքներ (քեյսերի կամ տեսանյութերի վերլուծություն և մեկնաբանություն, առաջադրված խնդրի շուրջ ուղեղային գրոհի կազմակերպում), որոնք միտված են զարգացնելու ուսանողի վերլուծական միտքը, որոշակի իրավիճակում արագ կողմնորոշվելու և արդյունավետ լուծում առաջարկելու կարողությունը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ գնահատման թերթիկները ոչ միշտ էին համապատասխանում ծրագրով նախատեսված գնահատման միջոցին, հիմնականում միայն գիտելիք ձևավորող էին, ինչպես նաև գնահատման մեթոդը տեսանելի չէ, քանի որ առաջադրանքներին տրված չեն միավորային կամ տոկոսային կշիռներ, և հետևաբար ուսումնառության արդյունքի հաղթահարման շեմը սահմանված չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մոդուլների վերջնարդյունքը գնահատելու համար հստակ մեխանիզմներ Քոլեջը չունի: Ուսումնական պլանով նախատեսված տարբերակված ստուգարքը փաստացի չի իրականացվում:

Վերջին երեք տարիների պրակտիկաների բնութագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ դիտարկվող ՄԿԾ-ների ուսանողների մեծ մասը գործատուների կողմից գնահատվել են «գերազանց» և «լավ»: Այս գնահատականները չունեն միավորների համարժեքություն, քանի որ պրակտիկայի գործող կանոնակարգում մշակված չէ պրակտիկայի գնահատման մեթոդը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում նախատեսվում է 2023-2024 ուսումնական տարում ներդնել պրակտիկաների արդյունքների պաշտպանության ընթացակարգ, որով կսահմանվեն նաև պրակտիկայի գնահատման սկզբունքները:

2022-2023 ուսումնական տարում դիտարկվող ՄԿԾ-ների պետական ամփոփիչ ատեստավորման քննություններում ներդրվել է գործնական-հետազոտական բաղադրիչը: «Զբոսաշրջություն» մասնագիտության շրջանավարտների գործնական աշխատանքները ներկայացվել են ՀՀ մարզերում մշակված և տեսագրված զբոսաշրջային երթուղիների (տուրփաթեթների) տեսքով, որոնց ցուցադրումը ուղեկցվել է ուսանողների բանավոր խոսքով: «ԶԲՕԼ» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման գործնական աշխատանքների նպատակն էր ցույց տալ մասնագիտական նյութի՝ համացանցից թեմատիկ տեսահոլովակի կամ տեքստի եռալեզու (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն) թարգմանություն կատարելու՝ ուսանողների կարողությունը:

«Ֆինասներ» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորման դիտարկումից պարզ դարձավ, որ ուսանողները հաճախ շրջանցում էին հարցատոմսում ներառված առկա հարցերը: Քննության ժամանակ չէր պահպանվում ակադեմիական ազնվությունը: Այն ուսանողները, ովքեր պետք է գործնական առաջադրանք իրականացնեին անհատական աշխատանքի փոխարեն, հիմնականում չունեին դրանք իրականացնելու համար անհրաժեշտ կարողություններ և հմտությունները:

Այլ մասնագիտություններից տարբերվում է «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորումը, որի համար ուսանողները նախագծում, կարում և ներկայացնում են երեկոյան զգեստներ՝ ներդնելով իրենց ստեղծագործական-մասնագիտական ներուժը։

Պետք է արձանագրել, որ ամփոփիչ ատեստավորման պետական քննության ձևաչափում ներդրված գործնական անհատական աշխատանքի գնահատման սկզբունքները նույնպես մշակված չեն, քանի որ այն քննատոմսի երեք հարցերից մեկն էր և գնահատվում էր երկու տեսական հարցերի հետ հավասար՝ հաշվի չառնելով գործնական աշխատանքի կատարման և ներկայացման առանձնահատկությունները։

Ուսանողների գնահատման կանոնակարգում սահմանված են նաև գնահատականների վերահանձնման կանոնները և գնահատման արդյունքի բողոքարկման կարգը։ Ուսանողն իր գնահատականից բավարարված չլինելու դեպքում իրավունք ունի այն բողոքարկելու, եթե գնահատումը ոչ օբյեկտիվ է, կամ դասավանդողը թույլ է տվել գնահատման անհստակություն։ Քոլեջում եղել է գնահատման արդյունքի մեկ բողոքարկում, որը հանգուցալուծվել է ուսանողի և դասախոսի փոխհամաձայնությամբ՝ գնահատականը թողնելով անփոփոխ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում թույլ են գրագողության դեմ պայքարի մեխանիզմները, չեն կիրառվում աշխատանքների յուրօրինակության ստուգման էլեկտրոնային ծրագրեր։

Քոլեջում մասնագիտությունների կրթական ծրագրերի բարելավման նպատակով առաջավոր փորձի համեմատական վերլուծություններ դեռևս չեն իրականացվել, ուստի և բացակայում են բենչմարքինգի արդյունքում ՄԿԾ-ներում իրականացված փոփոխությունների օրինակները։ Չեն եղել նաև ուսանողների և դասավանդողների շարժունության դեպքեր։ Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում պլանավորվում է մշակել բենչմարքինգի քաղաքականություն և կյանքի կոչել ազգային և օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ համագործակցության և կրթական գործընթացի միջազգայնացմանն ուղղված ծրագրեր։

Քանի որ ՄՈՒՀ-ում իրականացվող ՄԿԾ-ները գրեթե ամբողջությամբ հիմնված են պետական կրթական չափորոշիչների վրա, ապա կարելի է ասել, որ մասնագիտական կրթական ծրագրերը հիմնականում համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին՝ հաշվի առնելով բոլոր միջին մասնագիտական կրթական հաստատությունների համար մշակված ՊԿՉ-ների համընդհանուր բնույթը։

Քոլեջում ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման նպատակով կիրառվում են մշտադիտարկման և շարունակական վերահսկողության որոշ մեխանիզմներ։ Դրանցից մեկը դասալսումներն են, որոնք իրականացվում են համաձայն Դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգի (հաստատված՝ 19.12.2022թ.)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների ժամանակ լրացվող թերթիկները հիմնականում նկարագրական են՝ վերլուծական տարրի գրեթե բացակայությամբ, դիտողությունները և առաջարկությունները շատ ընդհանրական են, և դասալսումների արդյունքում ՄԿԾ-ների փոփոխություն չի իրականացվել։

ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման և որակի լավարկման մյուս գործիքը Քոլեջում վերջերս ներդրված՝ ուսանողների և ՊԴ անձնակազմի շրջանում անցկացվող հարցումներն են։ Օրինակ՝ 2023թ. մայիսին Քոլեջի 3-րդ կուրսի ուսանողների շրջանում անցկացված անանուն հարցման շրջանակներում ուսանողների կողմից արվել են ՄԿԾ-ների բարելավմանն ուղղված որոշ առաջարկներ։ Մասնավորապես «Ֆինանսներ» մասնագիտության ուսանողները առաջարկել են դասախոսությունների նյութը տրամադրել պրեզենտացիաների միջոցով, ինչպես նաև գիտելիքների ամրապնդման և ընդլայնման համար կազմակերպել այցելություններ տարբեր ֆինանսական հաստատություններ, պրակտիկաներն անցկացնել ոչ միայն բանկերում, այլև ֆինանսական և հաշվապահական կազմակերպություններում։ Պրակտիկաների որակի բարելավման վերաբերյալ առաջարկ է արվել նաև «ԶԲՕԼ» ուսանողների կողմից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցման ժամանակ կատարված առաջարկները նախատեսվում է կյանքի կոչել նոր ուսումնական տարում։

ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման քաղաքականության ներդրման մեխանիզմ է Մոդուլային (առարկայական) ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգը (հաստատված՝ 25.04.2023թ.), որը ենթադրում է ծրագրի, նրա բաղկացուցիչ դասընթացների սահմանած նպատակներին հասնելու և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերման ընթացքի, դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների արդյունավետության գնահատում, ծրագրի թերությունների բացահայտում և անհրաժեշտ փոփոխությունների առաջարկում։ Փորձագիտական այցերից պարզ դարձավ, որ այս կանոնակարգով ՄԿԾ-ների մշտադիտարկում և բարելավում դեռևս չի իրականացվել։

Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման և բարելավման մեկ այլ մեխանիզմ է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների ընդգրկումը, որոնց կողմից կազմվող հաշվետվություններում արտացոլվում են նրանց կարծիքները՝ շրջանավարտների արձանագրած կրթական արդյունքների վերաբերյալ, և արվում են առաջարկություններ՝ այդ արդյունքների հետագա բարելավման ուղղությամբ։ 2019-2022թթ. պետական որակավորող հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նշված տարիներին արվել են մի շարք, այդ թվում՝ կրկնվող առաջարկություններ։ Օրինակ՝ «ՀՏԱՀԾԱ» ՄԿԾ-ում սահմանել պարապմունքների գործնական մասի գերակայություն տեսականի համեմատ/ավելացնել պրակտիկ ժամերի քանակը, դասավանդող մասնագետների համար ապահովել վերապատրաստման հնարավորություն։ «Ֆինանսներ»-ում դասավանդող մասնագետների համար կազմակերպել փորձի փոխանակման գործուղումներ արտասահմանյան ուսումնական հաստատություններ, պետական քննության ժամանակ ներդնել գործնական առաջադրանքներ։ «Հաշվապահական հաշվառում» ծրագրում հետևել հարկային նոր օրենսդրական փոփոխություններին և տեղեկացնել ուսանողներին, ավելացնել գործնական ժամերը և կատարելագործել գործնական խնդիրների լուծման կարողությունը, խորացնել համակարգչով աշխատելու և SS կիրառման հմտությունները։ «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ում ավելացնել օտար լեզուների ժամաքանակը (քանի որ այս ոլորտում 3 օտար լեզվի

իմացությունը պարտադիր է), դասավանդող մասնագետների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, ավելացնել մարքեթինգային և ձեռնարկատիրական գիտելիքները: «ԶԲՕԼ»-ում ավելացնել ֆրանսերենի ժամաքանակը: «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի դասաժամերին օգտվել ինտերնետից և համակարգչային նոր ծրագրերից, շեշտը դնել համակարգչային գրաֆիկայի կիրառման վրա և մոդելները գծագրել համակարգչային ծրագրերով, ստեղծել նոր նմուշի մոդելներ ազգային տարազի տարրերով, խորացնել կապը նորաձևության սրահների հետ: Փորձագիտական այցից պարզվեց, որ վերոնշյալ մեխանիզմով մասնավորապես փորձ էր արվել բարելավել «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ները՝ որպես ամփոփիչ ատեստավորման քննության բաղադրիչ ներդնելով գործնական անհատական աշխատանքը: Իսկ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության համար առաջարկված ազգային տարազի տարրերով նոր մոդելների ստեղծման ուղղությամբ 2020-2021 ուսումնական տարում իրականացվել է «Հայկական տարազի առանձնահատկությունները» թեմայով հետազոտական աշխատանք:

Ուսանողների պատրաստվածության գործում եղած թերություններից պետական որակավորող հանձնաժողովների կողմից նշվել է բանավոր խոսքի կաշկանդվածությունը («Հաշվապահական հաշվառում», «Հագուստի մոդելավորում և նախագծում»), գործնական հմտությունների պակասը և քննության ընթացքում համակարգչային հմտություններ չներկայացնելը («Հաշվապահական հաշվառում»), գործվածքի սխալ ընտրությունը («Հագուստի մոդելավորում և նախագծում»), տեսական գիտելիքի գործնական կիրառման թույլ կարողությունները և տնտեսագիտության տեսության հարցերում թերանալը («Ֆինանսներ»), ֆրանսերենով թարգմանություն կատարելու դժվարությունները («ԶԲՕԼ»), քննական թեմաների բազմազանության պակասը («ՀՏԱՀԾԱ»): «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողների վերաբերյալ էական թերություններ չեն նկատվել և ընդգծվել է միջառարկայական կապի հրաշալի ապահովումը, տուրիստական փաթեթների լավ ներկայացումը, ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն իրականացնում է իրենց բնույթով և բովանդակությամբ սեփական առաքելությանը և աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ներ, որոնք հիմնված են պետական կրթական չափորոշիչների վրա, համապատասխանում են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչին և նպաստում են հաստատության ուսանողների թվի աճին:

Մտահոգիչ է, որ ՄԿԾ-ների իրականացման շրջանակներում դեռևս ձևավորված չէ կամընտրականության սկզբունքով ուսուցման մշակույթը, որի ապահովումը ուսանողակենտրոն կրթության կարևոր մեխանիզմներից մեկն է: Դրա ներդրմամբ կարելի է նպաստել ուսանողների մասնագիտական նախապատվությունների բավարարմանը և, ըստ էության, լուծել նեղ մասնագիտացման ուղղություններով լրացուցիչ գործնական կարողությունների և հմտությունների ձեռքբերման խնդիրը՝ դրանով իսկ օժանդակելով շրջանավարտների մրցունակության բարձրացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ մասնագիտական ամբիոնները պետք է ավելի արդյունավետ քաղաքականություն վարեն

ընտրովի դասընթացների կազմակերպման ուղղությամբ՝ հաշվի առնելով ինչպես ուսանողների ցանկությունը, այնպես էլ գործատուների կարիքները։

Ողջունելի է, որ Քոլեջում մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների ապահովման նպատակով կիրառվում են ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող դասավանդման և ուսումնառության բազմապիսի մեթոդներ։ Թեև պետք է նշել, որ տարբեր ՄԿԾ-ներում կիրառելիության տեսանկյունից դրանց ընտրության սկզբունքները միասնական չեն։

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ թեև Քոլեջն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն և մշակված կանոնակարգ, սակայն հուսալի և օբյեկտիվ գնահատման մեթոդների, գնահատման չափանիշների թափանցիկության և ակադեմիական ազնվության ապահովումը դեռևս հիմնված չէ բոլոր շահակիցներին հասկանալի մեխանիզմների վրա, ինչը վերաբերում է ինչպես մոդուլների, այդպես էլ պրակտիկաների արդյունքների գնահատմանը։ Ողջունելի է, որ ՄԿԾ-ների ամփոփիչ ատեստավորման պետական քննություններում ներդրվել են գործնական աշխատանքներ, ինչը թույլ է տալիս գնահատել ոչ միայն տեսական գիտելիքի յուրացման աստիճանը, այլև ուսումնառության տարիներին ձեռք բերված հետազոտական, վերլուծական և այլ գործնական կարողությունները։ Միևնույն ժամանակ, մտահոգիչ է, որ մշակված չեն գործնական հետազոտական աշխատանքների գնահատման հստակ սկզբունքներ։ Այսինքն՝ Քոլեջում գործող գնահատման համակարգը ամբողջական լրամշակման կարիք ունի։

Քոլեջում առաջավոր փորձի համեմատական վերլուծության նպատակով դեռևս չի իրականացվել՝ բենչմարքինգ, որը կբերեր ՄԿԾ-ների վերանայման, չեն եղել նաև ուսանողների և դասավանդողների շարժունության դեպքեր։ Միևնույն ժամանակ, հուսադրող են նշված ուղղությամբ Քոլեջում պլանավորված անելիքները, որոնք ուղղված կլինեն բենչմարքինգի քաղաքականության մշակմանը և այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ծրագրերի իրականացմանը։

Ողջունելի է, որ Քոլեջում ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման նպատակով կիրառվում են տարբեր գործիքներ, այդ թվում՝ դասալսումներ։ Սակայն փորձագիտական խմբի դիտարկմամբ ՄԿԾ-ների բարելավման համար մասնագիտական ամբիոններին անհրաժեշտ է ճշգրտել դասալսումների նպատակներն ու խնդիրները և վերլուծական տարրի ուժեղացման և դասավանդման խնդիրների իրական վերհանման միջոցով բարձրացնել դասալսումների արդյունավետությունը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում ներդրվում և աստիճանաբար կանոնակարգվում է հարցումների միջոցով մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մշակույթը։ Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ հարցումների իրականացման ընթացակարգերը դեռևս լիարժեք չեն կիրառվում և ունեն լրամշակման կարիք՝ հատկապես հարցումների արդյունքների վերլուծության և դրանց հիման վրա ՄԿԾ-ներում փոփոխություններ կատարելու մասով։

Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ Մոդուլային (առարկայական) ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգի հաստատման պահից (25.04.2023) Քոլեջում ներդրվել է մոդուլային ծրագրերի գնահատման քաղաքականություն, որում կան

ՊԻԳԲ շրջափուլի կիրառման ակնհայտ նշաններ։ Այս հանգամանքը դիտվում է դրական, քանի որ կանոնակարգը թույլ է տալիս գնահատել մոդուլային ծրագրի նպատակներին հասնելու ու ակնկալվող արդյունքների ձեռքբերման ընթացքը և մակարդակը, գնահատել դասավանդման արդյունավետությունը, բացահայտել ծրագրերի թերություններն ու առաջարկել անհրաժեշտ փոփոխություններ։ Բացասական է, որ մասնագիտական ամբիոնների կողմից նշված հնարավորությունը դեռևս չի օգտագործվում, սակայն ապագայում այս ուղղությամբ հետևողական աշխատանքների իրականացումը կարող է դառնալ ՄԿԾ-ների շարունակական բարելավման երաշխիք։

Գովելի է, որ որոշ գործատուների հետ մշտական հետադարձ կապի շնորհիվ և նրանց կողմից արված գրավոր առաջարկների արդյունքում Քոլեջի որոշ ՄԿԾ-ներում արդեն իրականացվել են, որոշներում էլ պլանավորվել են կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված փոփոխություններ։ Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ Քոլեջում դեռևս չի ձևավորվել գործատուների կարիքների վերհանման և ՄԿԾ-ներում դրանք հաշվի առնելու ամբողջական համակարգը։ Քոլեջը կարող է առանձին գործատուների հետ իր աշխատանքի դրական փորձը տարածել այլ արտաքին շահակիցների վրա, և ընդլայնելով գործատուների հետ համագործակցության շրջանակը՝ ապահովել իրականացվող ՄԿԾ-ների շարունակական բարելավումը, զգալիորեն բարձրացնել դրանց մրցունակությունը և կառավարման արդյունավետությունը։

Եզրահանգում: Թեև Քոլեջում բացակայում են ՄԿԾ-ների ամբողջական մասնագրերը, բոլոր ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքների քարտեզագրումներում նկատվել են նույնատիպ թերություններ, առկա են որոշ ՄԿԾ-ների թողարկած շրջանավարտների պրոֆիլի ձևավորման հետ կապված, ինչպես նաև պրակտիկաների անցկացման, գործատուների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման և աշխատաշուկայի պահանջներին ՄԿԾ-ների համապատասխանեցման խնդիրներ, կա Քոլեջում գնահատման համակարգի հիմնարար լրամշակման անհրաժեշտություն, բացակայում են ՄԿԾ-ների բենչմարքինգի քաղաքականությունը, ուսանողների և դասախոսների շարժունության օրինակները, ցածր է մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների տոկոսը, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ ԵՊՀՏՔ-ն իրականացնում է իր առաքելությանը համահունչ և ՈԱՇ-ին համապատասխանող մասնագիտական կրթական ծրագրեր, կիրառում է ուսանողակենտրոն կրթության մեթոդներ՝ կարևորելով կարողություն-հմտություն բաղադրիչն ու խրախուսելով ուսումնառության վերլուծական և հետազոտական տարրերի զարգացումը, ձգտում է ներդնել դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացման քաղաքականություն, որի շրջանակներում առկա են գործատուների առաջարկությամբ ՄԿԾ-ների բարելավման օրինակներ, քայլեր է ձեռնարկում ՄԿԾ-ների որակի մշտադիտարկման, գնահատման և վերանայման համակարգի կայացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է բավարար։

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Քոլեջում ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգի համաձայն: 2020թ-ից ընդունելությունն իրականացվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով: Ընդունելության համար դիմորդը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում էլեկտրոնային տարբերակով պետք է լրացնի դիմում-հայտ: Անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկատվությունը դիմորդներին նախօրոք հայտնի է դառնում Քոլեջի ֆեյսբուքյան էջում տեղադրվող ընդունելության մասին հայտարարություններից: Դիմորդները հնարավորություն ունեն ֆեյսբուքյան էջին գրելու միջոցով ստանալ իրենց անհրաժեշտ հավելյալ տեղեկատվությունը:

Քոլեջում ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով, բացառությամբ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությունից, որտեղ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություն գծանկար առարկայից:

Դիմորդներն ընդունելության դրական արդյունքների մասին տեղեկանում են հեռախոսազանգի միջոցով:

Դիմորդների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման նպատակով քոլեջն ունի սահմանված գործողությունների պլան՝ «Ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման ժամանակացույց», որի իրականացման համար պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը: Աշխատանքների իրականացումը սկսվում է ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից՝ շարունակվելով մինչև ընդունելության ավարտը: Դիմորդների հավաքագրման միջոցառումներն են դպրոցներ կատարվող շրջայցերը, դպրոցականների համար կազմակերպվող ճանաչողական այցերը դեպի Քոլեջ, սոցիալական մեդիայում /ֆեյսբուքյան պաշտոնական էջ/ կազմակերպվող գովազդային արշավները: Քոլեջում առկա են նաև թռուցիկներ, որոնք պարունակում են տեղեկատվություն, թե մասնագիտությունների շրջանակներում տրվող որակավորումներով մասնագետներն ինչպիսի հաստիքներ կարող են զբաղեցնել: Դպրոցներում քոլեջը ներկայացնում են այդ իսկ դպրոցի շրջանավարտները: ՈՒԽ անդամները տեսահոլովակներով ներկայացնում են իրենց մասնագիտությունները, որոնք տեղադրվում են Քոլեջի ֆեյսբուքյան էջում: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում Քոլեջի մասին իմացել են իրենց ընկերների, հարազատների միջոցով:

Վերջին չորս տարիներին քոլեջում սովորող ուսանողների թիվը աճել է՝ 371-ից դառնալով 619: Ըստ 2022-2023 ուսումնական տարվա տվյալների՝ Քոլեջում ընդունելության տեղերի թիվը 335-ի է հասել, փաստացի Քոլեջ ընդունվել են 225 դիմորդներ, ընդհանուր դիմումների թիվն առաջին հայտով եղել է 170, իսկ թափուր տեղերի հայտով՝ 63, մրցույթից դուրս մնացածների

թիվը հասել է 8-ի։ Թափուր տեղերը հիմնականում միջնակարգ կրթությամբ սահմանված տեղերից են։

Քոլեջում սովորում են կրթական հատուկ կարիքներ ունեցող 10 ուսանողներ, ովքեր չունեն հենաշարժողական ապարատի սահմանափակումներ։ Նրանց հետ աշխատանքներ են տանում կուրսղեկները և հոգեբանի կրթություն ունեցող քոլեջի երեք աշխատակիցներ՝ ըստ անհրաժեշտության։ Քոլեջի շենքային պայմանները հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար։

Ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով գործում է ՈՆԱԿ-ին կից Ուսանողական կրթական կարիքների վերհանման ուսանողական հանձնախումբը, որն ունի իր կանոնակարգը։ Հանձնախումբը չունի սահմանված աշխատանքային պլան։ Հանձնախմբում ընդգրկվում են մեկական ուսանողներ ամեն մասնագիտությունից և կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը։ Հանձնախմբի անդամներն ընտրվում են ըստ իրենց ցանկության. հանձնախմբի բոլոր անդամները մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Ուսանողության ձայն» ծրագրի կողմից կազմակերպված վերապատրաստմանը։ Հանձնախումբն ունի նախագահ, ով ընտրվում է հանձնախմբի անդամների կողմից։

Հանձնախմբի նախաձեռնությամբ Քոլեջում տեղադրվել է բողոք-առաջարկությունների արկղ, որը բացվում է կանոնակարգով սահմանված ժամկետներում՝ ամսեկան երկու անգամ։ Ուսանողների առաջարկությունները քննարկվում են հանձնաժողովի հանդիպումների ընթացքում, որոնք արձանագրվում են։ Արձանագրությունները բովանդակային չեն. չեն պարունակում արկղիկի միջոցով բարձրացված հարցերի վերաբերյալ մանրամասներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արկղիկի միջոցով ուսանողները բարձրացրել են բուֆետի խնդիրը, որը լուծում է ստացել Քոլեջի կողմից գտած այլընտրանքային ծառայության միջոցով։ Հանձնախումբը ուսանողների շրջանում պարբերաբար իրականացնում է նաև հարցումներ, որոնք ևս միտված են ուսանողների կրթական կարիքների վերհանմանը։ Դրանց արդյունքների վերլուծությունը Քոլեջը համարում է իր գործունեության որակի և արդյունավետության շարունակական գնահատման հիմնական գործիքներից մեկը։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումները հիմնականում վերաբերում են Քոլեջի նյութատեխնիկական բազային և Քոլեջում նոր խնդիրներ չեն բացահայտել։

Համաձայն Քոլեջի ինքնավերլուծության՝ ուսանողների կարիքների վերհանման արդյունավետ մեխանիզմ է դիտարկվում նաև կուրսղեկների գործունեությունը, որը նպատակաուղղված է վերահսկելու ուսանողերի ուսումնական առաջընթացը, օգնելու նրանց հաղթահարել ուսման ընթացքում ծագած խնդիրները, տրամադրելու խորհրդատվություն ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ։ Ըստ Քոլեջի կազմակերպչական կառուցվածքի՝ կուրսղեկները գործում են կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի անմիջական ղեկավարության ներքո։ Նրանք ունեն աշխատանքային պլաններ, որոնք հաստատվում են տնօրենի կողմից, սակայն ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված միջոցառումներ աշխատանքային պլանով չեն սահմանվում։ Հարկ է նշել, որ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կուրսղեկները մշտապես կապի մեջ

են ուսանողների հետ, ինչը հնարավորություն է տալիս կարճ ժամանակում արձագանքել և լուծում տալ ուսանողների խնդիրներին։

Կրթական կարիքների վերհանման նպատակով երկու ուսանողներ ընդգրկված են նաև Քոլեջի գրադարանային խորհրդում, ովքեր վերջերս բարձրացրել են մասնագիտական գրականության սակավության խնդիրը, որի լուծման նպատակով ուսանողների կողմից կազմակերպվել է մասնագիտական գրքերի նվիրատվություն գրադարանին։

Ուսանողները բազմիցս միջնորդված և անհատական կերպով բարձրացրել են նաև Քոլեջի շենքային պայմանների վերաբերյալ խնդիրներ, որոնք մասամբ լուծվել են, իսկ մյուս մասն էլ պլանավորման փուլում է։

Քոլեջում ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու նպատակով հստակ սահմանված լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների ժամանակացույց չկա, սակայն այն ուսանողները, ովքեր բացակայում են կամ ամբողջությամբ չեն հասցնում յուրացնել դասերը դասապրոցեսի ընթացքում, հնարավորություն ունեն, ըստ անհրաժեշտության, մոտենալ դասավանդող դասախոսին և ստանալ համապատասխան աջակցություն։ Նման դեպքերը հազվադեպ են։ Ըստ ինքնավերլուծության, խորհրդատվություններից տեղյակ է ուսանողների 51 %-ը, իսկ խորհրդատվություններից օգտվում է ուսանողների 30 %-ը:

Ուսումնառողները հիմնականում լրացուցիչ խորհրդատվություններ և ուղղորդում են ստանում անհատական աշխատանքներ կատարելիս, որոնք միտված են վերլուծական մտածողությունը զարգացնելուն։

Քոլեջում վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց մշակված չէ, սակայն ուսանողներն աշխատանքային ժամերին կարող են դիմել համապատասխան մարմիններին և ստանալ օժանդակություն, ուղղորդում կամ խորհրդատվություն, որը կազմակերպվում է կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի միջնորդությամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ուսանողների կարիքների վերհանման հանձնախումբը ստեղծվել է Քոլեջի ուսանողների նախաձեռնությամբ. նրանք դիմել են կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին, ով էլ նպաստել է կառույցի ստեղծմանը:

Քոլեջում ուսանողների կարիերային առնչվող խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների համակարգումն իրականացվում է 2019 թ.-ից գործող Կարիերայի կենտրոնի կողմից: Կարիերայի կենտրոնն ունի կանոնակարգ, իր աշխատանքներն իրականացնում է տարեկան աշխատանքային պլանի համաձայն։ Կարիերայի կենտրոնի միջնորդությամբ ուսանողները մասնակցում են տարբեր բուհերում կազմակերպվող «Բաց դռներ» միջոցառումների, մասնագիտական տոնավաճառների, էքսպոների։ Կարիերայի կենտրոնի աշխատանքային պլանով պլանավորվում է իրականացնել նաև ոչ ֆորմալ դասընթացներ, որոնք միտված են ուսանողների՝ աշխատաշուկայում արագ կողմնորոշվելուն, գործատուին ներկայանալու հմտությունները զարգացնելուն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված դասընթացները մասամբ են իրականացվում, ուսանողների մեծ խմբեր ընդգրկված չեն։

Կարիերայի կենտրոնն ունի շրջանավարտների բազա, որը պարբերաբար թարմացվում է շրջանավարտների հետ հեռախոսազանգերի միջոցով։ Ինքնավերլուծությանը կից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բազան չի պարունակում

ամբողջական տեղեկատվություն շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Շահակիցների հետ տեղի ունեցած հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներից գրեթե բոլորը նախընտրում են շարունակել իրենց կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Կարիերայի կենտրոնն ունի առանձնացված ֆեյսբուքյան էջ, որտեղ պարբերաբար տեղադրվում են թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ, ուսանողների իրականացրած պրակտիկաների վերավերյալ տեսանյութեր, ինչպես նաև հաջողությունների հասած շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվական հրապարակումներ: Ֆեյսբուքյան էջի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ շրջանավարտների հրավիրմամբ իրականացվում են նաև հանդիպում-քննարկումներ:

Կարիերայի կենտրոնը եռամսյակային հաշվետվություններ է ներկայացնում ԿԳՄՍ նախարարությանը, ինչպես նաև կիսամյակային և տարեկան հաշվետվություններ՝ տնօրենին: Տնօրենին ներկայացվող հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հաշվետվությունները կազմվում են «Կատարված է–չի կատարվել» ձևաչափով, չեն պարունակում քանակական կամ որակական վերլուծություններ:

Ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում ապահովելու համար քոլեջում գործարկվել են մի շարք մեխանիզմներ, որոնցից է «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրերի ավարտական որակավորման քննության մեջ «անհատական աշխատանք» բաղադրիչի ներառումը: Ուսանողներն ընտրում են իրենց թեմաները, որոնք նախապես ցուցակագրվում են մասնագիտության հատուկ մոդուլները դասավանդող դասախոսների առաջարկությամբ: Քոլեջում պլանավորվում է թեմաների արդիականացումը ապահովելու նպատակով թեմաներն ընտրելու գործընթացին մասնակից դարձնել նաև գործատուներին:

«Զբոսաշրջություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման ձևաչափում ևս ներմուծված է հետազոտական աշխատանքի արդյունքում անհատական նախագծերի ներկայացման պահանջը: Նախագիծն իրենցից ներկայացնում է ՀՀ որևէ մարզում նոր զբոսաշրջային երթուղու մշակում՝ որպես ծառայությունների ամբողջական փաթեթ, այնուհետև երթուղու գործնական փորձարկում ուսանողի կողմից, երբ նա հանդես է գալիս զբոսավարի դերում և զուգահեռաբար նկարահանում է երթուղու անցման և տեսարժան վայրերի ներկայացման ողջ ընթացքը: Ամփոփիչ ատեստավորման քննության ժամանակ ուսանողները ցուցադրում են իրենց նկարահանած և մոնտաժած տեսանյութերը՝ ցուցադրությունն ուղեկցելով բանավոր ներկայացմամբ:

Հետազոտական տարբեր պարունակող հանձնարարականներ իրականացնում են նաև «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Քաղաքաշինական կադաստր», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների շրջանակներում:

Քոլեջում ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ, Քոլեջի կանոնադրությամբ, Քոլեջի ներքին կարգապահական կանոններում, Քոլեջի և ուսանողների միջև ստորագրվող պայմանագրում:

Համաձայն ԵՊՀՏՔ կանոնադրության՝ Քոլեջի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինն Ուսանողական խորհուրդն է (ՈՒԽ), որն ապահովում է ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: Քոլեջի ՈՒԽ-ը համարվում է ստեղծված և օգտվում Քոլեջի կանոնադրությամբ սահմանված իր իրավունքներից Քոլեջի ԿԿԽ-ի նախագահին իր անվանական կազմն ու գործունեության կարգը պաշտոնապես ներկայացնելու պահից:

ՈՒԽ-ն շարժվում է Կառավարման խորհրդի կողմից վավերացված և տնօրենի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն, չունի գործունեության կարգ, հաստատված անվանացանկ, չի ներկայացնում հաշվետվություններ, նիստեր գումարում է յուրաքանչյուր ամսում առնվազն երկու անգամ: Ըստ Քոլեջի կազմակերպական կառուցվածքի՝ Ուսանողական խորհուրդն անմիջապես ենթարկվում է տնօրենին:

Ուսանողական խորհրդի նիստերում հիմնականում քննարկվում են տարաբնույթ սպորտային, մշակութային միջոցառումների կազմակերպումը, իսկ ՈՒԽ-ի նախագահը ընտրվել է Ուսանողական կրթական կարիքների վերհանման որակի ներքին ապահովման ուսանողական հանձնախմբի նիստի շրջանակներում ՈՒԽ 25 անդամների կողմից փակ քվեարկությամբ:

ՈՒԽ-ն ներկայացուցիչներ ունի Քոլեջի ԿԿԽ-ում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կառավարման խորհրդում ընդգրկված ուսանողներն առաջադրվել են կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերջին տարիներին ուսանողների կողմից հարցեր չեն բարձրացվել:

Քոլեջի կողմից ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմ են ուսանողների շրջանում իրականացվող հարցումները, սակայն դրանք չունեն որոշակի պարբերականություն, արդյունքների վերլուծությունը չի արտացոլվում հետագա պլանավորումների մեջ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում դիմորդների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման նպատակով Քոլեջի կողմից սահմանված հստակ քայլերի հաջորդականությունը, միջոցառումների կազմակերպման ժամկետների առկայությունը և պատասխանատու միավորի նշանակումը, որի հստակ իրագործումը կհանգեցնի դիմորդների թվի աճին: Փորձագիտական խումբը կարևորում է նաև կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատումը, ինչը հնարավորություն կտա ավելի թիրախային կերպով սահմանել գործիքակազմը: Հատկանշական է նաև այն, որ ուսանողների՝ Քոլեջ ընդունվելու հիմնական պատճառը նախկին շրջանավարտների և իրենց բարեկամների դրական կարծիքն է եղել Քոլեջի վերաբերյալ, ինչը վկայում է հաստատության դրական համբավի մասին:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն փաստը, որ միջնակարգ կրթությամբ դիմորդների հավաքագրման ուղղությամբ Քոլեջը մեծ ծավալով աշխատանքներ չի իրականացնում, ինչը հանգեցնում է թափուր տեղերի առկայությանը: Հարկ է նշել, որ

միջնակարգ կրթությամբ դիմորդների ներգրավումը հնարավորություն կտա Քոլեջին ավելացնել իր ֆինանսական միջոցները վերջիններիս կողմից վճարվող ուսման վարձի հաշվին:

Դրական է նաև այն փաստը, որ Քոլեջում սովորող կրթական հատուկ կարիքներ ունեցող ուսանողների հետ Քոլեջի աշխատակիցները տանում են աշխատանքներ, սակայն փորձագիտական խումբը կարևորում է այդ աշխատանքների իրականացման համար առանձնացված աշխատակցի առկայությունը, ինչպես նաև շենքային պայմանների հարմարեցվածությունը հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար: Այս քայլերի իրականացումը կբերի Քոլեջի ուսումնական գործընթացի կազմակերպման որակի էլ ավելի բարձրացման:

Փորձագիտական խումբը գովարժան է համարում ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով Որակի կենտրոնին կից Ուսանողական կրթական կարիքների վերհանման ուսանողական հանձնախմբի ստեղծումը, սակայն կարևորում է կառույցի աշխատանքների հստակեցումը, ինչը հնարավորություն կստեղծի արդյունավետ կերպով վերհանել ուսանողական կրթական կարիքներ:

Դրական է կուրսղեկների ինստիտուտի առկայությունը, ինչն ուսանողների համար հնարավորություն է ստեղծում անմիջական կապի միջոցով բարձրացնել իրենց խնդիրները և կարճ ժամկետներում ստանալ լուծումներ: Փորձագիտական խումբը կարևորում է նաև կուրսղեկների աշխատանքային պլաններում ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված միջոցառումների առկայությունը, ինչը կնպաստի կրթական կարիքների վերհանման գործընթացների կանոնակարգմանը:

Դրական է նաև ուսանողների ներգրավվածությունը գրադարանային խորհրդում, ինչը իրական հնարավորություն է ստեղծում գրադարանային ֆոնդի համալրման գործընթացներում ուսանողների մասնակցության համար:

Փորձագիտական խումբը նշում է, որ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու նպատակով սահմանված լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների ժամանակացույցի ներդրումը կխթանի բացակայող կամ թույլ առաջադիմություն ցուցաբերող ուսանողների կարողությունների համարժեք զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսանողներն առանց խոչընդոտների կարող են դիմել վարչական աշխատակիցներին, սակայն կարևորում է հստակ ժամանակացույցի մշակումն ու կիրառումը, ինչը կնպաստի ուսանողներին օժանդակություն տրամադրելու գործընթացի կանոնակարգմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է շրջանավարտների բազայի ամբողջականացումը, ինչը հնարավորություն կտա Քոլեջին ճշգրտորեն գնահատել իր տրամադրած կրթության արդյունավետությունը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող դասընթացների մասշտաբի մեծացումը, ինչը հնարավորություն կտա շրջանավարտներին զարգացնել աշխատաշուկայում կողմնորոշվելու իրենց հմտությունները: Դրական է Կարիերայի կենտրոնի կողմից հաջողության հասած շրջանավարտների ընդգրկմամբ միջոցառումների կազմակերպումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ նման միջոցառումները բարձրացնում են ուսանողների մոտիվացիան:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի ջանքերն ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ, ինչը թույլ է տալիս զարգացնել վերլուծական և ստեղծագործական մտածողությունը:

Խնդրահարույց է Ուսանողական խորհրդի՝ Քոլեջի կանոնադրությամբ սահմանված և փաստացի լիազորման տարբերությունը: Փորձագիտական խմբի կարծիքով նման անորոշությունը կարող է հանգեցնել ՈՒԽ-ի կողմից ընդունված որոշումների անարժանահավատությանը: Փորձագիտական խումբը կարևում է Ուսանողական խորհրդի գործունեության կարգի և ուսանողների առջև հաշվետվողականության մեխանիզմի սահմանումը, ինչը կնպաստի աշխատանքների՝ ուսանողների կարիքներին համապատասխան պլանավորմանը: Բացասական է այն փաստը, որ Կառավարման խորհրդում ուսանողների ներկայացուցիչները չեն ընտրվել ուսանողական ներկայացուցչական մարմնի կողմից, ինչը կարող է վկայել Ուսանողական խորհրդի հանդեպ Քոլեջի ունեցած անվստահության մասին:

Փորձագիտական խումբը կարևորում է ուսանողներին տրամադրվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների կանոնակարգումը, ինչը կնպաստի նշված ծառայությունների արդյունավետության արժանահավատ գնահատմանն ու լավարկմանը:

Եզրահանգում: Հաշվի անելով, որ ԵՊՀՏՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով ստեղծված է ՈՆԱԿ-ին կից Ուսանողական կրթական կարիքների վերհանման ուսանողական հանձնախումբը, գործում է կուրսղեկների ինստիտուտը, ուսանողներն ազատ են վարչական անձնակազմին դիմել, ուսանողներին տրամադրվում են վերլուծական և քննադատական մտածողությունը զարգացնող հետազոտական աշխատանքներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՀՏՔ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Համաձայն Քոլեջի 2022-2027 թթ. ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև խնդիր է դրել զարգացնել որակյալ կադրային ռեսուրսների համակարգը: ԵՊՀՏՔ-ն 2023 թ-ից ներդրել է «Պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավման և կայունության ապահովման»

քաղաքականություն, որի համաձայն պրոֆեսորադասախոսական կազմը համարվում է Քոլեջի կարևորագույն ռեսուրսը, ինչով պայմանավորված են աշխատանքի արդյունավետությունը, հնարավորությունները, զարգացման հեռանկարները և որը կազմում է կադրային քաղաքականության մի մասը:

2021 թ-ից ԵՊՀՏՔ-ի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ 24/12/2020թ.-ի N 48-Ն հրամանով հաստատված «Նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի: Կարգի համաձայն՝ մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվում է բանավոր քննություն: Քննության հարցաշարերը պետք է ներառեն հարցեր, ինչպես դասավանդող մոդուլների/առարկաների, այնպես էլ մանակավարժական գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

2021 թ-ից առ այսօր մրցութային կարգով Քոլեջ է ընդունվել 8 դասախոս: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզ դարձավ, որ մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթը իրականացվել է համաձայն կարգի պահանջվող դրույթների: Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը Քոլեջը հրապարակել է «Կրթություն» շաբաթաթերթում և ֆեյսբուքյան էջում: Յուրաքանչյուր մրցույթի համար ստեղծվել են մրցութային հանձնաժողովի անվանական կազմ, հարցատոմսեր, մրցույթի արձանագրություն, անհատական քվեաթերթիկներ և ամփոփիչ արձանագրություն:

Համատեղությամբ և ժամավճարային կարգով (0,5 կամ 0,25 դրույքաչափով) աշխատող դասախոսների դեպքում մրցութային ընտրություն չի իրականացվում, և նրանք հրամանագրվում են տնօրենի կողմից:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջում առկա չէ հարցաշարերի և հարցատոմսերի կազմման հստակ ընթացակարգ, որտեղ ներկայացված կլինեն, թե հարցատոմսերը ինչպես և ինչ համամասնությամբ /մասնագիտական հարցեր, մանկավարժական բնույթի հարցեր/ պետք է կազմվեն: Ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականությունը բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքից և ԵՊՀՏՔ-ի Ներքին կարգապահական կանոնակարգից: Անձնակազմի ընդունման և հեռացման համար մեխանիզմների արդյունավետությունը վերլուծող գործիքներ Քոլեջում դեռևս մշակված չեն:

Ուսումնաօժանդակ անձնակազմն աշխատանքի է ընդունվում ոչ մրցութային կարգով՝ իրենց դիմումի համաձայն: Աշխատանքի ընդունման ժամանակ հաշվի են առնվում մասնագիտական որակները, կրթությունը, աշխատանքային փորձը:

ԵՊՀՏՔ-ի դասախոսին ներկայացվող պահանջներն ամրագրված են «Դասախոսի պաշտոնի նկարագրում»: Դասախոսի պաշտոնի նկարագիրը ընդհանրական է: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ սահմանված չեն: Դասախոսական կազմի առջև դրված հիմնական պահանջները սահմանվում են ՊԿՉ-ներով ըստ մասնագիտական առանձնահատկությունների:

Քոլեջում դասախոսական կազմի պարբերական գնահատման համար ներդրված են մի շարք մեխանիզմներ՝ դասալսումներ, ուսանողների կողմից դասախոսական կազմի աշխատանքի և ակադեմիական ազնվության գնահատմանն ուղղված հարցում, դասախոսների ինքնավերլուծություն:

2022թ. Քոլեջը վերանայել է «Դասալսումների անցկացման և քննարկման» կանոնակարգը: Դասալսումները հիմնականում լինում են պլանավորված և իրականացվում են համաձայն ժամանակացույցի, սակայն անհրաժեշտության դեպքում իրականացվում են նաև ոչ պլանավորված դասալսումներ: Դասալսումներ իրականացնում են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ամբիոնների վարիչները, մեթոդմիավորման բաժնի ղեկավարը, ինչպես նաև փոխադարձ դասալսումներ են իրականացնում դասախոսները:

Դասալսման արդյունքները արձանագրվում և վերլուծվում են համապատասխանաբար «Դասալսման պլան» և «Դասալսման արդյունքների վերլուծություն» ձևաթերթերում, քննարկվում են մեթոդմիավորման խորհրդում: Դասալսման ձևաթերթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասալսման արդյունքների վերլուծությունը հիմնականում նկարագրողական էին և նախանշված չէին դասախոսի, ինչպես նաև դասապրոցեսի բարելավման ենթակա կողմերը: Փորձագիտական խմբի ուսումնասիրություններից պարզվեց, որ Քոլեջն այդ խնդիրը մատնանշել է դեռևս 2019-2020 ուստարում:

2022 թ. սեպտեմբերին Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից անկացված էլեկտրոնային հարցման արդյունքում ուսանողները գնահատել են դասախոսական կազմի աշխատանքը և ակադեմիական ազնվությունը: Դասախոսական կազմի աշխատանքը և ակադեմիական ազնվությունը բարձր է գնահատվել հարցվածների 70%-ի կողմից, միջին՝ 25%-ի և ցածր՝ 5%-ի կողմից: Ուսանողների կողմից դասախոսական կազմի աշխատանքը գնահատելիս արձանագրվել էին գոհունակության և դժգոհության դեպքեր: Հարկ է նշել, որ դժգոհության որոշ դեպքեր Քոլեջը փորձել էր լուծել: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներից շատերը իրազեկված չէին հարցման արդյունքներից:

Դասախոսի գնահատման մյուս մեխանիզմը դասախոսի կողմից ինքնագնահատման թերթիկն է, որի հիմնական մեթոդը՝ հստակ մշակված հարցաշարով ինքնագնահատման թերթիկների լրացումն է: Ինքնագնահատման թերթիկների ընդհանուր վերլուծության արդյունքների ուսումնասիրությունից հետևում է, որ դասախոսները հիմնականում կարիք ունեն վերապատրաստումների մասնագիտական, մեթոդական և համակարգչային գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Համաձայն ՌԾ- ի (նպատակի 2)՝ Քոլեջը խնդիր է առաջադրել մշակել և ներդնել պարբերական վերապատրաստումների ընթացակարգեր:

Դասախոսական կազմը մասնակցում է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից կազմակերպված մեթոդական վերապատրաստումներին: 2019-2022թթ. վերապատրաստմանը մասնակցել է 31 դասախոս: Քոլեջը 2022 թ. նոյեմբերին անցկացրել է 2 ներքին վերապատրաստում՝ «Դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդներ» թեմայով, որը հիմնականում կազմակերպվել է սկսնակ դասախոսներին աջակցություն ցուցաբերելու նպատակով, և «Մոդուլային ուսուցման

ուսումնական նյութերի մշակում» թեմայով: Վեջիններիս ընդհանուր թվով մասնակցել են 35 դասախոս:

Փորձագիտական այցի ընթացքում Քոլեջի ներկայացուցիչները նշեցին, որ առկա է հանրակրթական առարկաներ դասավանդող դասախոսների մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտություն, ինչպես նաև անձնակազմի՝ անգլերեն լեզվի իմացության ոչ բավարար մակարդակ: Վերջիններիս ուղղությամբ պլանավորվում է իրականացնել ներքին վերապատրաստումներ:

Հարկ է նշել նաև, որ հանրակրթական բաղադրիչի մեկ դասախոս, մասնակցելով ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման գործընթացին, որը սահմանված է «Հանրակրթական մասին» օրենքով, ստացել է տարակարգ (որակավորման տարակարգ ստացած ուսուցչին տրվում է համապատասխան հավելավճար ուսումնական հաստատությանը հաստատված միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով) և լավագույն փորձի տարածման նպատակով Քոլեջում անցկացրել է սեմինար: Եվս 6 դասախոս 2018-2022 թթ. անցել են վերապատրաստումներ ՈԱԱԿ-ի, «Save the children» կազմակերպության կողմից, ինչպես նաև մասնակցել հետևյալ վերապատրաստման դասընթացներին՝ Զբոսաշրջություն, Ձեռներեցություն, ԱՏՀ հիմունքներ և տարածական տվյալների բազաներ, Աստղագիտություն և աստղաֆիզիկա, կարիերայի կառավարման աշխատանքները ՄԿՈՒ հաստատություններում և այլն:

Քոլեջը նշում է, որ Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, Քոլեջի ուսանող-փորձագետները, ինչպես նաև փորձագիտական խմբի քառօրյա այցն անուղղակի կերպով նպաստել են անձնակազմի վերապատրաստմանը Որակի մշակույթն ըմբռնելու և այսուհետև ՊԻԳԲ շրջափուլը կիրարկելու ուղղությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Ֆրեդա» Հաշվապահական կազմակերպության գործատուն նախաձեռնել է հասարակական հիմունքներով անցկացնել վերապատրաստում «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ի երկու դասախոսի համար ՀԾ և 1C հաշվապահական ծրագրերի կիրառությունը բարելավելու նպատակով: Վերապատրաստումը պլանավորվել է անցկացնել կազմակերպությունում՝ արձակուրդային շրջանում:

Քոլեջում կրթական ծրագրերի իրականացման համար ներգրավված են 50 դասախոսներ (41 հիմնական, 9 համատեղող), 5 վարչական, 16 ուսումնաօժանդակ և 15 տեխնիկական աշխատողներ: Քոլեջի վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը գործում է պաշտոնի անձնագրերին համապատասխան:

Քոլեջի կողմից ներկայացված վերջին 3 տարիների դասախոսական կազմում տեղի ունեցած դինամիկ փոփոխությունների վիճակագրությունից արձանագրվում է 2019–2023թթ. ժամանակահատվածում Քոլեջի դասախոսների ընդհանուր թվի աճ՝ 37-ից մինչև 54, ընդ որում՝ աճել են թե՛ հիմնական, թե՛ համատեղությամբ դասավանդողների թվաքանակները: Դիտարկվող ժամանակահատվածի բոլոր տարիներին դասախոսական կազմում անհամեմատ մեծ է իգական սեռի ներկայացուցիչների տեսակարար կշիռը, որը 2023թ. կազմել է 80,3%: Տարեցտարի աստիճանաբար աճել է երիտասարդ դասախոսների թիվը: Այս միտումը պայմանավորված է նաև ՄՈՒՀ-ում նոր մասնագիտությունների ներդրմամբ: Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի

ապահովում» ՄԿԾ-ում առկա է մասնագետների հոսունություն, ինչը պայմանավորված է ցածր աշխատավարձով:

2023թ. Քոլեջում ներդրվել է «ՊԴ կազմի ներգրավման և կայունության ապահովման քաղաքականություն», համաձայն որի՝ Քոլեջի ռազմավարական նպատակների ձեռքբերման հարցում գերակա դեր է խաղում դասախոսական անձնակազմի ներգրավումը կրթական գործընթացներում և դրանց կայունության ապահովումը: Քոլեջի ղեկավարության կողմից կադրային ներուժի կայունության պահպանման հիմնական գործիք է դիտվում աշխատավարձերի աճը: Ակնհայտ է վերջին 5 տարիներին աշխատանքի վարձատրության աճող դինամիկան, որը պայմանավորված է դասախոսի մեկ ժամի արժեքի վերանայմամբ, ամբիոնի վարիչների, կուրսղեկների և առարկայախմբերի ղեկավարների հավելավճարների տրամադրմամբ, ինչպես նաև ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձերի չափի աճով:

Քոլեջի ՌԾ-ում ամրագրված սահմանված նպատակների իրականացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցում (կետ՝ 17,18) նշվում է դասախոսների մասնագիտական զարգացման և խրախուսման համակարգի ներդրման մասին:

2023թ-ին հաստատվել է «Դասախոսական կազմի գործունեության գնահատման» կանոնակարգը, որը դեռևս չի գործարկվել, և պլանավորվում է կիրառել 2023-2024 ուստարում, ինչի հիման վրա գործելու է դասախոսների աշխատանքի վարձատրության տարբերակված համակարգ և հավելավճարների տրամադրում:

2023 թ. նախահաշվով Քոլեջը որոշակի գումար է հատկացրել աշխատակազմի մասնագիտական զարգացման համար:

Երիտասարդ դասախոսների մասնագիտական առաջընթացի գործում կարևոր դեր է խաղում մենթորության ինստիտուտը, որը միտված է ավագ գործընկերների կողմից երիտասարդներին փորձի փոխանցմանը և ուսումնամեթոդական աջակցության ցուցաբերմանը: Այս գործում կարևոր դերակատարություն ունեն Քոլեջի մեթոդմիավորումը և մասնագիտական ամբիոնները: Մենթորության գործիք Քոլեջը դիտարկում է նաև դասալսումները և ներքոլեջային վերապատրաստումները:

Համաձայն կազմակերպական կառուցվածքի՝ Քոլեջն իր առաքելության և խնդիրների լուծման համար ունի վարչական և ուսումնաօժանդակ կազմ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023թ–ից Քոլեջն ունի կրթության որակի պատասխանատուի կարիք, ներկայումս այդ գործառույթը իրականացվում է այլ աշխատակցի կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Դրական է գնահատվում նաև, որ դասախոսական անձնակազմի ընտրությունը Քոլեջը 2021թ. դեկտեմբերից սկսած իրականացնում է մրցութային կարգով: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ դասախոսական կազմի մրցութային կարգի բանավոր քննության հարցաշարերի և հարցատոմսերի կազմման գործընթացն ունի կանոնակարգման անհրաժեշտություն: Հաշվի առնելով Քոլեջում միջին մասնագիտական կրթական ծրագրերի բազմազանությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ

է, որ Քոլեջը սահմանի դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտական մոդուլների, ինչի շնորհիվ Քոլեջը հնարավորություն կունենա ընտրելու անհրաժեշտ կարողություններ ունեցող դասախոսներ:

Դրական է գնահատվում, այն փաստը, որ Քոլեջում սահուն կերպով իրականացվում է դասախոսական անձնակազմի սերնդափոխություն, ինչը վկայում է այն մասին, որ Քոլեջի ՊԴ անձնակազմը համալրվում է նոր կրթական մեթոդների և դասավանդման տեխնոլոգիաների տիրապետող երիտասարդ կադրերով:

Դրական է, որ Քոլեջում որոշակիորեն գործում են դասախոսների մասնագիտական որակները գնահատող մեխանիզմներ: Փորձագիտական խումբը դրական է համարում դասալսումների պլանավորումն ու իրականացումը, ինչը կարող է նպաստել դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության բարելավմանը, կազմակերպական, դասախաոս-ուսանող հարաբերությունների ձևավորմանը, դասը կազմակերպելու և վարելու համար ժամանակակից մեթոդներ կիրառելու ունակությանը:Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ դասալսման արդյունքների վերլուծությունը հիմնականում նկարագրական է և նախանշված չեն դասախոսի, ինչպես նաև դասապրոցեսի բարելավման ենթակա կողմերը: Հարկ է նշել, որ Քոլեջը այդ խնդիրը մատնանշել է դեռևս 2019-2020 ուստարում, սակայն մինչ այսօր այդ ուղղությամբ իրականացվող բարելավման աշխատանքները նկատելի չեն: Դրական են գնահատվում ՈՆԱԿ-ի կողմից անցկացված ոչ պարբերական դասախոսական անձնակազմի գնահատման հարցումները, որոնց արդյունքում վեր են հանվել դասախոսական անձնակազմի որոշակի խնդիրներ, ինչպես նաև որոշ դասախոսներ ստացել են բարոյական խրախուսանքներ: Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որպեսզի Քոլեջը դասախոսների շրջանում քայլեր ձեռնարկի դասախոսական հարցումների վերլուծության արդյունքների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

Դրական է գնահատվում, որ Քոլեջի դասախոսական կազմը տարբեր ծրագրերի շրջանակներում մասնակցել է վերապատրաստումների, սակայն մտահոգիչ է, որ դասախոսական կազմի վերապատրաստումները հիմնականում եղել են մեթոդական բնույթի: Մասնագիտական բնույթի վերապատրաստումների սակավությունը կարող է խոչընդոտել ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջը 2022 թ-ից առավել արդյունավետ համագործակցում է գործատուների հետ դասախոսների նեղ մասնագիտական զարգացման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գործատուների մոտ վերապատրաստումներ անցնելու նպատակով:

Գովելի է, որ Քոլեջն իրականացնում է նաև ներքոլեջային վերապատրաստումներ, սեմինարներ, ինչը նաև նպաստում է լավագույն փորձի տարածմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ դրական է վերջին 5 տարիներին աշխատանքի վարձատրության աճող դինամիկան, ինչը Քոլեջը դիտարկում է կադրային ներուժի կայունության պահպանման կարևորագույն գործիք:

Դրական է, որ մենթորության շրջանակներում կարևոր դերակատարություն ունեն Քոլեջի մեթոդմիավորումը և մասնագիտական ամբիոնները, որոնք ցուցաբերում են ուսումնամեթոդական աջակցություն:

Փորձագիտական խումբը ակնկալում է, որ Քոլեջը նոր ուսումնական տարում գործարկելու է նոր ներդրված «Դասախոսական կազմի գործունեության գնահատման» կանոնակարգը, ինչի հիման վրա պետք է կիրառվի դասախոսների աշխատանքի վարձատրության տարբերակված համակարգ և հավելավճարների տրամադրում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊՀՏՔ-ն կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող կայուն դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմ, ձեռնարկում է երիտասարդ կադրերի ներգրավման և առաջխաղացման համար հստակ քայլեր, ներդրել է դասախոսական կազմի գործունեության գնահատման համար խրախուսման մեխանիզմներ, դասախոսական կազմում նկատվում է լավագույն փորձի տարածման մշակույթ, ձեռնարկվում են քայլեր դասախոսական կազմի կայունության ապահովման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՀՏՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: ԵՊՀՏՔ ինքնավերլուծությունում նշված է, որ ՄՈՒՀ-ն իր հետազոտական և նորարարական գործունեության ակտիվացման համար նպատակ ունի ապահովել ուսանողների և ՊԴ կազմի ներգրավումը հետազոտական աշխատանքներում, խրախուսել հետազոտությունների միջոցով նոր գիտելիքի ձևավորումը և կիրառումը ուսուցման գործընթացում՝ հատկապես կարևորելով քոլեջի համար հիմնարար հանդիսացող մասնագիտությունների հետազոտական ուղղությունները: Հայտարարված նպատակին հասնելու համար 2022-2027թթ. ՌԾ-ի 3-րդ նպատակի 2-րդ կետում խնդիր է դրվել Քոլեջի հետազոտական կարիքներին համապատասխան արդիականացնել և զարգացնել հաստատության ուսումնական և լաբորատոր բազան:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ թե՛ մեթոդմիավորման և թե՛ մասնագիտական ամբիոնների վերջին ուսումնական տարվա աշխատանքային պլաններում մշտապես առկա են հետազոտական գործունեության հիշատակումները, թեկուզև ընդհանրական բնույթի ձևակերպումներով, ինչպես օրինակ՝ ուսումնական գործընթացում հետազոտությունների արդյունքների կիրառման կարևորումը, ուսանողներին

հետազոտություններում ակտիվ ներգրավելու համար համապատասխան պայմանների ստեղծումը, սեփական հետազոտական մշակումները գործնական կիրառման դաշտ ներմուծելու կարևորությունը։

Քոլեջն ունի համապատասխան մարդկային ռեսուրս ի դեմս ՊԴ կազմի և ուսանողների, որոնք այս կամ այն չափով ներգրավված են հետազոտական գործունեության մեջ։

Սեփական նյութական ռեսուրսային բազայից բացի, Քոլեջը հնարավորություն ունի իր հետազոտական աշխատանքներն իրականացնել Երևանի երեք բուհերում (Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան և Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան), որոնց հետ կնքված համագործակցության համաձայնագրերն ուղղակիորեն սահմանում են համալսարանների բազայի վրա համատեղ հետազոտական աշխատանքների իրականացումը։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցերից պարզ դարձավ, որ Քոլեջում տարվում է որոշակի աշխատանք հետազոտությունների իրականացման և զարգացման քաղաքականության և ընթացակարգերի մշակման ուղղությամբ, մասնավորապես ընդունվել է Ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքների կատարման կանոնակարգ։ Չնայած կանոնակարգի վերնագրին, դրանում մշակված դրույթները վերաբերում են միայն ուսանողների ուսումնական գործառույթների շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքներին, և միայն 1-ին բաժնի 1.3 կետում նշված է, որ հետազոտական աշխատանքը դասախոսների և ուսանողների համատեղ գործունեությունն է։ Սույն կանոնակարգով սահմանվում են ուսանողների հետազոտական աշխատանքների կատարման նպատակներն ու խնդիրները, տրված են հետազոտական բաղադրիչի նկարագրությունը և աշխատանքների գնահատման չափանիշները։

Վերջին տարվա ընթացքում ԵՊՀՏՔ-ն ինստիտուցիոնալ մակարդակում է անդրադարձել նաև հետազոտական գործունեության պլանավորման հարցին, ինչի արդյունքում տեսանելի է հետազոտական ոլորտում երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման անմիջական կապը։ Օրինակ՝ երկարաժամկետ պլանավորման մակարդակում հետազոտությունների ոլորտին առնչվող խնդիրներն արծարծված են Քոլեջի Ռազմավարական ծրագրում (նպատակ 3, կետ 2) և մեթոդմիավորման 2022-2027 թթ. զարգացման ռազմավարական երկարաժամկետ ծրագրում, որի 2-րդ բաժինն ամբողջությամբ նվիրված է հետազոտական աշխատանքին։ Կարճաժամկետ պլանավորումն արտացոլված է մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանում, որտեղ նշվել են դասախոսների և ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների կատարման պահանջները և պլանավորվել է մեթոդական աջակցության տրամադրումը։ Այնուհետև, 2022-2023 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակների ուսումնական գործընթացի արդյունքների հաշվետվություններից տեսանելի է, որ 2022թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել է ուսուցման գործընթացում հետազոտական բաղադրիչի ներմուծում, որի արդյունքում մոդուլային ուսումնական ծրագրերի ուսումնառության արդյունքների ապահովման բաժիններում ավելացվել են անհատական աշխատանքներ և զեկույցներ։ Իսկ նոյեմբեր ամսվա ընթացքում մշակվել և ներկայացվել է դասախոսների և ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների կատարման ուղեցույցը, որից հետո հաստատվել է

անհատական-հետազոտական աշխատանքների թեմաների ցանկը և կազմվել է դրանց կատարման վերահսկողության ժամանակացույցը։

Փորձագիտական այցերից պարզ դարձավ, որ հաջորդ ուսումնական տարում մասնագիտական ամբիոններում պլանավորվել է անցկացնել գործնական բնույթի հետազոտական սեմինարներ և վարպետաց դասեր: Նաև աշխատանքներ են տարվում ներգրավելու արտաքին շահակիցներին ավարտական աշխատանքների թեմաների ընտրության և դրանց հետազոտական մասերի ղեկավարման ուղղությամբ։

2022թ. օգոստոսին հաստատվել է «Հետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքների մեթոդական ցուցումներ» ուղեցույցը, որում հիմնավորվում է ՆՍՀ՝ նախագծային-ստեղծագործական-հետազոտական մեթոդով ուսուցման իրականացման եղանակը։ Ցուցումներում մշակված են ՆՍՀ սկզբունքով կատարվող հետազոտական աշխատանքների իրականացման պահանջները և գնահատման սկզբունքները։ Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՆՍՀ մեթոդով փաստացի հետազոտական աշխատանքներ դեռևս չեն իրականացվել։

Հետազոտական-վերլուծական աշխատանքի իրականացման շրջանակներում միջամբիոնային համագործակցության օրինակ է «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների 3-րդ կուրսերի ուսանողների համատեղ աշխատանքը, որի շրջանակներում մոդելավորողները նախագծել են խոհանոցային պարագաների համախումբ, որի իրականացման համար հաշվապահները կատարել են անհրաժեշտ հաշվարկներ և կազմել են բիզնես պլան։

Մեթոդմիավորման և ամբիոնների զարգացման ռազմավարությունների շրջանակներում դասախոսների կողմից իրականացվում են հետազոտություններ, որոնց արդյունքում ստեղծվում են դասավանդման ուսումնամեթոդական նյութեր, մշակվում են մոդուլների առարկայական ծրագրեր, հրատարակվում են հոդվածներ և ձեռնարկներ։ Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրվել է 2015-2023 թթ. Քոլեջի դասախոսների կողմից հրատարակված հետազոտական աշխատանքների ցանկը, որը ներառում է 46 աշխատանք։ Դրանց թվում կան հետազոտություններ՝ նվիրված վճարահաշվարկային համակարգերի և էլեկտրոնային առևտրի զարգացմանն ու իրավական կարգավորմանը («Ֆինանսներ»), հողակադաստրային շրջանացմանը, հողաշինարարության երկրատեղեկատվական համակարգերին, տարածքների վերակառուցման և կանաչապատման խնդիրներին, գեոդեզիական ցանցերի ձևավորմանը («Քաղաքաշինական կադաստր»), զբոսաշրջության ոլորտում ճարտարապետական ռեկրեացիոն ռեսուրսների դերին («Զբոսաշրջություն», «ԶԲՕԼ»)։ Ավելի մեծ թիվ են կազմում ագրարային, սոցիալ-քաղաքական, պատմաբանական և հոգեբանական ուղղվածության աշխատությունները, սակայն այդ ուղղություններով ՄՈՒՀ-ը մասնագետներ չի պատրաստում։

Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության շրջանակներում Քոլեջի ՊԴ անձնակազմի շրջանում անցկացվել է հետազոտական գործունեության հետ կապված հիմնախնդիրների վերհանմանն ուղղված էլեկտրոնային հարցում։ Ըստ հարցման արդյունքների՝ դասախոսների մեծ մասը կարևորում է հետազոտական գործունեությունը և գտնում է, որ Քոլեջն ապահովում է դրա համար անհրաժեշտ պայմաններ։

2022 թ-ից Քոլեջն իրականացնում է ուսումնառության և հետազոտական գործունեության փոխկապակցման որոշակի աշխատանքներ, այդ թվում՝ մշակելով համապատասխան փաստաթղթեր։ Այսպես, մեթոդմիավորման 2022-2027թթ. զարգացման ռազմավարական երկարաժամկետ ծրագրի 2-րդ բաժնում ուղղակիորեն սահմանված է ներդնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ընթացակարգեր և մեթոդներ, ինչպես նաև առաջադիմող ուսանողներին ընդգրկել ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում։ Ինքնավերլուծության և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջն ունի հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման փորձ, որը հենվում է վերոնշյալ ռազմավարական երկարաժամկետ ծրագրի, ինչպես նաև Ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքների կանոնակարգի և «Հետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքներ» մեթոդական ցուցումների վրա։ ՊԴ կազմի ներկայացուցիչների իրականացրած մի շարք գիտահետազոտական նախագծերում մասնակցություն են ունեցել Քոլեջի տարբեր մասնագիտությունների ուսանողները։ Որպես օրինակ կարելի է նշել «Քաղաքաշինական կադաստր» մասնագիտության 4-րդ կուրսի մի շարք ուսանողների մասնակցությունը դասախոսների կողմից իրականացված գիտական հետազոտությանը՝ երկրատեղեկատվական համակարգերի ներդրման հետ կապված տվյալների մշակման միջոց։

2019-2023 թթ. ընթացիկ ինքնուրույն հետազոտական աշխատանքներ անհատական և խմբային ձևաչափերով իրականացվել են տարբեր մասնագիտությունների ուսանողների կողմից։ Օրինակ՝ «Քաղաքաշինական կադաստր» մասնագիտության ուսանողները հետազոտություններ են իրականացրել Երևանի տարբեր համայնքներում հատակագծման (այդ թվում՝ սեփական բնակավայրերի թաղամասերի հատակագծերի ստեղծման և Քոլեջի շենքի 3D մոդելավորման), անհրաժեշտ տեղագրական տարրերի ուսումնասիրության և կադաստրային քարտեզում եղած անշարժ գույքերի հետ դրանց համեմատության ուղղությամբ։ Իսկ պրակտիկայի շրջանակներում ՀՀ Կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնում տվյալ մասնագիտության II-IV կուրսերի ուսանողները հավաքագրել են գրաֆիկական տեղեկատվություն, հետազոտել են գեոդեզիական ցանցերն ու գոյություն ունեցող խտացման ցանցի կետերը, ուսումնասիրել են ՀՀ անշարժ գույքի ARPIS տեղեկատվական համակարգը։

«Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության ուսանողները կատարել են հետազոտական աշխատանք, որի շրջանակներում կազմվել և անցկացվել է հարցում՝ արդյունքների վերլուծությամբ, ուսումնասիրվել են գործվածքների կազմը, կառուցվածքը և այրման եղանակները, իրականացրել են էսքիզի ուրվագծերի հիման վրա ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ բնության գրկում, ինչպես նաև կատարել են հայկական տարազի առանձնահատկություններին նվիրված հետազոտական աշխատանք։

«ՀՏԱՀԾԱ» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողներն ուսումնական պրակտիկայի ընթացքում կատարել են «Հինգ փոփոխականներից կախված մեկ ելքանի կոմբինացիոն սխեմայի սինթեզում» և «Միկրոպրոցեսորներ՝ երեկ, այսօր, վաղը» թեմաներով հետազոտական աշխատանքներ։ Այլ հետազոտական աշխատանքները կապված են եղել խաղերի ստեղծման, կայքերի պատրաստման, ոսկերչության բնագավառում 3D մոդելավորման, արհեստական բանականության ուսումնասիրության հետ։

Գործող բոլոր ՄԿԾ-ների 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման պահանջներում ներմուծվել է հետազոտական նախագծերի իրականացման բաղադրիչը, ընդ որում «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների դեպքում այդ որոշումը հանդիսացել է անմիջական արձագանք ատեստավորման հանձնաժողովի նախագահի և գործատուների առաջարկություններին: Հաստատված ավարտական հետազոտական թեմաների ցանկերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բոլոր մասնագիտությունների շրջանակներում հետազոտական աշխատանքների ուղղությունները համապատասխանում են ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին և շնորհվող որակավորումներին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հետազոտական աշխատանքների արդիականությունն ապահովելու համար Քոլեջում յուրաքանչյուր տարի վերանայվում են բոլոր մասնագիտությունների ընթացիկ և ավարտական հետազոտական աշխատանքների թեմաները, աշխատանք է տարվում գործատուների հետ ամփոփիչ ատեստավորման հետազոտական թեմաները նախապես հաստատելու և պրակտիկայի հետ կապակցելու ուղղությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը սահմանել է հետազոտական գործունեության իր հավակնությունները և ուղղությունները, որը կարող է նպաստել այս ոլորտի շարունակական զարգացմանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ Քոլեջն իր ռազմավարության մեջ նույնպես շեշտադրի իր նպատակադրումները և դրանց համար սահմանի հստակ քայլեր և ցուցիչներ, որը կարևոր է աշխատանքների մշտադիտարկման և որակի ապահովման համար: Կարևոր է նաև, որ ամբիոններում ոլորտի պլանավորումը հիմնվի կոնկրետ ցուցիչների վրա, որը կնպաստի պլանավորված գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Դրական է դիտվում, որ Քոլեջն իրականացնում է հետազոտական բաղադրիչի ներմուծմանն ուղղված միջոցառումների երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորում, որն արտահայտված է վերից վար՝ «Քոլեջի ռազմավարական ծրագիր– մեթոդմիավորման զարգացման ռազմավարական երկարաժամկետ ծրագիր–ամբիոնների միջնաժամկետ ռազմավարական գործողությունների կատարման պլաններ– մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլան–քոլեջի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակների ուսումնական գործընթացի արդյունքների հաշվետվություններ» շղթայի տեսքով, ինչը նպաստում է հետազոտական գործունեության ոլորտում Քոլեջի նպատակադրումների և ըստ դրանց կատարված աշխատանքների տեսանելիության ապահովմանը և վերահսկողության արդյունավետության բարձրացմանը:

Դրական է, որ Քոլեջի ՊԴ անձնակազմի կողմից մշտապես հրատարակվում են հոդվածներ, մենագրություններ, ձեռնարկներ, ինչը նպաստում է ՄՈՒՀ-ում գիտահետազոտական մտքի ընդհանուր զարգացմանը և կանխում է դասախոսական կազմի հնարավոր մասնագիտական լճացման պրոցեսը: Սակայն այդ աշխատանքների մեծ մասի ոլորտները և թեմատիկան չեն համապատասխանում Քոլեջի մասնագիտություններին: Փորձագիտական խմբի կարծիքով՝ Քոլեջը պետք է հստակեցնի իր հետազոտական

գործունեության թիրախային ուղղությունները, որպեսզի ՊԴ կազմի կողմից իրականացվող հետազոտական աշխատանքի արդյունքները համալրեն թողարկվող մասնագիտությունների համար անհրաժեշտ նյութերի արդի տեղեկատվական բազան և նպաստեն այս ոլորտում սահմանված նպատակների իրագործմանը:

Դրական է, որ 2022 թ.-ից Քոլեջում մշակվել են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ (Մեթոդմիավորման զարգացման ռազմավարական երկարաժամկետ ծրագիր, Ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքների կանոնակարգ, Հետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքներ): Մշակված ընթացակարգերի շնորհիվ հետազոտական գործունեության ուղղությամբ ակտիվացել է դասախոս - ուսանող կապը, որի արդյունքում իրականացվել են մի շարք համատեղ հետազոտական աշխատանքներ: Կարևորվում է նաև ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքը, որն իրականացվել է ինչպես առանձին մասնագիտությունների, այնպես էլ միջամբիոնային համագործակցության շրջանակներում: Նշված աշխատանքները նպաստում են ուսանողների մոտ վերլուծական մտածողության ձևավորմանը:

Պետք է նաև ասել, որ ԵՊՀՏՔ դասախոսների և ուսանողների կողմից իրականացվող հետազոտությունները հիմնականում հանդիսանում են պրակտիկորեն կիրառելի, սակայն փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ դրանց արդյունքները ներդրվեն Քոլեջի դասավանդման և ուսումնառության գործընթացում:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում, որ 2022-2023 ուսումնական տարում բոլոր մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման ձևաչափում ներդրվել է անհատական հետազոտական աշխատանքի բաղադրիչը, թեև դեռև մշակված չեն դրա գնահատման սկզբունքները: Գովելի է նաև, որ ուսանողների հետազոտական աշխատանքների արդիականությունն ապահովելու համար Քոլեջում յուրաքանչյուր տարի վերանայվում են բոլոր մասնագիտությունների ընթացիկ և ավարտական հետազոտական աշխատանքների թեմաները, ինչպես նաև աշխատանք է տարվում հետագայում գործատուների հետ ամփոփիչ ատեստավորման հետազոտական թեմաները նախապես հաստատելու և պրակտիկայի հետ կապակցելու ուղղությամբ: Հետազոտական աշխատանքների իրագործմանը նպաստում են նաև պրակտիկաները, որոնք միտված են այդ թվում ուսանողների վերլուծական մտքի և կարողությունների զարգացմանը և սովորեցնում են մասնագիտական խնդիրների լուծումներում ներդնել ստեղծագործական մոտեցումներ, զարգացնել տեսական գիտելիքի կիրառման կարողությունը գործնական դաշտում ուսումնասիրություններ իրականացնելու և հավաստի արդյունքներ ստանալու համար:

Քոլեջում պլանավորվում է սկսել հրատարակել «Հետազոտական աշխատանքների ժողովածու», որը կհրապարակայնացնի և կխրախուսի ԵՊՀՏՔ-ում իրականացվող հետազոտական աշխատանքը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊՀՏՔ-ն ներդրել է հետազոտական գործունեության իրականացման ընթացակարգեր՝ մշակելով համապատասխան կանոնակարգեր և մեթոդական ցուցումներ, ունի հետազոտական աշխատանքներ կատարելու մասնագիտական ներուժ, ինչպես նաև ՊԴ անձնակազմի և ուսանողների կողմից հետազոտական աշխատանքներ

կատարելու դրական փորձ, աշխատում է հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցման ուղղությամբ, նպատակադրել է բարելավել հետազոտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսները, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է բավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Որակյալ ենթակառուցվածքների ստեղծումը Քոլեջի 2022-2027թթ. ՌԾ-ի 3-րդ նպատակն է, որի իրականացման գործողություններում նշված է ենթակառուցվածքների զարգացման, նյութատեխնիկական բազայի և գրադարանի արդիականացման կարևորությունը:

Քոլեջի ընդհանուր տարածքը 3100 քառ.մ. է: ՈՒսումնական գործընթացը կազմակերպվում է 2 մասնաշենքերում: Գլխավոր՝ եռահարկ մասնաշենքը, շահագործվում է ամբողջական, իսկ երկրորդը՝ մասնակի: Քոլեջն ունի նաև կից կառույց, նկուղ, որոնք ներկա պահին բարվոք վիճակում չեն:

Քոլեջն ունի 11 միավոր աշխատասենյակ, որը տրամադրված է վարչական կազմին և 30 լսարան: Առկա են 3 առարկայական լսարան՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների համար: «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության համար նախատեսված է 3 արհեստանոց, որոնցից մեկը չի գործում, իսկ մյուս երկուսում ընդհանուր թվով առկա է 21 կարի մեքենա (ուղիղ կարող՝ 10 հատ, եզրակարող՝ 5, կոճակ կարող՝ 2, կոճականցք՝ 2, գաղտնակար՝1, զույգ զարդակար՝ 1), ջերմախոնավային մշակման համար ունիվերսալ արդուկ իր սեղանով, ձևասեղաններ և մանեկեններ:

Քոլեջն ունի 3 կաբինետ համապատասխանաբար նկարչության, ռազմագիտության և պատմության համար: Նկարչության կաբինետը հագեցած է համապատասխան մոլբերտներով, երկրաչափական մարմիններով, նատյուրմորտներով:

Համակարգչային լսարանները 3-ն էին, որտեղ ընդհանուր թվով առկա էին 26 համակարգիչներ, լսարաններից երկուսը ապահովված էին ինտերնետ կապով: Սակայն ինտերնետ կապը հասանելի չէր մյուս լսարանների համար: Քոլեջն ունի 1 մարզադահլիճ, որը զբաղեցնում է 184,2 քառ.մ տարածք, ինչպես նաև երկու հանդերձարան: Մարզադահլիճը փորձագիտական այցի ժամանակ գտնվում էր վերանորոգման ընթացքում: Մարզադահլիճի նախկին վիճակը ցույց տվող նկարների ուսումնասիրությունից ակնհայտ էին մեծ ծավալով մեկնարկած վերանորոգման աշխատանքների բարելավման նկատելի արդյունքները:

Քոլեջն ունի ՆԶՊ կաբինետ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը չունի ուսումնական զենք: Քոլեջը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն ուսումնական զենք ստանալու նպատակով, ինչպես նաև նախատեսել է ՆԶՊ կաբինետում կառուցել մետաղական ճաղավանդակներով ուսումնական զենքի պահոց:

Քոլեջում առկա են ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների շրջանակներում լաբորատոր փորձեր իրականացնելու համար համապատասխան ռեսուրսներ, որոնք պահվում են մեկ ընդհանուր կաբինետում: Կաբինետը վերահսկվում է լաբորանտի կողմից, և համապատասխան ռեսուրսը դասապրոցեսի ապահովման համար տրամադրվում է դասախոսի գրավոր դիմումի համաձայն:

Քոլեջն ունի նաև հանդիսությունների դահլիճ, որը չի շահագործվում և ունի վերանորոգման կարիք:

Քոլեջը չունի լոկալ ջեռուցման համակարգ, ինչպես նաև շենքը գազաֆիկացված չէ: Խնդիրը լուծելու համար 2022 թ. Քոլեջը ձեռք է բերել 20 էլեկտրական տաքացուցիչ, ինչպես նաև պլանավորել է առաջիկայում վերանորոգել տանիքը և տեղադրել արևային վահանակներ՝ նվազեցնելով էներգիայի ծախսերը:

Քոլեջի գրադարանը զբաղեցնում է 89.7 քառ. մ տարածք, չունի ընթերցասրահ: Գրադարանային ֆոնդում, համաձայն Քոլեջի տրամադրած տվյալների, առկա է 11000 գիրք: Գրադարանային ֆոնդը, ըստ ներկայացված գրականության ցանկերի, մեծ ծավալով թարմացման կարիք ունի, քանի որ գրքերի ճնշող մեծամասնությունը 30-50 տարվա վաղեմություն ունեն: 2022 թ-ից իրականացվում են գրադարանային միջավայրի բարելավման աշխատանքներ, այդ թվում՝ ոչ արդիական և հնամաշ գրականության փոխարինում նոր գրականությամբ, գրադարանային ֆոնդի մի մասի թվայնացում:

Հարկ է նշել, որ 2022 թ. առ այսօր Քոլեջն իր արտաբյուջետային միջոցներով վերանորոգել է 6 լսարան, թվով 77 փայտե հին պատուհաններ փոխարինվել են ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ մետաղեպլաստե եվրոպատուհաններով, ինչպես նաև մալուխների ներքին ցանցը և վարդակները փոխարինվել են նորերով: Այնուամենայնիվ դեռևս չվերանորոգված լսարաններ, սանհանգույցներ կան, որոնց փոխարինումը ևս ներդրումներ է պահանջում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից առաջադրված բուֆետի բացակայության խնդիրը Քոլեջը փորձել է լուծել այլընտրանքային՝ թեթև սնունդ մատուցող շրջիկ ծառայության միջոցով:

Քոլեջն աշխատում է պետական ֆինանսավորմամբ և ունի արտաբյուջե: Այլ ֆինանսական մուտքեր Քոլեջը չունի: Քոլեջը յուրաքանչյուր ֆինանսական տարվա սկզբում իրականացնում է ֆինանսական ռեսուրսների բաշխում տարեկան նախահաշվի համաձայն: Կազմում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ և ներկայացնում է բյուջեի կատարողականի մասին հաշվետվություն: Քոլեջի բյուջետային մուտքերի գերակշիռ մասն ապահովվում է պետական ֆինանսավորման հաշվին՝ 2023թ-ին կազմելով շուրջ 75.01 %, արտաբյուջետային մուտքերը՝ 24.99%, որոնք գոյանում են միայն ուսանողների վարձավճարներից: Հարկ է նշել, որ 75.01%-ի 14.4%-ը 2021, 2022 թթ-ից մնացած ազատ դրամական միջոցներն են: Քոլեջը նշում է, որ 2023 թ. պետական բյուջեն նվազել է:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021, 2022 թթ. տարեվերջերին բյուջեի հավելուրդը հանգեցրել է պետական ֆինանսավորման կրճատման:

2023 թ. նախահաշվով ծախսերը պլանավորվել են՝ հիմք ընդունելով ֆինանսական կարողությունները:

Քոլեջի վերջին երեք տարիների հոսքերի վերլուծությունից հետևում է, որ տարեցտարի աճել են Քոլեջի այլ եկամուտները, ինչը պայմանավորված է երեք հանգամանքով՝ նոր մասնագիտությունների ներդրմամբ, վճարովի համակարգում սովորող ուսանողների թվաքանակի աճով, վարձավճարների ավելացմամբ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2022 թ. համեմատ 13.38 %-ով 2023 թ. աճել են այլ եկամուտները:

Քոլեջի ծախսային հոդվածն ունի հետևյալ կառուցվածքը՝ 2023թ-ի տվյալներով աշխատանքի վարձատրությունը 81.06%, ապրանքների ձեռքբերման ծախսեր՝ 9.19%, կրթաթոշակներ՝ 8.27%, այլ ծախսեր՝ 1.48%:

Ֆինանսական փաստաթղթերի (նախահաշիվ, գնումների պլան) ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջն աստիճանաբար համալրում է պակասող գույքը, պարագաները, սարքավորումները, վերանորոգման հետ կապված շարունակական ծախսեր է իրականացնում և ունի նյութատեխնիկական բազայի բարելավմանն ուղղված ֆինանսական միջոցների ծախսերի պլանավորում մինչև 2027 թ. ներառյալ:

Քոլեջն ունի Հաշվապահական հաշվառման քաղաքականություն: 2023 թ. ներդրել է նաև Ռեսուրսների բաշխման ընթացակարգ, որը սահմանում է քոլեջի ռեսուրսների կառավարման կարգը, ներառում է պլանավորման, իրականացման և արդյունավետության գնահատման գործընթացները: Քոլեջի ֆինանսական միջոցների կառավարման և դրանց նպատակային բաշխման հիմքում ընկած են տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը՝ հաշվապահության կողմից հաշվետվության ներկայացման միջոցով՝ աշխատավարձ, պետական հարկեր, սոցիալական վճարներ, կոմունալ վճարներ:

Ռեսուրսների բաշխման մեխանիզմներից է առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա գնումներ կատարելը: Բյուջեի նախահաշիվներում հաշվի են առնվում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պահանջը, ռազմավարական նպատակներին ուղղվող միջոցների անհրաժեշտությունը, արտացոլվում են գալիք տարվա պլանավորվող մուտքերը և ֆինանսների բաշխման ուղղությունները, որոնք քննարկվում են ԿԿԽ նիստում և հավանության դեպքում հաստատվում ԿԿԽ-ի նախագահի կողմից:

Կատարվող բոլոր տեսակի ծախսերը միտված են Քոլեջի հիմնական գործունեության՝ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Քոլեջում ուսումնական և պրակտիկ գործընթացի համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն: Քոլեջը նախապես պլանավորում է առաջիկա ֆինանսական տարվա համար պահանջվող ռեսուրսները՝ դրանց գնման գործընթացն ըստ օրենքի պահանջի իրականացնելու համար (մրցույթի հայտարարում, մատակարարների ընտրություն և այլն): Ռեսուրսների բաշխումը նախատեսվում և իրականացվում է տարեկան կտրվածքով, քանի որ յուրաքանչյուր ուսումնական տարի ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված և ՀՀ ԿԳՄՍ

նախարարության կողմից հատկացված լիցենզավորման տեղերի քանակի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ փոփոխություններ չեն լինում:

Համաձայն Կանոնադրության՝ Քոլեջում փաստաթղթաշրջանառությունն իրականացնում են քարտուղարությունը, կադրերի բաժինը, հաշվապահությունը և արխիվը: Քոլեջն ունի Փաստաթղթաշրջանառության կանոնակարգ, Արխիվի կանոնակարգ և մատենավարության կանոնակարգ, Կադրերի բաժնի կանոնակարգ, որոնք ներդրվել են 2023 թ.:

Քոլեջում գործում է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Քոլեջի արխիվ են հանձնվում նախորդ տարվա մշտական և ժամանակավոր պահպանմանն ենթակա գործավարության բոլոր փաստաթղթերը, տնօրենի հրամանները, խորհրդակցությունների և նիստերի արձանագրությունները: Տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակման համար գործում է պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն:

2020թ-ից Քոլեջում ընդունելությունը կատարվում է ԿՏԱԿ-ի կողմից ներդրված dimord.emis.am կայքով: 2021-2022 ուստարում Քոլեջում գործարկվել է սովորողների հաշվառման էլեկտրոնային համակարգ:

Քոլեջում գործում են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ենթակառուցվածքներ: Քոլեջի մուտքը հսկվում է անվտանգության աշխատակիցների կողմից, ովքեր ապահովում են ուսանողների և դասախոսների անվտանգ միջավայրը: Հերթապահ պահակների միջոցով վերահսկվում է Քոլեջի մուտքն ու ելքը, և որևէ ուսանող դասապրոցեսի իրականացման ժամերին չի կարող լքել ուսումնական հաստատության տարածքն առանց կուրսղեկի և ծնողի իմացության, ինչպես նաև միջանցքներում սահմանվում է կարգապահության հսկման հերթապահություն:

Քոլեջի միջավայրը հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ ուսանողների համար: Քոլեջն ունի 5 ԿԱՊԿՈՒ ուսանող, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ ուսանողները հենաշարժողական խնդիրներ չունեն:

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է Քոլեջի քաղաքացիական պաշտպանության շտաբը՝ քաղպաշտպանության տարհանման հանձնաժողովների և խմբերի միջոցով:

Քոլեջի յուրաքանչյուր հարկում տեսանելի վայրում տեղադրված են տարհանման սխեմաներ: Շենքն ունի տարհանման ելքեր: Շտաբը իրականացնում է ուսուցողական գործընթացներ՝ փորձնական տարհանում: Առկա են հակահրդեհային պաշտպանության սարքավորումներ, կրակմարիչներ:

Անվտանգության նկատառումներից ելնելով յուրաքանչյուր լսարանում տեղադրված էին ապահովիչներ/ հոսանքահատիչներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նկուղային հարկը գտնվում է ոչ սարքին վիճակում, չնայած որ Քոլեջը 2022 թ. սկսած ջանք է գործադրում ազատվել նկուղում գտնվող տասնյակ տարիների անպիտան գույքից՝ գիտակցելով ապաստարան ծառայելու համար նկուղի անհրաժեշտությունը:

Քոլեջի անձնակազմի առողջական վիճակի վերահսկողությունն իրականացվում է ամենամյա բուժզննումների միջոցով, որոնց արդյունքները գրանցվում են սանիտարական գրքույկներում:

Փորձագիտական այցի ժամանակ Քոլեջի բուժկետի համար հատկացված տարածքը գտնվում էր վերանորոգման փուլում: Մինչ այդ Քոլեջը բուժկետ չի ունեցել, սակայն Քոլեջում առկա էին առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղամիջոցներ: Առաջին բուժօգնության պատասխանատուն, համաձայն 2023 թ. հաստիքացուցակի, բուժքույրն է, որի գործառույթները և պարտականությունները սահմանված են բուժքույրի պաշտոնի անձանգրով: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուժքույրը աշխատել է 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակում որոշակի ժամանակահատված, այնուհետև ազատվել է աշխատանքից: Հարկ եղած դեպքում Քոլեջը նաև համագործակցում է տարածքային պոլիկլինիկայի հետ: Համաձայն Քոլեջի 2023 թ. հաստիքացուցակի՝ Քոլեջն ունի մանկավարժ-հոգեբանի հաստիք, սակայն փորձագիտական այցից նույնպես պարզ դարձավ, որ մանկավարժ- հոգեբանը աշխատել է 2022 թ. սեպտեմբեր ամսին:

Ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման նպատակով Քոլեջը պլանավորել է որպես բարելավման ուղղություն արդյունավետության գնահատման գործիքների, կառուցակարգերի, ինչպես նաև ընթացակարգերի մշակումն ու իրականացումը: Ռեսուրսներով ապահովվածության վերաբերյալ անցկացված հարցման արդյունքների համաձայն՝ Քոլեջի ուսանողների 64%-ը և դասախոսական կազմի 66,7%-ը բավարարված է ռեսուրսներից:

2023թ. ապրիլին ՈՆԱԿ-ի կողմից անցկացվել է «ԵՊՀՏՔ մատուցած ծառայությունների գնահատում ուսանողների կողմից» հարցումը: Հարցման վերլուծության արդյունքում Քոլեջի շենքային պայմաններից 34.5%-ը բավարարված չէ, տեխնիկական հագեցվածությունից՝ 33%-ը, իսկ գրադարանային հագեցվածությունից՝ 11.5%-ը, 50.4%-ն էլ չի օգտվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը 2022-2027թթ. ՌԾ-ում որպես Քոլեջի զարգացման ուղղություն առանձնացրել է ուսումնառության համար կարևոր և անհրաժեշտ նպաստավոր ենթակառուցվածքների ապահովումը: Փորձագիտական այցից և ռեսուրսների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջն իր ՄԿԾ-ներն իրականացնելու համար ունի համապատասխան միջավայր՝ մասնագիտական կաբինետներ, լսարաններ, կահավորանք, որոնք կարող են բավարարել կրթության իրականացման համար անհրաժեշտ պահանջները: Փորձագիտական խումբը գտնում է, որ առկա նյութատեխնիկական բազան նպատակահարմար կլինի նաև օգտագործել կարճաժամկետ ծրագրեր իրականացնելով, ինչն էլ կնպաստի Քոլեջ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելուն: ՈՒսումնասիրելով Քոլեջի 2022, 2023 թթ. բյուջեի ծախսային հոդվածները, ինպես նաև գնումների պլանները՝ դրական է գնահատվում, որ Քոլեջը ֆինանսական միջոցներ է հատկացրել նյութատեխնիկական բազայի վերանորոգման և բարելավման նպատակով, որն էլ երաշխիքներ է ստեղծում բարենպաստ ուսումնական միջավայրի ձևավորման և կայունության համար:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև, որ Քոլեջը հատուկ ուշադրություն դարձնի գրադարանի համալրման ուղղությամբ, ինչը կնպաստի թարմ և արդի գրականության կիրառմանը կրթական գործընթացում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ չնայած այն փաստին, որ Քոլեջը չի ունեցել բուժկետ և բուֆետ, սակայն որոշակի միջոցառումներ է ձեռնարկել այդ բացը լրացնելու նպատակով, քանի որ համագործակցում է տարածքային պոլիկլինիկայի հետ, ինչպես նաև թեթև սնունդ մատուցող ծառայության հետ:

Դրական է, որ Քոլեջն ունի ռեսուրսների բաշխման մեխանիզմ, որի հիմքում ընկած է տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը: Սակայն մտահոգիչ է, որ վերջին տարիներին բաշխված բյուջեն Քոլեջը չի կարողացել արդյունավետ կառավարել՝ նպաստելով իր առջև ծառացած խնդիրների տարեցտարի լուծմանը: Նախահաշիվներով սահմանված բյուջեի լիարժեք և արդյունավետ կառավարման դեպքում Քոլեջը զերծ կմնար պետական ֆինանսավորման կրճատումից: Փորձագիտական խումբը լիահույս է, որ 2023 թ. ներդրված «Ռեսուրսների բաշխման ընթացակարգը» այսուհետ կնպաստի Քոլեջի ռեսուրսների պլանավորման, իրականացման և արդյունավետության գնահատմանը:

Դրական է, որ Քոլեջն ունի լաբորատոր աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներ և հնարավորության սահմաններում լաբորատոր փորձերը կազմակերպում է լսարաններում, սակայն մտահոգիչ է, որ բացակայում են լաբորատորիաները, որոնց առկայության դեպքում հնարավոր կլինի լիարժեք և անվտանգ իրականացնել ուսումնական գործընթացով սահմանված անհրաժեշտ լաբորատոր աշխատանքները:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջի միջավայրը ընդհանուր առմամբ անվտանգ է, սակայն միևնույն ժամանակ նշում է, որ շենքը հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում ներդրված են ռեսուրսներից բավարարվածության ստուգման որոշ մեխանիզմներ, սակայն դրանք ևս ունեն բարելավման կարիք շահակիցների առավել լայն շրջանակի ներգրավման համար: Հարցումների արդյունքների վերլուծությունը թույլ կտա վերհանելու առկա խնդիրները և հստակեցնելու ռեսուրսների պլանավորման հետագա գործընթացները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊՀՏՔ-ում կրթական ծրագրերի իրականացման համար ձևավորված է ուսումնական միջավայր, Քոլեջը հատկացնում է ֆինանսական միջոցներ իր գործունեության իրականացման համար, ռեսուրսային բազան ապահովում է ուսումնական գործընթացի իրականացումը, վերջին տարում իրականացվել են բարեկարգման և ռեսուրսների համալրման աշխատանքներ, Քոլեջն ապահովում է ներքին շահակիցների անվտանգությունը, դասախոսների ու ուսանողների մեծ մասը բավարարված է ռեսուրսներից, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է բավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Սահմանված կարգով Քոլեջը ներկայացնում է հաշվետվություններ ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությանը, Պետական եկամուտների կոմիտեին, Վիճակագրական կոմիտեին և այլ պետական գերատեսչությունների: Քոլեջի տնօրենը ներկայացնում է ստորաբաժանումների կատարողականները ամփոփող տարեկան հաշվետվություններ քոլեջի կառավարման խորհրդին, որտեղ ներգրավված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ: Քոլեջում ներքին շահակիցների հաշվետվողականությունը տնօրենի առջև ապահովվում է ներքին հաշվետվողականությունն ապահովող գրաֆիկական սխեմայի համաձայն, որը ներկայացնում է ներքնից վերև հաշվետվողականության ապահովման ճանապարհը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ներքին հաշվետվողականությունն ապահովող գրաֆիկական կառուցվածքը չի բխում քոլեջի կառուցվածքային սխեմայից, մասնավորապես՝ հաշվետվողականության կառուցվածքում ուսումնական մասի վարիչները հաշվետու են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին, սակայն կառուցվածքային սխեմայում ուսումնական մասի վարիչները բացակայում են: Ըստ կառուցվածքային սխեմայի՝ Ուսանողական, Մանկավարժական, Տնօրինական խորհուրդները ղեկավարվում են տնօրենի կողմից, սակայն հաշվետվողականության ապահովման սխեմայում չկան և գրավոր հաշվետվություններ չեն ներկայացնում:

Ստորաբաժանումների հաշվետվությունները չեն վավերացվում կոլեգիալ սկզբունքով, չեն լսվում ոչ մի խորհրդում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք չունեն համընդհանուր տեսք, չունեն որակական վերլուծություններ, թվային տվյալներ հիմնականում չեն արտացոլում: Հարկ է նշել նաև, որ հաշվետվությունները չեն արտացոլում քոլեջի առաջնահերթ ռազմավարական գործողությունների կատարողականները, չեն բարձրացնում խնդիրներ:

Քոլեջում չի գործում վերևից ներքև հաշվետվողականության ապահովման սահմանված համակարգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումները չեն տեղեկանում մյուս ստորաբաժանումների կատարողականներին, չնայած, որ դրանք ամփոփվում են տնօրենի հաշվետվության մեջ: Հասարակության առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմ է քոլեջի կայքէջը /https://yshtc.com//, սակայն այն վերազինման փուլում է, հաշվետվությունների տեղադրման համար հատված դեռևս հատկացված չէ և կայքէջը դեռևս չի ծառայում որպես արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմ: Քոլեջն ընթացակարգերի հասանելությունը հասարակությանը ապահովելու համար կայքէջի «Փաստաթղթեր» բաժնում տեղադրել է իր կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները, նախորդ և գործող ռազմավարական ծրագրերը: Ըստ ՌԾ-ում սահմանված նպատակների իրականացմանն ուղղված գործողությունների պլան-ժամանակացույցի՝ քոլեջը պլանավորել էր 2022-2023

ուսումնական տարում կայքէջը թարմացնել «0613.02.5-Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ն ուսումնասիրող ավարտական կուրսի ուսանողների օգնությամբ, սակայն վերազինման արդյուքները դեռևս չես նկատվում:

Հարկ է նշել, որ Քոլեջում իրականացվող գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը հասարակությանը ապահովելու գործում իր ուրույն դերն ունի ֆեյսբուքյան պաշտոնական էջը, որտեղ ներկայացվում են հրապարակումներ Քոլեջում ընթացող միջոցառումների, դասընթացների, ինչպես նաև ուսանողական կյանքի և Քոլեջի ձեռքբերումների վերաբերյալ:

Համաձայն 2022-2027թթ. Ռազմավարական Ծրագրի՝ Քոլեջի նպատակներից է հասարակության հետ կապերի զարգացումը և շահակիցների տարբեր խմբերի հետ հետադարձ կապի ապահովումը: Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջը նախատեսել է ներդնել հաստատությանը հասցեագրված նամակներին պաշտոնական էլ. փոստի միջոցով արագ արձագանքման համակարգ: Հետադարձ կապի ապահովման տեսանկյունից Քոլեջը կարևում է նաև ֆեյսբուքյան էջի առկայությունը, որի միջոցով շահակիցները հնարավորություն ունեն իրենց կարծիքներն ու առաջարկությունները հղել Քոլեջին: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Ֆեյսբուքյան էջին ուղղված նամակները կարճ ժամկետներում ստանում են պատասխաններ, մինչդեռ էլ. փոստին ուղղված նամակներին ոչ միշտ է Քոլեջը պատասխանում:

Հետադարձ կապի ապահովման նպատակով արտաքին շահակիցների շրջանում հարցումներ չեն իրականացվում, չի վերլուծվել հետադարձ կապի ապահովման գործիքների արդյունավետությունը:

Համաձայն ինքնավերլուծության՝ Քոլեջում հասարակությանը գիտելիքների փոխանցումն իրականացվում է կազմակերպվող միջոցառումների միջոցով:
Քոլեջում իրականացվել են մարզական հուշամրցաշարեր՝ շախմատի, վոլեյբոլի միջքոլեջային մրցույթ, առաջին բուժօգնության դասընթաց, հոգևոր միջոցառումներ, տարբեր ոլորտի մասնագետների հետ հանդիպումներ, որոնց հրավիրյալ բանախոսները ներկայացնում են հաջողության հասնելու սեփական փորձն ու ուղին: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ միջոցառումները պարբերական բնույթ չեն կրում, փակ են, չեն ընդգրկում ունկնդիրներ քոլեջից դուրս:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում սահմանված են ներքին և արտաքին հաշվետվողականության մեխանիզմներ, սակայն կարևորում է դրանց համընդհանուր և դասակարգված կիրառումը, ինչը կնպաստի Քոլեջի գործունեության թափանցիկությանը:

Խնդրահարույց է այն փաստը, որ Քոլեջի սահմանած ներքին հաշվետվողականությունն ապահովող գրաֆիկական սխեման չի համապատասխանում Քոլեջի կառուցվածքային սխեմային, չկա միասնական, հստակ մոտեցում հաշվետվությունների կազմման վերաբերյալ, որպես հաշվետվությունների պարտադիր բաղկացուցիչ մաս՝ սահմանված չէ վերլուծական և քանակական տվյալների ներառումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՀՏՔ-ի

հաշվետվողականության համակարգը լավարկման, առավել վերլուծական դառնալու կարիք ունի, ինչը առկա փորձը տարածելի, իսկ խնդիրերը լուծելի կդարձնի։

Մտահոգիչ է այն փաստը, որ Քոլեջի հաշվետվությունները չեն ներկայացվում կոլեգիալ մարմիններում, ինչը հանգեցնում է ստորաբաժանումների պասիվ մասնակցության միմյանց գնահատման և վերահսկողության ապահովման գործընթացներում, ինչպես նաև դժվարեցնում է համատեղ աշխատանքների պլանավորումը։ Փորձագիտական խմբի համոզմամբ՝ Քոլեջի ներքին և արտաքին, վերևից ներքև և ներքևից վերև հաշվետվողական համակարգերի լավարկումը կհանգեցնի ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և պլանավորման գործընթացի բարելավմանը։

Դրական է համարվում այն, որ Քոլեջն ակտիվ գործունեություն է ծավալում ֆեյսբուքյան հարթակում. հրապարակումների միջոցով Քոլեջը տեղեկատվություն է փոխանցում իր ներքին աշխատանքների վերաբերյալ։ Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ հետադարձ կապի մեխանիզմներ հիմնականում չեն գործում, չկա միասնական, հստակ մոտեցում հատկապես արտաքին շահակիցների կարիքների բացահայտման ուղղությամբ։ Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ կայքէջի լիարժեք գործարկումը կնպաստի Քոլեջի գործընթացների վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների և ամբողջական փաստաթղթերի փաթեթի հասանելիության և թափանցիկության ապահովմանը, ինչպես նաև այն կարող է ծառայել շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման կայուն գործիք։

Չնայած նրան, որ ԵՊՀՏՔ-ում իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են ներքին շահակիցներին գիտելիքների և արժեքների փոխանցմանը, Փորձագիտական խումբն ընդգծում է միջոցառումների պարբերաբար չլինելը, ինչպես նաև դրանց փակ բնույթ ունենալը, ինչը հանգեցնում է արտաքին շահակիցների շրջանում արժեքների և գիտելիքների ձևավորման գործում Քոլեջի պասիվ դեր ունենալուն։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջում սահմանված ներքին հաշվետվողականության համակարգն ունի զգալի բովանդակային թերություններ, հասարակության առջև Քոլեջը հաշվետվողականություն չի ապահովում, հանրությանը ամբողջությամբ հասանելի չեն Քոլեջի ընթացակարգերը, ապահովված չէ գործընթացների թափանցիկությունը իրավական տեսանկյունից, հետադարձ կապի մեխանիզմները դեռևս սաղմնային փուլում են, հասարակության լայն շերտերին արժեքներ չեն փոխանցվում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՀՏՔ-ն չի բավարարում չափանիշ 8-ի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է անբավարար։

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Ինքնավերլուծության համաձայն՝ Քոլեջում դեռևս բացակայում են արտաքին կապերի խրախուսման և միջազգայնացման գործընթացները կանոնակարգող քաղաքականությունը և ընթացակարգերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սույն խնդիրները կանոնակարգող ընթացակարգեր իրապես չեն մշակվել: Միևնույն ժամանակ, Քոլեջն իր 2022-2027 թթ. ՌԾ-ում հասարակության հետ կապերի ձևավորումը և միջազգայնացման գործընթացի ընդլայնումը հայտարարել է զարգացման ռազմավարական նպատակ: Նշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները՝ ստեղծել երկարաժամկետ համագործակցային կապեր Քոլեջի արտաքին շահակիցների և հանրային կառույցների հետ, զարգացնել գործատու ոլորտի հետ համագործակցությունը՝ արտաքին շահակիցներին ներգրավելով կրթական գործընթացի բարելավման աշխատանքներին, ընդլայնել միջազգայնացմանն ուղղված գործընթացները՝ ապահովելու քոլեջի մասնակցությունը միջազգային համագործակցային և շարժունության ծրագրերին:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չնայած հայտարարված նպատակին, դրան հասնելու և նպատակից բխող խնդիրների լուծման համար ՌԾ-ում որոշված չեն հստակ ժամկետներ, նշանակված չեն գործողությունների կատարման պատասխանատուներ, սահմանված չեն գործընթացի վերահսկման և գնահատման ցուցիչներ:

Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ Քոլեջը ստեղծել է ազգային մակարդակում համագործակցության զարգացման նախադրյալներ՝ ձևավորելով որոշակի փորձ: Այսպես՝ պրակտիկաների և համատեղ հետազոտությունների իրականացման ոլորտում Քոլեջն ունի գործընկերական կապեր մի շարք բուհերի հետ, մասնավորապես, կնքված են համագործացության պայմանագիր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ և հուշագրեր ոլորտային համագործակցության մասին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի հետ:

Մասմագիտական կողմնորոշման և դիմորդների թվաքանակի ավելացման նպատակով Քոլեջն իրականացնում է այցեր դպրոցներ, կազմակերպում է բաց դռների օրեր, ընդ որում՝ այս միջոցառումները մշտապես ներառված են Քոլեջի միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման փաստաթղթերում՝ ամբիոնների ռազմավարական պլաններում և ուսումնակրթական գործունեության տարեկան պլաններում: Պլանավորված միջոցառումների իրականացման կատարողականները տեսանելի են կիսամյակային հաշվետվություններում:

Պրակտիկաների և արտալսարանային ոսուցման շրջանակում այցերի կազմակերպման ուղղությամբ Քոլեջը համագործակցում է ազգային գործատուների հետ, կնքել է 20 պայմանագիր իր ՄԿԾ-ներին համապատասխանող մասնագիտական ոլորտների ներկայացուցիչ հանդիսացող հաշվապահական կազմակերպությունների, բանկերի,

նորաձևության սրահների, կարի արտադրամասերի, զբոսաշրջային ընկերությունների և հյուրանոցների հետ:

Փարձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին շրջանում Քոլեջը որոշակի քայլեր է ձեռնարկել ՏԻՄ-երի հետ համագործակցության ուղղությամբ, մասնավորապես ՝ «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների պրակտիկաների կազմակերպման համար դիմել է Արաբկիրի և Քանաքեռ-Զեյթունի թաղապետարաններին՝ առաջինից ստանալով մերժում աշխատանքային բարձր ծանրաբեռնվածության պատճառաբանությամբ և երկրորդի հետ ձեռք բերելով նախնական պայմանավորվածություն:

Նոր համագործակցության նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունում պրակտիկա անցկացնելու վերաբերյալ: Քոլեջի և ընկերության միջև համագործակցության պայմանագիրը նախապատրաստման փուլում է:

ՄՈՒՀ-ը չունի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ապահովման համար պատասխանատու առանձին ենթակառուցվածքային ստորաբաժանում, ինչպես նաև չի ձևավորել միջազգային համագործակցության պայմանագրերի բազա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս գործընթացների ընթացիկ վերահսկողությունը դեռևս գտնվում է Քոլեջի տնօրենի անմիջական ղեկավարման ներքո՝ տնօրենի տեղակալների և կարիերայի ուղղորդման պատասխանատուի մասնակցությամբ: Նախատեսված է ընդլայնել Կարիերայի կենտրոնի և ուսումնական ստորաբաժանումների գործառույթները՝ ներգրավելով դրանք փոխանակման ծրագրերի զարգացման գործընթացներում: Այսպիսով, ներկա պահի դրությամբ միջազգային համագործակցությունը պլանավորվում է զարգացնել ապակենտրոնացված մակարդակում՝ ավելացնելով առանձին ստորաբաժանումների պատասխանատվությունը:

Ինքնավերլուծությունում նշված է, որ նախատեսվում է ընդլայնել Քոլեջի մասնակցությունը «Էրազմուս+» շարժունության դրամաշնորհային ծրագրին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի որոշ դասախոսներ տարբեր տարիների մասնակցել են «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում կազմակերպվող սեմինարներին և քննարկումներին: Ուսանողների և դասախոսների փոխանակման փորձը դեռևս բացակայում է:

Քոլեջում համագործակցության ուղղությամբ հետևողական աշխատանք իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը Կարիերայի կենտրոնն է, որը գործում է 2019 թ-ից և համապատասխան կանոնակարգով սահմանված գործառույթների շրջանակներում հաստատում և ամրապնդում է արտաքին շահակիցների հետ Քոլեջի կապերը, ներգրավում է գործատուներին, հասարակական կազմակերպություններին, աշխատանքում հաջողություններ գրանցած շրջանավարտներին Քոլեջի ուսանողների և շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման և շուկայում նրանց համար թափուր աշխատատեղեր բացահայտելու աշխատանքներում:

ՄՈՒՀ-ը շարունակական համագործակցության ծրագրեր է իրականացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հետ, որոնց

շրջանակներում Քոլեջի ՊԴ կազմը պարբերաբար վերապատրաստման դասընթացների է մասնակցում։

Կարևորելով ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովումը՝ որպես Քոլեջի գործունեության միջազգայնացման նախապայման, 2023թ. մարտի 3-ին Քոլեջում անցկացվել է էլեկտրոնային հարցում, որին մասնակցել է 34 դասախոս և վարչական կազմի աշխատակից։ Հարցման արդյունքների վերաբերյալ ԵՊՀՏՔ ներքին որակի պատասխանատուի հաշվետվությունից պարզ դարձավ, որ հարցվածների 23,5%-ն ունի անգլերենի գերազանց իմացություն, 47%-ը՝ միջին և լավ իմացություն, 29,4%-ն ընդհանրապես չի տիրապետում անգլերենին։ Ռուսաց լեզվի իմացության մակարդակը հետևյալն է. 41,2%-ը գերազանց է տիրապետում ռուսերենին, 52,9%-ն ունի իմացության լավ մակարդակ և 5,9%-ն ունի իմացության միջին մակարդակ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաշվի առնելով միջազգայնացման գործընթացներին ինտեգրվելու նպատակադրումը, Քոլեջի կրթական և կառավարման աշխատանքներում նախատեսվում է խրախուսել օտար լեզվի ընդլայնված կիրառումը, ինչպես նաև Քոլեջի գրադարանը համալրել ժամանակակից օտարալեզու գրականությամբ։ Գիտակցելով, որ միջազգայնացմանը խոչընդոտող հիմնական գործոններից մեկը աշխատակազմի՝ օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակն է, նախատեսվում է ՊԴ և վարչական անձնակազմի համար կազմակերպել օտար լեզուների դասընթացներ՝ հնգամյա պարտադիր վերապատրաստման ծրագրի շրջանակներում։ Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ օտար լեզուների դասընթացները կազմակերպվելու են Քոլեջում և լինելու են անվճար։

Ուսանողներն օտար լեզուներ են ուսումնասիրում համապատասխան մոդուլների շրջանակներում։ Դիտարկվող ՄԿԾ-ների ուսումնական պլաններից երևում է, որ դիտարկվող երեք մասնագիտությունների հանրակրթական առարկայախմբերում ընդգրկված են անգլերենը և ռուսաց լեզուն, որոնք դասավանդվում են 1-ին կուրսում՝ 120 ակադեմիական ժամ ընդհանուր բեռնվածությամբ՝ «ԶԲՕԼ» և «Հագուստի մոդելավորում և նախագծում» ծրագրերում, և 110 ժամ բեռնվածությամբ «ֆինանսներ» ծրագրում։

«ԶԲՕԼ» մասնագիտության ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական առարկայախմբում կրկին ընդգրկված են Անգլերենը և Ռուսաց լեզուն, որոնք դասավանդվում են 2-րդ կուրսում՝ յուրաքանչյուրը 72 ժամ ընդհանուր բեռնվածությամբ։ Այնուհետև «ԶԲՕԼ»-ի ընդհանուր մասնագիտական առարկայախմբում ընդգրկված են օտար լեզուների ուսուցման հետ կապված հետևյալ մոդուլները.

- 2-րդ կուրսում՝ 150 ժամ ծավալով «Մասնագիտական հաղորդակցում ռուսաց լեզվով»,
- 3-րդ կուրսում՝ 150 ժամ ծավալով «Մասնագիտական հաղորդակցում անգլերեն լեզվով»,
- 4-րդ կուրսում՝ 150 ժամ ծավալով «Մասնագիտական հաղորդակցում ֆրանսերենով», 72 ժամ՝ «Սպասարկման ծառայությունների կազմակերպում օտար լեզվով»; 72 ժամ՝ «Սպասարկման ոլորտի մասնագիտական նյութի եռալեզվյան գործնական թարգմանություն»։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆրանսերենի ուսուցման կարճ ժամանակահատվածում ուսանողները չեն հասցնում մասնագիտական հաղորդակցման համար բավարար լեզվական հմտություններ ձեռք բերել, քանի որ, ի տարբերություն անգլերենի և ռուսաց լեզվի, ֆրանսերենից ապահովված

չէ լեզվի իմացության բազային մակարդակը: Այս առումով առավել նպաստավոր վիճակում են հայտնվում ֆրանսերենի դպրոցական իմացությամբ ուսանողները, որոնց թիվը փոքր է:

«Ֆինանսներ» մասնագիտության 2-րդ կուրսում ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական առարկայախմբում նույնպես ընդգրկված են Անգլերենը և Ռուսաց լեզուն՝ յուրաքանչյուրը 72 ժամ բեռնվածությամբ: 3-րդ կուրսում անցնում են Մասնագիտական անգլերեն՝ 72 ժամ ծավալով:

«Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության 2-րդ կուրսում ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկայախմբում նույնպես կան Անգլերենը և Ռուսաց լեզուն՝ յուրաքանչյուրը 72 ժամ ծավալով: Սրանով օտար լեզուների ուսուցումը տվյալ ՄԿԾ-ի շրջանակներում ավարտվում է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի Ռազմավարական ծրագրում հասարակության հետ կապերի ձևավորումը և միջազգայնացման գործընթացի ընդլայնումը հայտարարված է հաստատության զարգացման ռազմավարական նպատակ, որին հասնելու համար դրված են մի շարք իրատեսական խնդիրներ: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ Քոլեջը մշակի փորձի փոխանակման և միջազգային համագործակցության զարգացման հստակ տեսլական, որի առ այսօր բացակայությունը թույլ չի տվել ստեղծել հաստատության միջազգայնացումն ապահովելու հիմքեր և գտնել միջազգային գործընկերներ: Այս հանգամանքը կարող է խանգարել ՄՈՒՀ-ի ուսումնակրթական գործունեության միջազգային զարգացմանը, ակտիվ կապերի հաստատմանն ու ՊԴ անձնակազմի և ուսանողների շարժունության ապահովմանը:

Շարժունությանը, միջազգայնացման զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններից է օտար լեզուների իմացության ցածր մակարդակը: Ուսանողների համար այս խոչընդոտի հաղթահարման պայմանները հիմնականում ապահովված են մասնագիտական կրթական ծրագրերում օտար լեզուների քիչ թե շատ բավարար ժամաքանակի ընդգրկման շնորհիվ:

Թեև դասախոսական կազմի մոտ դեռևս բավարար մակարդակի վրա չէ լեզուների իմացությունը, այնուամենայնիվ գովելի է, որ ՄՈՒՀ-ը նախատեսել է հաջորդ ուսումնական տարում լրացնել այս բացն անգլերենի անվճար դասընթացների կազմակերպման միջոցով:

Փորձագիտական խումբը խրախուսելի է համարում այն փաստը, որ ազգային մակարդակում ՄՈՒՀ-ը ստեղծել է արդյունավետ համագործակցության նախադրյալներ և ներկա պահի դրությամբ կուտակել է ոլորտային գործատուների, բուհերի, պետական հաստատությունների հետ գործնական կապերի հաստատման բավականին հաջողված փորձ: Գովելի է, որ այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և ձեռք են բերվում համագործակցության նոր պայմանավորվածություններ ՏԻՄ-երի և արդյունաբերական ընկերությունների հետ, ինչը կնպաստի համապատասխան մասնագիտությունների պրակտիկաների կազմակերպման արդյունավետության բարձրացմանն ու ուսանողների մոտ աշխատաշուկայի կողմից առավել պահանջված կարողությունների ձևավորմանը: Գովելի է նաև, որ դիմորդների հավաքագրմանն ուղղված թիրախային գործունեության արդյունքում վերջին տարիների ընթացքում արձանագրվել է Քոլեջի ուսանողների կայուն աճ:

Եզրահանգում: Թեև ԵՊՀՏՔ-ում դեռևս մշակված չէ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործընթացները կանոնակարգող քաղաքականություն և հստակեցված չեն համապատասխան ընթացակարգերը, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ այս ուղղությամբ Քոլեջի կողմից բավականաչափ նախապատրաստական աշխատանք է տարվում, նաև այն, որ վերջին մի քանի տարիների ընթացքում ՄՈՒՀ-ն ակտիվորեն զարգացնում է տեղական մակարդակում իր համագործակցությունը ոլորտային հեղինակավոր ընկերությունների, պետական հաստատությունների և բուհերի հետ, կարևորելով իր գործունեության միջզագայնացման խնդիրը՝ հոգում է ներքին շահակիցների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման մասին, փորձագիտական խումբը գտնում է, որ որոշ վերապահումներով ԵՊՀՏՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Որակի ապահովման գործընթացները ամրագրված են Քոլեջի ՌԾ-ի 5-րդ նպատակում (որակի կառավարման համակարգի զարգացում), որի իրագործման համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝ ներդնել և կատարելագործել որակի ապահովման համակարգը, ամրապնդել որակի մշակույթը, ներքին և արտաքին շահակիցներին ներգրավել որակի ապահովման գործընթացներում՝ ապահովելով որակի մասին թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, վերանայել ՈԱ համակարգը՝ հիմնվելով ներքին և արտաքին գնահատման արդյունքների հիման վրա:

Քոլեջն ունի Որակի ներքին ապահովման կանոնակարգ, որը հաստատվել է 2022թ.: Համաձայն կանոնակարգի՝ Որակի ներքին ապահովման կենտրոն է ստեղծվել: Կենտրոնի նպատակն է կատարել ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների գնահատում, ապահովել դրանց որակի վերահսկում, հաշվետվողականություն և թափանցիկություն, նպաստել շարունակական բարելավմանն ու զարգացմանը:

2023 թ. ապրիլին հաստատվել են հետևյալ կանոնակարգերը՝ «ՈՒսանողների կրթական կարիքների վերհանման կանոնակարգ», որի նպատակն է կազմակերպել առաջարկների և բողոքների քննարկմանը և կրթական պրոցեսի բարելավմանն ուղղված միջոցառումներ, «Հարցումների կանոնակարգ», որի նպատակն է տեղեկատվության հավաքագրման և մշակման միջոցով բարելավել ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման գործընթացի իրականացման ձևերի, չափանիշների,

մեթոդների, գնահատման օբյեկտիվությունը, ինչպես նաև հաստատվել է «Որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականություն», որի նպատակն է իրականացնել կրթական ծրագրերի գործունեության, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման երաշխիքի ապահովումը:

Համաձայն որակի ներքին ապահովման կենտրոնի՝ այն բաղկացած է ղեկավարից, աշխատանքային և ուսանողական խմբերից, անհրաժեշտության դեպքում նաև ժամանակավոր խմբերից: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՆԱԿ-ի անդամները հստակ գործառույթներ չունեն և ՈՆԱԿ-ը գործունեություն գրեթե չի ծավալել:

Քոլեջի տրամադրած 2021, 2022, 2023 թթ. հաստիքացուցակներից պարզ է, որ 2021 թ.-ից Քոլեջն ունեցել է Կրթության որակի պատասխանատուի հաստիք՝ 0.5 դրույք ծանրաբեռնվածությամբ, այնուհետև 2022 և 2023 թթ.՝ 1 դրույք ծանրաբեռնվածությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ ընթացքում հաճախակի փոփոխվել է Կրթության որակի պատասխանատուի հաստիքը զբաղեցնող աշխատակիցը: Փորձագիտական այցի ժամանակ Կրթության որակի պատասխանատուի հաստիքը կրկին թափուր էր: Աշխատակիցը, ով զբաղեցնում էր այդ հաստիքը, իր դիմումի համաձայն ազատվել էր աշխատանքից և գործառույթները իրականացնում էր մեկ այլ աշխատակից:

2022-2023 ուստարվա համար առկա էր Կրթության որակի պատասխանատուի աշխատանքային պլան, սակայն աշխատանքային պլանը գրեթե չէր բխում ՌԾ-ից և Որակի ներքին ապահովման կանոնակարգից: Առկա էր նաև 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հաշվետվություն, որն էականորեն չէր տարբերվում աշխատանքային պլանի ձևաչափից և բովանդակությունից:

Քոլեջը նշում է, որ Որակի ապահովման համակարգի որոշակի գործունեություն մասամբ իրականացվել է 2022-2023 ուստարում: Նախկին տարիներին աշխատանքներ գրեթե չեն իրականացվել Որակի ապահովման համակարգի գործունեության վերաբերյալ ոչ լիարժեք իրազեկվածության պատճառով: Դեռևս հստակ չէ Քոլեջի տեսլականը որակի ապահովման աշխատանքների զարգացման ուղղությամբ: Քոլեջը նշում է, որ Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, Քոլեջի ուսանող-փորձագետները, ինչպես նաև փորձագիտական խմբի քառօրյա այցն անուղղակի կերպով նպաստել են անձնակազմի վերապատրաստմանը՝ Որակի մշակույթն ըմբռնելու և այսուհետև ՊԻԳԲ շրջափուլը կիրարկելու ուղղությամբ:

Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով հատուկ ֆինանսական ռեսուրսների պլանավորման տարեկան նախահաշվում ՈՆԱ գործընթացների կառավարման համար բյուջետային հատկացումներ առանձնացված չեն: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ Կրթության որակի պատասխանատուի համար առկա է աշխատասենյակ՝ համապատասխան անհրաժեշտ ռեսուրսներով:

ՈՆԱ գործընթացներում ներքին շահակիցներից առաջնահերթ ներգրավվածություն ունեն ուսանողները, որոնք 2022-2023 ուստարում մասնակցություն են ունեցել Քոլեջում անցկացված որոշ հարցումների, որոնք հիմնականում եղել են առցանց, ինչպես նաև որոշ ուսանողներ ընդրգրկված են ուսանողների կրթական կարիքների վերհանման հանձնախմբում,

որը ձևավորվել է 2023 թ. ապրիլին: Ուսանողների շրջանում իրականացված հարցումները միտված են եղել գնահատել ուսանողների բավարարվածության աստիճանը Քոլեջի մատուցած կրթական ծրագրերից, դասախոսների դասավանդման որակից, ինչպես նաև առկա ռեսուրսներից: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումների գործընթացը Քոլեջի կողմից կանոնակարգված չէ: 2023 թ. ապրիլին դասախոսներն ու վարչական աշխատակազմը մասնակցել են կրթական միջավայրի բավարարվածության վերաբերյալ էլեկտրոնային հարցմանը: Հարցման վերլուծության արդյունքում վերհանված խնդիրներն են՝ անգլերեն լեզվի իմացության ցածր մակարդակ, ՏՀՏ հմտությունների միջին և ցածր մակարդակ: Առկա էին անցկացված բոլոր հարցումների ընդհանուր վերլուծության արդյունքներ, սակայն վերլուծությունների ամփոփում–բարելավումների պլան մշակված չէր: Հարցումների արդյունքում առկա բարելավումները հիմնականում եղել են ռեսուրսներին վերաբերող: Հարցումների արդյունքում մատնանշված ռեսուրսների բարելավման գերակշիռ խնդիրներն արդեն իսկ Քոլեջի 2022-2027 ՌԾ-ում ամրագրված են եղել, ինչպես նաև պլանավորված գործողությունների պլանում: ՈՆԱ գործընթացներում հիմնական գործիք հանդիսացել են միայն հարցումները:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին շահակիցներն ընդգրկված են ԿԿԽ-ում, ինչպես նաև մասնակցում են պետական ամփոփիչ ատեստավորումներին: Որպես արտաքին շահակից՝ իրենց մասնակցությունն ունեն գործատուները, որոնց կազմակերպություններում անցկացվում են Քոլեջի պրակտիկաները: Ինքնավերլուծության մեջ Քոլեջն, այնուամենայնիվ, նշում է, որ թույլ է զարգացած արտաքին շահակիցների հետ կապը: 2022-2023 ուստարում արտաքին շահակիցների, մասնավորապես՝ գործատուների, հետ նկատվում է Քոլեջ-գործատու կապի որոշակի ակտիվություն: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ գործատուները վերջերս հանդես են գալիս իրենց առաջարկություններով, ինչը հետագայում կնպաստի ՄԿԾ-ների վերանայմանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցմանը: Քոլեջի որակի ներքին ապահովման համակարգը գտնվում է ներդրման փուլում, դեռևս համակարգի արդյունավետության գնահատման, հետևաբար համակարգի վերանայումներ տեղի չեն ունեցել:

Որակի ապահովման մշակույթի թույլ կողմերից է զարգացումն ու կատարելագործումը, ինչը նշում է նաև Քոլեջը: Պլանավորվում է կատարել որակի ապահովման գործընթացների բենչմարքինգ:

Քոլեջը չունի տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծման հստակ մեխանիզմներ: Որակի ապահովման համակարգն իր գործունեությամբ դեռ չի ստեղծել անհրաժեշտ և տեղեկատվական հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց. Քոլեջի կայքէջը դեռևս չունի Որակի ապահովման բաժին, ինչպես նաև փաստաթղթային հենք տեղադրված չէ:

Քոլեջը նշում է, որ իր գործունեության թափանցիկությունն ապահովելու գործուն համակարգի ձևավորումը օրակարգային խնդիր է:

Դատողություններ: Փորձագիտական խմբի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ թեև Քոլեջը մշակել է ՈՆԱ գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, այնուհանդերձ Քոլեջի կողմից սահմանված ՈՆԱ գործընթացների իրականացման, բարելավման և որակի մշակույթի ձևավորման համար շարունակական քայլերը սահմանափակվել են հիմնականում պլանավորմամբ՝ առանց կատարողականների և դրանց վերաբերյալ վերլուծությունների ամփոփումների: Քոլեջի որոշ գործընթացներում ներգրավված են ներքին շահակիցներ՝ մասնավորապես, ուսանողներ, դասախոսներ, սակայն անհանգստացնող է, որ արտաքին շահակիցների հետ կապը թույլ է զարգացած, ինչպես նաև արտաքին շահակիցները դեռևս չեն մասնակցում որակի ապահովման գործընթացներին: Արտաքին ու ներքին շահակիցների դերի հստակեցումը որակի ապահովման գործընթացներում կնպաստի որակի մշակույթի ստեղծմանն ու զարգացմանը: Կարևոր է նաև, որ Քոլեջը ուշադրություն դարձնի ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք իրականացմանը, որը կնպաստի Քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը:

Դրական է, որ Քոլեջն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման հանձնախումբ, սակայն հանձնախմբի ձևավորման կարճ ժամանակահատվածը թույլ չի տալիս գնահատել հանձնախմբի գործունեության արդյունավետությունը: Թեև ՈՆԱ կառույցում առկա են կես տարվա կտրվածքով հարցումների ընդհանուր վերլուծության արդյունքներ, սակայն վերլուծությունների արդյունքում մշակված բարելավումների պլանը բացակայում է, որն էլ չի ապահովում ՊԻԳԲ շրջափուլը: Համաձայն փաստաթղթերի՝ ՈՆԱ գործընթացները մեկնարկել են 2021 թ-ից, սակայն մտահոգիչ է, որ մինչ 2023 թ-ը կառույցը գրեթե գործունեություն չի ծավալել: Մտահոգիչ է նաև, որ կրթության որակի պատասխանատուի հաստիքը զբաղեցնող աշխատակիցը հաճախակի փոխվել է և անհանգստացնող, որ Քոլեջում կրկին թափուր է Կրթության որակի պատասխանատուի հաստիքը, ինչն էլ կարող է վտանգել ՈՆԱ կառույցի կայուն ներդրման և շարունակական զարգացման գործընթացը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը գտնվում է որակի համակարգի ներդրման դեռևս մեկնարկային փուլում՝ կիրառելով որոշ հարցումներ, որոնք հիմնականում հանգեցնում են ռեսուրսային բարելավումների: Սակայն, դիտարկելով Քոլեջի ՌԾ-ով սահմանված նպատակադրումը՝ որակի կառավարման համակարգի զարգացումը, և դրանից բխող խնդիրները, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը դեռևս չի կարողացել գործարկել Որակի ապահովման համակարգը և քայլեր ձեռնարկել իր իսկ առաջադրած նպատակի և դրանից բխող խնդիրների հաղթահարման պլանավորվող ուղիները հստակ սահմանելու հարցում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊՏՀՔ-ում որակի ապահովման համակարգը կայացած չէ, ՈՆԱ գործընթացները պարբերական բնույթ չեն ունեցել, առկա չէ օբյեկտիվ տվյալների հավաքագրման գործիքակազմ, Քոլեջի գործունեության հիմքում դրված չէ որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը, ներքին և արտաքին շահակիցները ամբողջությամբ ներգրավված չեն ՈԱ գործընթացներում, որակի ապահովման համակարգը դեռևս չի նպաստում գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի

ձևավորմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՏՀՔ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է անբավարար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Ամսաթիվ՝ 02.10.20232թ.

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Անդրանիկ Առաքելյան՝ 2014 թ-ին ավարտել է Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ) ասպիրանտուրան «Ջերմաէներգետիկա» մասնագիտությամբ: Տեխնիկական գիտությունների թեկնածու է (2014 թ.): 2020 թ-ին ստացել է դոցենտի կոչում: 2009 թ. առ այսօր աշխատում է ՀՊՃՀ-ում, ներկայիս Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում (ՀԱՊՀ): ՀԱՊՀ էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի Ջերմաէներգետիկայի և շրջակա միջավայրի պաշտպանության ամբիոնի դոցենտ է: 12 գիտական հոդվածների, 3 ուսումնական ձեռնարկների հեղինակ է:

Արմինե Մատենցյան՝ 1997 թվականին ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը: 2006 թվականին ավարտել է ԵԿՏԱ մագիստրատուրան՝ սոցիալ-մշակութային ծառայության և զբոսաշրջության մագիստրոսի որակավորմամբ: 2008 թվականի մարտ-հոկտեմբեր ամիսներին մասնակցել է Մարքեթինգի հայկական ասոցիացիայի և Ավստրիայի Տնտեսական պալատի Տնտեսության զարգացման աջակցման ինստիտուտի (WIFI) որակավորման դասընթացներին և անցել է ստաժավորում Վիեննայում (որակավորման ոլորտները՝ ռազմավարական պլանավորում, մարքեթինգ, լոգիստիկա): 1999-2003 թթ. դասախոսել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության ամբիոնում: 1998-2005 թթ. դասախոսել է Երևանի Ա.Բաբաջանյանի անվ. երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության բաժնում: 2006 թվականից առ այսօր աշխատում է Հայաստանի Եվրոպական համալսարանում որպես Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնի դասախոս: 14 հոդվածների հեղինակ է:

Մարինե Գալուբյան՝ 2004-2008թթ սովորել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ մաքսային գործ կրթական ծրագրով: 2010թ-ին ավարտել է Գիտությունների ազգային ակադեմիայի ֆինանսներ մագիստրոսական ծրագիրը: Աշխատում է Սանարե-ֆարմ ՍՊԸ-ում՝ որպես հաշվապահ: 2021թ-ից Արտաշատի №3 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ է, 2020-2022թթ. զբաղեցրել է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Կրթության որակի պատասխանատուի հաստիքը: 2013-2020թթ-ին աշխատել է նույն քոլեջում՝ որպես Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս:

Արթուր Դավթյան՝ 2020թ.-ից մինչ օրս սովորում է Երևանի պետական համալսարանի «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մասնագիտության կրթական ծրագրում: 2020 թվականին ավարտել է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջը՝ ստանալով հաշվապահի որակավորում: 2023թ.-ին ընդգրկվել է Եվրոպական ուսանողական միության ուսանող-փորձագետների բազայում: 2018թ.-ին մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ց Ի Ց

Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

03.07.2023թ.-06.07.2023թ.

	03.07.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	12:20	13:10	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	14:30	15:30	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ	15:40	16:30	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:40	17:40	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակհանդիպում	17 :50	19:00	70 րոպե

	04.07.2023թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Հանդիպում Զբոսաշրջային ծառ. կազմակերպում՝ օտար լեզվի խոցված իմացությամբ » կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Ֆինանսեր» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների	10:00	11:20	80 րոպե
2.	Հանդիպում « Զբոսաշրջային ծառ. կազմակերպում՝ օտար լեզվի խոցված	Հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Ֆինանսեր» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	11:30	12:30	60րոպե

	իմացությամբ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	(10-12 հոգի)				
3.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			12:40	13:20	60րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն			15:50	16:30	40րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:40	18:00	80 րոպե

	06.07.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների, ներառյալ Հանրակրթ.ծրագր. բաժնի ղեկավարի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	11:10	12:10	60րոպե
3.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	12:20	13:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5.	Ռեսուրսների դիտարկում	14:40	15:40	60 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ղեկավարների հետ (կարերայի կենտրոնի ուղղորդման պատ., պրակտիկայի բաժնի ղեկավար, գրադարանավար, հաշվապահ, կադրերի բաժնի տեսուչ, իրավախորհրդատու, տնտեսվար, պահեստապետ, լաբորանտ)	15:50	16:50	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:00	60 րոպե

	07.07.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	նողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	0:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	1:10	12:00	50 րոպե
3.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	2:10	13:00	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում, փաստաթղթերի ուսումնասիրություն	14:20	17:30	190 րոպե
6.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ կատարողական՝ ըստ տարիների: Կամ՝ նախորդ ռազմավարական շրջափուլի արդյունքները:	1
2.	ՌԾ-ի պլան ժամանակացույցներ /և՛ նախորդ ՌԾ-ի, և՛ նոր ՌԾ-ի/:	1
3.	ՌԾ-ի պլան ժամանակացույցներ /և՛ նախորդ ՌԾ-ի, և՛ նոր ՌԾ-ի/ Հարցումների, ֆոկուս-խմբերի քննարկումների վերլուծություններ, որոնցից դուրս են բերվել ներքին շահակիցների կարիքները:	1
4.	Կարիքների վերհանման բոլոր գործիքների կիրառման արդյունքում վերհանված կարիքները վերջին 5 տարիներին:	1
5.	2022-2027թթ. ՌԾ-ի մշակման աշխատանքներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը հավաստող տեղեկատվություն:	1
6.	Աշխատանքային պլաններ, դրանց և՛տարեկան, և՛ կիսամյակային հաշվետվությունները:	1
7.	Ներքին գնահատման ամփոփումներ, 2019-2020, 2020-2021 ուստարիների ներքին գնահատումներ:	1
8.	2020, 2021, 2022թ, 2023թ. կնքված և ստորագրված ԿԽ աշխատակարգեր:	2
9.	Նախորդ ՌԾ-ի գնահատում:	2
10.	Եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվ վերջին 3 տարիների կտրվածքով:	2
11.	Կազմակերպական կառուցվածք: Նախորդը:	2
12.	ԿԽ արձանագրություններ:	2
13.	Տրամադրել վերջին 3 տարիների ֆինանսատնտեսակն գործունեության նախահաշիվները:	2
14.	Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների եւ ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:	2
15.	Տրամադրել արձանագրություններ ՈԱԿ-ի կողմից կատարված հանդիպումների արդյունների մասին:	2
16.	2019-2020, 2020-2021, 2020-2023 ուստարիների քոլեջի գործողությունների համալիր պլան:	2
17.	2019-2020, 2020-2021, 2021-2022 քոլեջի գործողությունների համալիր պլանների կատարողականներ, հաշվետվություններ:	2

18.	Ստորաբաժանումների գործողությունների իրականացման արդյունքները 2018-2023 թթ. կտրվածքով:	2
19.	Տրամադրել վերջին 3 տարիների ընթացքում մանխորհի նիստերի արձանագրությունները:	2
20.	Շրջանավարտների շրջանում հարցման արդյունքները: Վերլուծություններ:	2
21.	ՈՒսանողների հետազոտական հետաքրքրությունների շրջանակն արտահայտող տեղեկատվություն ըստ 3 ՄԿԾ-ների:	6
22.	Հետազոտական առաջադրանքների փաթեթներ ըստ 3 ՄԿԾ-ների:	6
23.	Հետազոտական բաղադրիչ պարունակող միջոցառումների պլանավորումներ, արդյունքներ՝ եթե կան:	6
24.	Ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, դիպլոմային աշխատանենքեր: Թեմաներ, եթե առկա են:	6
25.	Ֆինանսներ, և Հագոիստի մոդելավորում և ԶԲՕԼ ՄԿԾ կուրսային աշխատանքների թեմատիկա վերջին 3 տարիների կտրվածքով: Անհատական կամ մասնագիտական ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների, առաջադրանքների թեմատիկա 3 ՄԿԾ-ների գծով, վերջին 3 տարիների կտրվածքով:	6
26.	Կուրսային և ռեֆերատներ գրելու ուղեցույցեր:	6
27.	Նոր ՄԿԾ-ների ներդրման փաթեթներ, եթե առկա են:	3
28.	Ամբիոնային մասնագիտական քաննարկումների ամփոփումներ:	3
29.	Դասալսումների արդյունքում իրականացված բարելավումների փաթեթներ:	3
30.	Դասալսումների գնահատման տարբեր օրինակներ 3 ՄԿԾ-ների գծով:	5
31.	Իրենց սեփական նախաձեռնությամբ վերապատրաստումներին մասնակցած դասախոսների ցանկ՝ ըստ մասնագիտությունների:	5
32.	2021,2022,2023 թթ, նախահաշիվներ և ֆինանսական հաշվետվություններ:	5
33.	Տարիֆիկացիա	5

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Քոլեջի ուսումնական մասնաշենք, հարակից տարածք

2. Լսարաններ

3. Կարի արհեստանոցներ

4. Համակարգչային լսարաններ

5. Քիմիայի, Ֆիզիկայի լաբորատոր նյութեր, գույք

6. Հանդիսությունների դահլիճ /Չգործող/

7. Մարզադահլիճ /Վերանորոգման փուլում է/

8. Բուժկետ /Վերանորոգման փուլում է/

9. Նկուղ-ապաստարան

10. Գրադարան

11. Արխիվ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԵՊՀՏՔ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ
2. ՊՈԱԿ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
3. ՀՀ ԿԳՄՄՆ Հայաստանի հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4. ՈԱԱԿ Որակի ապահովման ազգային կենտրոն
5. ՈԱՇ Որակավորումների ազգային շրջանակ
6. ՊԿՉ Պետական կրթական չափորոշիչ
7. ՄԿՈՒԶԱԿ Մասնագիտական կրթության զարգացման ազգային կենտրոն
8. ԻՎ Ինքնավերլուծություն
9. ՄԿԾ Մասնագիտական կրթական ծրագիր
10. ՌԾ Ռազմավարական ծրագիր
11. ԶԾ Զարգացման ծրագիր
12. ՄՈՒՀ Մասնագիտական ուսումնական հաստատություն
13. ՈՆԱԿ Որակի ներքին ապահովման կենտրոն
14. ԳԱՑ Գնահատման առանցքային ցուցանիշներ
15. ԿԽ Կառավարման խորհուրդ
16. ՈՒԽ Ուսանողական խորհուրդ
17. ՄԽ Մանկավարժական խորհուրդ
18. ՏԽ տնօրինական խորհուրդ
19. ՊԴԿ Պրոֆեսորադասախոսական կազմ
20. ՈՒԱ Ուսումնական արդյունք